Աստվածածին

Հա՜յ իմ ծաղիկ ճշեճի,
դեղնեցար ու դարձար նուշ...

Նուշակ

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

Գարունը բացվում է, իսկ ես գրում եմ իմ պատանեկության մասին։

Զյունհալն է մանկությունը, ապա ձնծաղիկն ու մանուշակը, իսկ պատանեկությունը վարարած գարունն է, վարարած կանաչները, վարարած ծաղիկներն ու վարարած արևը։

Եթե մանկությունը շոյում է, ապա ծափ է տալիս պատանեկությունը, եթե մանկությունը ժպտում է, ծիծաղում է պատանեկությունը, մանկությունը կապույտ է, իսկ պատանեկությունը կապույտն է ո՞ւ ոսկին, կապույտ ու ոսկի...

Իմ ծափ և ծիծաղ, իմ կապույտ և ոսկի պատանեկություն. հիմա նա պայծառ է և հմայիչ, և այն, ինչ որ եղել է նրա մեջ դառնություն, արցունք և սև, լողում է իմ հուշերի արծաթ ու հատակ ջրերում...

Արծաթ և հատակ ջրերում սուզվեց իմ մանկության ոսկե մակույկը, և ես դուրս եկա պատանեկության ափը։

Դև, վերջ տանք այս զեղումներին, ես դուրս եկա Վանից և բռնեցի Կովկասի ճանապարհը։

1. ՀՐԱԺԵՇՏ ՎԱՆԻՆ

Զգվում է լայն ճանապարհը, լայն ճանապարհի վրայով շարժվում է մարդկային մի անծայրածիր քարավան։

Դեպի Կովկաս։

Տատս բռնեց իմ ձեռքից և ասաց.

— Պան չկա։ Իմ Գուրիսին տանեմ, աշխարհ տիսնա։

Ձիու վրա մորեղբայրս կապել էր ուտելիք և մի սև յափընջի, տատս վերցրել էր մի ջրի փարչ, մայրս՝ Սուրենին և Խորենին, իսկ ես իմ դասագիրքը՝ «Մեղրագետ»-ը, ապա հորս ատրճանակը, որի համար ճարել էի մի փամփուշտ։

Տատս կանչեց.

— Անուշ, վիրի օդի դուռ փակի՞ր...

Մորեղբայրս՝

— Ի՞նչ դուռ փակել, ինչ պան, խո՞ւր ի կերթանք...

Տատս ուշադրություն չդարձրեց.

— Փակի, պալնիս խան...

Մայրս իջավ սանդուղքներից և սենյակի բանալին հանձնեց տատիս։ Այդ րոպեին ես հանկարծ հիշեցի, որ աշխարհագրության գիրքը ավելի անհրաժեշտ է և պետքական, ինչ որ մոռացել էի վերցնել Սև դիմեցի տատիս.

— Մայրիկ, պալնիս տուր։

— Ի՞նչ կանես։

— Աշխարհագրության գիրք մոռցա...

— Չուզե՛, չուզե՛,— ասաց տատս։

— Չէ, պիտի առնեմ,— համառեցի ես։

Այդ րոպեին ես հանդիպեցի քեռուս կատաղությամբ լեցված աչքերին։ Նա թողեց ձին, մեծաքայլ մոտեցավ և, առաջին անգամ լինելով, մի ապտակ հասցրեց երեսիս, որից ականջս դժժաց։

— Դաշնակցական նոր սերունդ, ի՞նչ կը զարկես,— լացախառն ճչացի ես, ապավինեցի տատիս, միաժամանակ հիշելով արմենական Սեպուհին, պարոն Մկրտչին, Ղևոնդ էֆենդուն, ապա հնչակյան Արրահամ Բրուտյանին, Սոլախյանին, Դանթոյենց Կարապետին և որոշեցի, որ արմենականներն ու հնչակներն ավելի ուժով են, քան...

Իմ բացականչությունը պետք էր որ զվարճալի լիներ, որովհետև քեռիս, հակառակ իր բարկության, ղուսպ ժպտաց։

Թաղը դատարկվում էր։

— Շո՛ւտ արեք, ո՛ւշ ի...

Շրա՞խկ,— փակվեց մեր տան փողոցի դուռը, մեզ համար այլևս չբացվելու համար։

Այդ րոպեին բակից զիլ ու երկար կանչեց մեր աքաղաղը։

Ես երբեք, երբեք չեմ մոռանա նրա ձայնը, որովհետև ոչ մի աքաղաղ նրա նման չի կանչել։

— Ջա՜ն, մեռնեմ էդ ձենիդ,— մրմնջաց տատս, և նրա խոսքերը միայն ես լսեցի։ Ես նայեցի տատիս։ Նա նայո՛ւմ էր դեպի կապույտ երկինքը, և նրա շրթունքները դողում էին։

Երևի աղոթում էր նա։

Չգիտեմ ինչու՝ հիշեցի վանքը, աստվածամոր խունացած պատկերը.— վանքը դատարկ է հիմա, բայց առուն հոսելիս կլինի, իսկ վանքի այգում ծաղկել են զամբեխները, ու խաղալիս կլինեն թիթեռնիկները։

— Վարագա սիրուն սուրբ Նշան, ճամփեն պարի անես...

— Փյուռիկու սուրբ Գևորք...— արձագանքեց մայրս և հայտնի չէ, թե ինչ բարեմաղթեց։

— Մե՛ք ոռնա, ուշ է,— նորից գոռաց մորեղբայրս։ Ես նրան այնպես բարկացած չէի տեսել։

Մեր հանդիսավոր թափորը շարժվեց։

— Գուրիսին տանեմ աշխարհ տիանա,— անհոգ կրկնեց տատս։

Փողոցի ծայրից ես մի անգամ էլ ետ նայեցի։ Հեռվից երևում էր մայրիկանց տան տափակ կտուրը, ապա կտուրից-կտուր դրված փայտե սանդուղքի երկու աստիճանները։

Տատս սկսեց երգել, իսկ Այգնատանը ողողվեց շառաչուն վերջալույսով։

2. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Գնում ենք անքուն և անդադար։ Գաղթ է։ Պետք է շտապել, որովհետև ամեն րոպե թշնամին կարող է կտրել ճանապարհը։

Ճանապարհին մի անտեր կով բռնեցինք. քեռիս յափնջին գցեց նրա վրա և Սուրենին նստեցրեց կովի վրա։

Խորենը չէր հոգնել, ոչ միայն չէր հոգնել, այլև քայլում էր առույգ քայլերով, կարծես այգի գնալիս լիներ։

Քսան քայլ շառած, կովը, անսովոր իր նոր դերին, խրտնեց, Սուրենին վար նետեց ու յափնջին առած՝ փախավ։

Բարձրացավ ընդհանուր դժգոհություն։

Այնժամ քնոտ ասաց.

— Էսպես ճամբախ էրթալ չէլնե։ Ամեն մարդ ուր խամար։ Ամեն մարդ ուր գլխի ճար թող տիսնա։ Ապրելու, մեռնելու խնդիրն է դրուկ մեջտեղ, ջանըմ...

Ասաց ու գնաց, անհետացավ ամբոխի մեջ, բռնավորված ձին հետևից քաշելով։

Մայրս նոր նայեց, ձեռքը խփեց ծնկին.

— Ադրինին մոռցեր ենք...

Երևաց Ադրինը։

Նա դալիս էր որպես ֆուրիա, մազերը գդգզված, ինչ-որ բան ուտելով։

— Ադրի՛ն,— կանչեց տատս։

Ճանաչեց մեզ, թե չէ, չգիտեմ, բայց նա նայեց սպառնական աչքերով, ձեռքը թափ տվեց, «ղը՞-ղը՞» արավ, կռացավ, մի բուռ հող վերցրեց, լցրեց իր բերանը և մեծաքայլ առաջ գնաց։

— Մայրիկ, Ադրին դո՞ր գնաց։

— Ճամբախ կիտի։— Ոչ, նա ճամփան չգիտեր...

Մայրս և տատս ինչ-որ իրար նայեցին։

— Էն եթիմն դո՞ր գնաց,— անդրադարձավ տատս՝ ակնարկելով քեռուս։

— Դո՞ր պիտի էրթա,— պատասխանեց մայրս,— չե՞ս տիսնա, մեր մանուկ ուրացե... շուն տեր չի ճանչնա...

— Անութի-ծարավ թողեց մե,— հուսահատ բացականչեց տատս։

Խուռն քարավանը հևասպառ և ուժասպառ առաջ էր վազում։ Ահա մի էշ, մի մեծ խուրջինով բեռնավորված, խուրջինի երկու աչքերի մեջ մի-մի երեխա, 5—7 տարեկան, նրանք բարձրաձայն լալիս են, բայց աղմուկի մեջ չի լսվում նրանց ձայնը։

Հետևից գնում է ըստ երևույթին հայրը, քաջալերելով անասունին։

— Օ՛շ, օ՛շ, տո օշ, է՞...

Չի, էշ, կով, եզ, մոլորված ոչխարներ, արաբաներ, սայ-

լեր, ձեռնասայլեր, հեծիտան կին, ծեր, աղջիկ, տղա, մեր, մանուկ...

— Մեր մանուկ ուրացեր ի...

Գնում են և կանչում են իրար, կանչում են, կանչվռտում, հայհոյում, հորդորում, համոզում։

— Արմաղան...

— Սապատուր...

— Բարունակ...

— Սաթենիկ...

— Տուր...

— Առ...

— Յավաշ...

— Խացին մուլաթ կաց, խացի՞ն... շան ցինած...

— Մեռա՜վ... ամա՜ն...

— Քելի, քելի, վախտ չի... ասուված հոգին լուսավորի...

Կիսախելագարված մի պառավ նստել է ճանապարհի եզերքին, անշնչացած թոռան գլուխը գրկած, և երգում է ու լալիս, լալիս է ու երգում.

Ածու մ'եմ ցանե, սագա նարգիլ էր,
Իմ ձագին մեռնեմ, ագիլ-մագիլ էր...
Ածու մե՞մ ցանե, սաղա կարոտ էր,
Իմ ձագին մեռնեմ, գարկված արոտ էր...

Գաղթ։ Փախ։ Խուճապ։

Տատս բռնում է իմ ձեռքից, մայրիկը գրկում է Սուրենին, խորենը նույն առույգ քայլերով գնում է առաջից, ու մենք շարունակում ենք ճանապարհը։

Երևում է մի ծիծաղկոտ կանացի դեմք և որովհետև ծիծաղում է, դժվար է ճանաչել նրան։

Բեյզադեն է, միշտ ծիծաղող, միշտ ուրախ հացթուխ Բեյզադեն...

— Օղի խաթուն, Անուշ հանըմ, Ռուսաստան կերթանք... ա՛խ նի՛-նա՜... տա՛ր-նի՛նա՜...

— Տիրամոր յարեն ինի վերեդ, Բեյզադա, ի՞նչ արտով կը ծծղաս։

— Քա ի՞նչ ի էլի... քե պռնեմ՝ ուխտ կերթանք... տանտինա, տանանինա...

— Սև ուխտ, կապոտ ուխտ...

Տատս էր։

Այդ միջոցին կատարվեց մի զարմանալի բան. տատս արագ նետվեց ճանապարհի մեջտեղ և, բազմությունը ճեղքելով, անցնող մի կառքի ձիերի դիմաց կանգնեց։ Ձիերը ծառս եղան և կանգնեցին։

Կառքում նստած էր Արամ փաշան, երկու զինված թիկնապահներով։

— Մերուքին եմ արի քե, Արամ փաշա, Սուրենին տիր գոքդ, տար... չի կանա քելե...

— Ճանապարհ տուր, պառավ, շտապ գործ կա... Քշի՛, քշի՛...

Տատս մի կողմ քաշվեց կառքի տակ չընկնելու համար, ապա թե պարզեց երկու ձեռքերը կառքի հետևից և անիծեց.

— Գյոռնադաբ դառնաս, բան չեմ ասե, վեր աստվորիս կան գաս...

Տատիս անեծքը հասավ ողջ «Դաշնակցության». 1920 թվից այդ կուսակցությունը «կան կուգա աստվորիս վերեն» գյոռնադաբ դարձած...

3. ԳԻՇԵՐ ԵՎ ՀՈՒՇԵՐ

...Անցյալի հուշերը դառնորեն խոցեն...

Ն. Զարեճց

Գիշեր, խավար, խավար։ Շուրջը դաշտեր են, բլուրներ, քարաժայռեր, ծառեր։ Նրանք ճիվաղներ են թվում առասպելական, այլանդակ հսկաներ՝ ահավոր դևեր, հոպիտներ բերանբաց, այլակերպ պարելիս, քրքջալիս, ծամածռվելիս։ Ու մռմռալով առաջ է գնում բազմությունը, առաջ է գնում թառանչելով, հառաչելով, բառաչելով։

...Ինչպե՞ս եղավ, որ ես մենակ մնացի։ Ի՞նչ ուժ իմ ձեռքը հանեց տատիս ձեռքերից... Չկան Անուշը, Սուրենը, խորենը։

— Մայրի՞կ... խորե՞ն...

Ես լսեցի իմ ձայնը։ Գնում եմ կարծես երազի մեջ, հիպնոսված, շարժում եմ ոտներս, և թվում է, որ նրանք իմը չեն։

Աչքիս դեմ երևում են հրեղեն բծեր, — այդ հոգնությունից է, անքնությունից և քաղցից։

Ես ընկնում եմ ճանապարհի եզերքին։

. . . . . .

Վանն է։

Ֆիդայիներն ու երիտասարդությունը զինվում են։ Լսում եմ Իշխանի ձայնը. Պետք է կռակել ներսից, իսկ դուսից կգան մեզ օգնության...— *տատս սև դուլպա է գործում.*— ինչո՞ւ ես տխուր մայրի՛կ.— *Տատս սև դուլպա է գործում.*— դատաստանի տարին ի հասե, Գուրիս...— *Պատից նայում են զանազան մարդկանց նկարները, Գուրգեն, Վահան, Հրայր, Գժոխք, քաջ Անդրանիկ զեկավար... մշուշվում է Գարահիսարը, իսկ Տալվորիկը կրակում է, կրակում է ու երգում։ Պահարաններից զենքեր են հանում։ Ահա քեռիս կոտրում է մի մեծ կուժ, իսկ նրա միջից փամփուշտներ են թափվում։ Մայրիկանց տան բակը լեցված է զենքերով.* Բրավոնիկ, կարճ Մոդել, Սիմիտ-Վիլսոն, Քուչուկ շափլի, Տասնոց, Մարթենի, Բերդանգ... *Լոռթոյի համբոն զենք է բաժանում.*

— *Էս՝ քե՛...*

— *Էս՝ քե՛...*

— *Էտ տուր ըստեղ... էս՝ քե՛...*

...Ջևդետ փաշայի դռանը պահակ կանգնած թուրք սակյարները ներս են թողնում մի հայ լրտեսի։ Մոայլ լսում է նրան Ջևդետը։

— *Էֆենդը՛մ...*

— *Կամավորական խմբեր ռուսաց բանակում... հետքեր ապստամբության պատրաստության...*

Ջևդետը ջղային ձեռքը խփում է սեղանին, և առաջին գնդակը պայթում է թուրքաց դիրքերից Այգեստանի վրա։

Նայում է բերդը իր դարավոր, քարե հայացքով, շարագուշակ սոսափում են Այգեստանի ծառերը, մի մարդ մոայլ ստվերի պես անցնում է դիրքից դիրք, իսկ Այգեստանի հյուսիս-արևելյան կողմում դառնում է փոոդարանի վիթխարի հողմաղացը...

***

...Դի՛րք է Սահակ-թեյի փոսը, դիրք է Համուդաղի կշլան, դիրք է Սոլխու մեռշեն, դիրք է Շան-թաղը։ Օղակված ու կրակված՝ կրակում է Այգեստանը։

Գարուն է, ձյունհալ ու ապրիլ։

— Վարագը մեր ձեռքն է,— ու նայում է Վարագա սարը անսասան պահապանի պես։

Վարժապետանոցի ֆանֆառը, Կուշոյի շալկին ու Ասպատուրի զուռնա-նապարեն անցնում են դիրքից դիրք, նվագում են ու քաջալերում կռվողներին։

Կափամաջոնց փեսան՝ դոկտոր Սան-Ֆանին, կազմակերպում է կարմիր-խաչ և հրավիրում է գթության քույր Պանրենց աղջկան և ուրիշ հայ կանանց։ Հայ մայրերը շոր են կարում, պաշար են տանում հայ քաջերին. միշտ ուրիշների թութունից օգտվող, Պոլսից Վան եկած Մոնշերը, հակառակ իր երիտասարդության, փողոցների դռան վրա նստած շափահաներին և ծերերին կռվի մասին խորիմաստ դատողություններ է անում ու ամեն մի հաղորդագրության՝ վերջացնում է «Մի կութիդ տա՞ս»-ով։ Թոշենց Սիմոնն ամեն օր գնում է Շիրաքի կայֆեն թավլու է խաղում, իսկ երեկոյան տուն վերադառնալով, հավատացնում է իր կնոջը՝ Օղսաբեթ հանրմին, որ, եթե տրվեց այսինչ դիրքը, շանցեն նրան, սխալվեցին, եթե գրավվեց այնինչ դիրքը...

— Խմբապետին, նա՛իսա, խասկցուցի, կլխի ինկավ, գրավեց...

Իսկ հեռու տեղից նոր եկած կիսանորմալ, բնիկ վանեցի Պաշո՞լը...— «Պաշո՞լ»,— գոռում է նա, պառկած խընձորի ծառի տակ, ի պատասխան թուրքերի կրակոցներին.— «Պաշո՞լ, քեռին կուգա, կայմակամ կելնեմ...»։

— Պաշո՞լ, ի՞նչ կա թազա...

— Քեռուց թելեֆոն կա... շըմընդրֆռով կուգա...

— Պաշոլ, ըստեղից շուր Ռուսաստան ինչքա՞ն ի...

— Տաս Վարագա սարի չափ...

Իսկ երբ զգում է, որ ձեռ են առնում՝

— Խազար Վարագա սարի չափ... քո զուլալ մերը...

Բացվում է մի ծանր ու անձրևոտ օր.— Վարագը մերոնք տվին։ Ու նայում է Վարագա սարը ահավոր թշնամու պես։ Սառն է նայում և Կարմրվորա վանքը, Շուշանց գյուղը, Վարագա սարի գագիթ։

Ծանր ու անձրևոտ օր։ Կոշմար է իջել այգեստանների վրա։

— Ռա՛ֆ...— թնդանոթի մի արկ պայթեց Հուսյանենց այգում...

***

Խրժ-խրժ, է՛յ խրժ-խրժ։— Խելագա՞ր էիր, թե՞ հերոս, ես էլ չգիտեմ, բայց դու տասը օր և տասը գիշեր չքնեցիր։ Երգելով խաղացիր մահվան հետ, երգելով բարձրացրիր վիրավորներին, իսկ երբ թաղում էին սպանվածներին, դու երգում էիր.

Վարդ մի՞ պացվեն առավոտվա շաղերով,
Եղիզ բալա, վարդ քաղեցիր մաղերով։

Իսկ տասներորդ օրը, ուշ երեկոյան, մի գնդակ ծակեց քո քունքը։

— Տղերք,— ասիր,— ձի զարկին, թե մեռա՞, ինչ կասեք ասեք. կը քնեմ. կը զարթնեմ... տասը օր ի չեմ քնե... վարդ մի բացվե... էն վարդը դուք քաղեք...

Ու մեռար։

***

Այգեստանը պաշարված է։ Մի քանի կարևոր դիրքեր խլեց թշնամին։ Տովի վրա երևացին գյամիներ, սպիտակ առագաստանավեր. թշնամին օգնական զորք ստացավ. սև կայծակի նման լուրը շրջեց տնից տուն։ Իմ խումբը արտակարգ ժողով է հրավիրում.— Հի՛-հի՛-հի՛,— ծիծաղում է Քոլոշոն։ Վարդանը պահանջում է, նկատի առնելով մոմենտի լրջությունը, գոնե մի անգամ «Սև հողեր» ներկայացնել։— Հի՛-հի՛-հի՛,— ծիծաղում է Քոլոշոն։ Ես կրկնեցի մի օր առաջ Պանտիշից լսած խոսքերը.

— Իրենք նետեցին այս կրակը, մենք մեր ուժերով չենք կրնար մարել, թող գնան իրենք ալ մարեն, ինչո՞ւ կապասեն սահմանեն անդին...

Իմ ծանրակշիռ հայտարարության ի պատասխան, Ոստանիկը՝ թմփլիկ Հոլոմոլոն, գլուխկոնձի է տալիս կարոսի ածուի մեջ, կրակելով մի... երևի թափանցա...

Ու կարևոր նիստը փակվում է։

... Գրաված շրջաններում գյուղացիներին թուրքերը չեն սպանում. նրանց երկար քարավաններով թույլ են տալիս, որ Վան մտնեն՝ սովամահ անելու համար բնակչությունը, ծունկի բերելու համար կռվողներին։

— Հա՜ց, հա՜ց, հա՜ց...

Բացվում են ուսևորների ցորենի և ալյուրի թաքիրները, մորթվում են մասնավոր—սեփական անասունները, արագ սպառվում է պաշարը, և սովն ու մահը նայում են բոլորի աչքերից ներս։

***

Պաղջուրենց Սիմոնի կինը՝ Փառանձեմը, փախավ թուրքերի մեջ. ասին, որ թուրք սիրեկան է՝ ունեցել։ Լուրը հասնում է դիրքը, կռվող Սիմոնին։ Սիմոնը դուրս է գալիս դիրքերից և կանգնում կես ժամ թշնամու համազարկերի առաջ։ Ոչ մի գնդակ նրան չի դիպչում։ Սիմոնն ատիպված ինքնասպանություն է գործում։

Սիմո՛ն, ես քեզ տեսնում եմ մտքերի արնամշուշում...

***

Փոլատենց Օհանեսը, տասնվեց տարեկան մի տղա, թլնդանոթ հնարեց, փոքրիկ թնդանոթ, երկաթե փողով, շարժական լծակով, փայտե անիվների վրա։ Իրենց այգում հավաքեց թաղի տղաներին՝ փորձնական դիտման։ Գյուտարարը լցրեց նրա մեջ վառոդ, երկաթի կտորներ, ապա բերանը փակեց կլոր երկաթե սալով։

— Էդ պերա՞նն ինչի կը փակես,— հարցրեց Բաշոյենց Գասպարը՝ «Լոլոն»։

— Որ ձեն տա,— պատասխանեց հնարագետ Փոլատենց Սհանեսը։

Երբ վերջացրեց նախնական գործողությունները՝

— Զատ գնացե՛ք, զատ կայնեք,— կարգադրեց նա։

Դիտողները հեռացան՝ մի մասը աջ, մի մասը՝ ձախ։ Սհանեսը կանգնեց թոփի գլխին և լուցկին մոտեցրեց թնդանոթի փողի ստորին մասում բացված անցքին, փողի մեջ լցված վառոդամասին։ Վառոդը ֆշշաց, թնդանոթը գոռաց և կայծակի արագությամբ փողը ետ դարձավ իր շարժական լծակի վրա, ուղիղ դեպի գյուտարարը, և... պայթեց։

Բայց, ավա՜ղ, գյուտարարը չլսեց, թե որպիսի՞ ահռելի ձեն տվեց իր ձեռագործ թոփը...

Մահը վայրկենական եղավ։

***

...Կամավորները մտան Վան։

Նազելին, մի մեծ փունջ ծաղիկ ձեռքին, խառնվեց դեպի խաչ-փողան շտապող բազմությանը։

Ես էլ նրա հետևից։

Խաչ-փողանի երկու կողմերը եզերող խիտ ծառերի պես կանգնել է բազմությունը։

Ծովը, ծովի կապույտն ապիտակեց։

Այդ թուրքերն են փախչում առագաստանավերով։

Խանդավառ բացականչությունները, որոտընդոստ «կեցցե»-ները ծայր առան խաչ-փողանի ծայրից։

Եկա՜ն... եկա՜ն...

Մարդկային զուգահեռն ալեկոծվեց։

Նազելին ուզում է օղակը ճեղքել և առաջ անցնել։

— Դո՞ր կը մտնես։

— Քեզ ի՞նչ... ես ծաղիկները նվեր պիտի տամ։

— Մի՛ տա...

— Ինչի՞ չիտամ։

— Մի՛ տա, քե կասեմ։

— Ինչի՞, ինչի՞, է՞,— համառեց Նազելին։

— Քե... կը պաքի։

— Անամո՛թ,— կարմրատակած ասաց նա, շուռ եկավ, բաղմությունը ճեղքեց և անցավ առաջին շարքը։

Վերից մի բարակ ճյուղ ընկավ վզիս։ Ես նայեցի վեր։ Ուռենու վրա բարձրացել էին տասնյակ տղաներ, դիտելու համար զորանցքը։ Ես էլ մոգլցեցի։

Ծառի վրա բռնեցի մի հարմարավոր տեղ, աչքերով փնտրեցի Նազելուն, դուա. նա նայում է անհամբեր աչքերով դեպի փողոցի ծայրը և երևի բնավ չի հիշում ինձ։

Ինչո՞ւ սիրտս ծակեց... ես այսպիսի զգացմունք դեռ երբեք, երբեք չէի ունեցել։ Վառվեց երևակայությունս։ Ի՞նչ կլիներ, հանկարծ պատահեր այսպիսի մի հրաշք։ Գալիս է ձիավոր խմբապետը, զինվորները հետևից։ Նազելին առաջ է վազում և խմբապետին է պարզում ձեռքի ծաղկեփունջը ու... հանկարծ տեսնում է, որ խմբապետը ոչ այլ ոք է, եթե ոչ Աճմոնց Գուրգենը։ Ես կընդունեմ նրա ծաղիկները և ձիով առաջ կանցնեմ, առանց մինչև անգամ նրա վրա նայելու։ Դրանից նրա սիրտը շատ կցավի, նրա համար էլ ես նրան կժպտամ և շնորհակալություն կհայտնեմ... Ո՛չ, ո՛չ, ես կիջնեմ ձիուց, կդնեմ նրա վրա Նազելին և ձիու սանձից բռնած կտանեմ նրան ուր որ նա ցանկանա... իսկ զինվորները։— Ես նրանց կասեի.— հպատակվեք Նազելուն, որովհետև ձեր խմբապետը նրան է հպատակվում...— Ու ցույց կտայի Նազելին։ Իսկ եթե նրանք հակառակվեին, ես...

Նորից ալեկոծվեց բաղմությունը։ Վերջապես երևաց ռուսական բանակի կամավորական առաջին ձիավոր գունդը։ Թնդաց երաժշտությունը։

Առաջից գալիս էր հրամանատարը, իսկ այդ հրամանատարը ես չէի։ Նա մեծ փափախ ուներ, սև երկար բեղեր, զինված և խաչփակ փամփշտակալներով։ Նա ժպտում էր աջ ու ձախ և գլուխ էր տալիս։

Նազելին։

Առաջ վազեց Նազելին, հրամանատարին պարզեց ձեռքի ծաղկեփունջը, և նրա ձեռքը հասավ մինչև հրամանատարի ծունկը։ Թշնամական մի ձեռք բարձրացրեց Նազելուն, պարզեց Նազելուն իր ծաղիկներով՝ հրամանատարին։ Նա կարծես չքնաղ պուպրիկ լիներ։

Գրկեց Նազելուն հրամանատարը, իմ գուշակության համաձայն համբուրեց նրան, ինչպես համբուրեց այն մի մարդը Անիկ դուդուին ժողովարանի ճանապարհին, ապա վերցրեց ծաղիկները, իսկ Նազելուն իջեցրեց։

Նազելին։

Կարծես չէր ուզում իջնել Նազելին։ Երևի նա կցանկանար, որ մի անգամ էլ, գուցե երկու անգամ էլ համբուրեր իրեն։

Ես շտապ ծառից վար իջա։ Կարմրատակած՝ շարքերից դուրս թռավ Նազելին՝ երջանիկ ժպիտով։ Պետք էր, որ ես այդ րոպեին պետք եղածից ավելի հուզված դեմք ունենայի, որովհետև հենց որ ինձ տեսավ, չքացավ նրա դեմքի ժպիտը և ներողություն խնդրողի դեմքով ասաց.

— Ինչ էլա՞վ որ... պան չէլավ։

Ես նորից հիշեցի Անիկ դուդուին, Սիմոն աղային և լուռ քայլեցի առաջ։

Նազելին հասավ, բռնեց իմ թևից.

— Գուրգեն, դո՞ր կերթաս։

Ես ինքս էլ չգիտեի, ո՞ւր գնայի. բացի Նազելուց, փողոցում ոչինչ չէր երևում աչքիս. անկասկած, եթե այդ րոպեին ինձ համար էլ կանչեին Սիմոն աղայի պատվելուն, նա աչքը պիտի ձգեր երկինք և ասեր.

— Գուրգեն ծառային կանչեր է Հիսուսը, ըսեր է՝ «եկո՛ւր...»։

***

...Այո, ես, անձամբ ես, բարկացած ասացի Նազելուն.

— Քե՞զ ինչ դոր կերթամ։

— Մեյտեղ էրթանք։

— Քե չեմ ուզե։

— Ապա վի՞ր կուզես, Շամրիկի՞ն։

Շամրիկը Նազելու փոքր քույրն էր։

Նազելու այս հարցը դանակի պես կիսեց սիրտս, բայց ես ոչնչով չմատնեցի իմ թուլանալը և նույն խիստ տոնով հարցրի.

— Դու վի՞ր կառնես։

— Իշխանին,— պատասխանեց նա։

— Իշխանին սպանեցին։

— Գիտեմ,— տխրությամբ մրմնջաց նա, կարծես չիմանալով, ինչպե՞ս արդարանալ Իշխանի սպանության համար։

— Համբարձի՞ն կառնես,— շարունակեցի ես իմ անողոք հարցապնդումը։

Նազելին ժպտաց երջանիկ ժպիտով և գլխով դրական նշան արավ, թաշկինակի եզերքը ատամներով բռնած, երկու ձեռքով մեղմությամբ քաշքշելով և ոտների վրա իրանով օրորվելով...

— Մնաս բարով,— ասի ես դառնությամբ։

— Էրթաս բարով,— պատասխանեց նա անտարբերությամբ, այնպիսի սպանիչ անտարբերությամբ, որ ես պատրաստ էի պառկել գետնին, հեկեկալ և հողը ճանկել։

Բայց ես շուռ եկա և մթնած աչքերով սկսեցի քայլել, անտարբեր շրջապատի անցուդարձին։

Ետ նայեցի։

Քսան քայլ հեռու կանգնել էր Նազելին և, աչքերը մեծ-մեծ բացած, նայում էր իմ հետևից։

Ես մեքենայաբար գրպանից հանում եմ իմ հայրենական փոքրիկ և փայլուն ատրճանակը, դնում եմ հետևս և շարունակում ճանապարհը։

— Կայնի,— լսում եմ Նազելու ձայնը։

Կանգնում եմ։

Նա վազելով հասնում է ինձ, նայում է ձեռքս ատրճանակին և հարցնում է.

— Էդ ի՞նչ ի...

— Ըռովել,— ասում եմ ես և ատրճանակը փայլեցնում եմ նրա աչքերի դեմ։

— Իշխանի տվա՞ծ։

— Չէ,— պատասխանում եմ ես սրտնեղած։

— Ապա վո՞վ է տվե։

— Ես եմ շինե,— հպարտությամբ փչում եմ ես։

— Գնա՛... էլ բան չեմ ասե,— հիասթափված ասում է նա և սառած ու անտարբեր շուռ է գալիս։

Ես շտապեցի ուղղել իմ սխալը։

— Խապեցի... Իշխանն ի տվեալ։

Նրա դեմքը նորից բոցավառվում է։

— Ես գիտե՞մ ախր... դու ի՞նչխ կանաս էդպես բռունվել շինել։

— Էս՝ «Սիմիթ-Վիլսոն»-ի,— բացատրում եմ ես։

Նա նորից ընկնում է մտածմունքների մեջ։

— Կուզե՞ս քեզ առնեմ,— հանկարծ հարցնում է նա։

— Կուզեմ,— ասում եմ ես և զգում եմ, որ շունչս կտրվում է։

— Ախր դու շա՛տ պստիկ ես.— կշռադատում է նազելին,— ես մեծ-մե՞ծ մարդ կուզեմ... դու իսկի բեղ էլ չունես...

— Է, դու էլ պստիկ աղջիկ ես... Ես որ մեծանամ՝ բեղ էլ կլինի,— հակաճառում եմ ես։

— Է՞,— ծիծաղում է նա,— քեզ բեղ չէլնե՞...

— Ինչի՞...

— Դու պը՛ս-տի՛կ ես, պը՛ս-տի՛կ ե՛ս, պստի՛կ...— ասում է նա ու զույգ ոտների վրա վեր-վեր թռչելով, թաշկինակն ափերի մեջ ծափ է տալիս։

Հետո նա հարցնում է.

— Դու կանա՞ս ինձ գրկե, տանե...

— Կանա՛մ,— պատասխանում եմ ես իմ ուժերի և նրա թեթևության վրա վստահ։

— Չես կանա,— վստահեցնում է նա։

Ես հակաճառելու փոխարեն մոտենում եմ նրան և ուզում եմ ապացուցել ,որ կարող եմ։

— Լստեղ չելնե՞,— ճչում է նա բարձր ձայնով,— էրթանք ձեր այգին։

— Էրթանք,— ասում եմ ես երջանիկ և պատրաստակամ։

Գնում ենք։

***

...— Դուք վարդնոց ունե՞ք,— հարցրեց նա, երբ մենք մտանք մեր այգին։ Ես նրան առաջնորդեցի դեպի մի-վարդնոցը։

— Մեր վարդնոցն մե՞ծ է,— մրմնջաց նա մանկական դժգոհությամբ։

— Մերն էսքան է,— խոցված ինքնասիրությամբ ասացի ես։ Փորձեցի նրան պարմացնել սաքուի շուրջ արդեն պոկած սպիտակ բարդիսարախաններով, կարմիր կակաչներով, դեղին արևածաղիկներով և զամբեխներով,— բան դուրս չեկավ.

— Մեր շա՞տ է։

Զգացի, որ նա սառչում է և նորից հիասթափվում։ Ինձ համար պարզ էր, որ եթե ես նրան գրկելու ցանկություն հայտնեի, նա լսել անգամ չէր կամենա, այնքա՞ն փոխվել էր նրա տրամադրությունը։

Նորից դիմեցի ատրճանակի կախարդական ազդեցությանը. հանեցի և սկսեցի խաղացնել ձեռքիս մեջ։

Ոչ մի տպավորություն։

Ես բնազդաբար ասացի.

— Ես ձի է՞լ ունեմ...

Նա իր ցրված հայացքը բոպեապես դարձրեց ինձ վրա և լարվեց.

— Դո՞ր է քո ձին։

— Քեռանց տուն։— Եվ ավելի քաջալերված իմ գյուտից՝

— Հալա քուռակ էլ ունի,— ասացի։

— Քուռակ չեմ ուզե,— մերժեց նա, սառ ջուր լեցնելով իմ գյուտի վերջին մասի վրա,— ապա ինչի՞ չես հեծնե։

— Կուզես՝ կհեծնեմ,— խոնարհ հնազանդությամբ ասում եմ ես։

— Կուզեմ, կուզեմ,— ծափ տվեց Նազելին,— ես քեզ համար ծաղիկ կպփրեմ, դու ինձ կդնես ձիու վերեն...

— Չէ, ծաղիկներ չուզե,— շոր կերպով առարկեցի ես,— քե կդնեմ ձիու վերեն, շմրուլ կառնեմ ձեռքս, կտանեմ քե՝ դո՞ր որ ուզես։

— Դե,— անձնատուր եղավ Նազելին՝ ոգևորված ինձնով,— կանա՞ս ինձի գրկե։

Ես լուռ մոտեցա նրան։

— Էրթանք վարդնոցի իտև, —այս անգամ ցած ձայնով ասում է նա, և նրա այդ ձայնից ես սարսռում եմ։

Մենք անցնում ենք վարդնոցի հետև. նա գնում է առա-

ցից, աջ ու ձախ ձեռնոցով փեշերի երկու կողմերից բռնած և տարածած, գլխիկոր և մտածկոտ։

...Վարդնոցի հետև ես բռնեցի նրա ծունկերից բարձր, ուսա թևերիս օղակի մեջ և բարձրացրի։

Նազելու ոտները հասնում էին իմ ծունկերին, իսկ իմ գլուխը հավասար էր նրա վզին։

— Չուր դո՞ր կտանես։

— Չուր դոր որ ուզես։

— Չո՞ւր...— նա մի բոպե մտածեց,— շուր աշխարի ծեր...

Նա ամուր փաթաթվեց վզիս, խլրտաց և շնչեց։

Ես տարա նրան մինչև հաջի նանի ալուչի ծառը։

— Է՛լ տար։

Հասցրի մինչև այգու վերջը, հացինների և թեղինների մոտ։

— Աշխարհի ծերն է՞ս ի,— հարցրեց Նազելին։

— Չէ, շատ կա,— պատասխանեցի ես շնչասպառ, շուրջնալով գրկվել իմ քաղցր բեռից։

— Դե՝ տար։

Նա նորից խլրտաց և շնչեց, թևերիս մեջ ծանրացա՞վ, ծանրացա՞վ...

Ինչո՞ւ իմ շունչը կտրվեց. նա այնքան թեթև էր։

Ես վար դրի նրան, ընկա խոտերի մեջ և սկսեցի մոլեգնաբար հեկեկալ։ Ինչո՞ւ էի լալիս, ինքս էլ չգիտեի, ես շընչում էի հողի և խոտերի սուր բույրը, և դա ավելի էր գըրգռում ինձ։

Իսկ քիչ հետո, երբ ես արցունքից թեթևացած և հանգըստացած գլուխս բարձրացրի, Նազելին գնացել էր, Նազելին չկար...

Ես բռնեցի այգուց դեպի տուն ձգվող ուղղահայաց կածանը։

Կանաչ ծառերի ժանյակների միջից փայլատակում էր վերջալույսը։

...Վարդնոցը խշխշաց։ Ես կանգնեցի։ Վարդնոցի հետևից դուրս եկավ նա՝ Նազելին։

— Ինչի՞ լացիր,— հարցրեց նա։

Ես նկատեցի, որ նրա աչքերի թերթերունքների մեջ փայլատակում է արծաթ արցունքը։

— Դո՞ւ ինչի կուգաս,— դիմադարձ արի նա։

— Ես... ես,— մրմնջաց նա,— Իշխանի խամա՞ր կուգամ... ապա դո՞ւ...

— Ես էլ... Շամրիկի խամար...

— Հա՛, հա՛,— արցունքների միջից ուրախացավ նա,— դու Շամրիկի խամար լաց, քիշ մէլ ինձի խամար, ես՝ Իշխանի խամար...

— Որ էդպես ի,— սակարկեցի ես,— քիշ մէ՛լ դո՛ւ ինձ խամար...

— Ես քե խամար լաց չե՞մ էլնե,— ասաց նա և գլխիկոր հեռացավ։

Ես տուն մտա այն ժամանակ, երբ ծղրիդները սկսել էին իրենց իրիկնային արգեստանյան համերգը։

Բարձրացա «Սալոն»-ը, պատշգամբը։

Այնտեղ վժժում էր իմ ամբողջ խումբը։ Ինձ տեսնելով՝ նրանք մոտ վազեցին.

— Գուրգեն, կշլեն կվառվի...

Զըմփ-զըմփ մաղարի պագաթի վրա շինված թուրքական սպիտակ զորանոցը, որը հեռվից նման էր սպիտակ, քառակուսի տուփի, վառվում էր։

— Տղեյներ,— հրահանգեցի ես իմ խմբին,— վաղը խըմբով էրթանք զենք պիրենք։

— Էրթա՞նք, էրթա՞նք,— ուրախացան նրանք։

Ես զգացի, որ մի անկյունից ինձ վրա նայում են երկու մեծ աչքեր։ Ես բնազդաբար հասկացա, թե այդ ո՞ւմ աչքերն էին։

Մոտեցավ ինձ նա.

— Դու,— ասաց,— իսոնց մե՞ծն ես։

Ես գլխով դրական նշան արի։

— Ձիդ կպիրե՞ս...

Գլխով եմ անում,— հա՛,— բայց մտածում եմ, որտեղի՞ց ձարեմ ձի...

— Ե՞փ։

— Վաղ։

Այդ միջոցին, դիմացի շքեղ դարբասից դուրս է գալիս Նազելիենց սպասուհին և կանչում է.

— Նապելի, արե տուն, Մարինա հանում կկանչի։
— Ինչի՞ խամար։
— Էսօր խուր կուգա, խո՞ւր։
— Ի՞նչ խուր, վո՞վ։
— Հրամանատարները...

Ես նայում եմ նրանց շքեղ տանը։ Բոլոր պատուհանները ողողված են տոնական, հյուրընկալ լույսերով։ Նապելին, ուրախ ծափ տալով և ծղրտալով, սանդուղքներից ներքև է վազում։

Սիրտս ծակում է նույն ծանոթ ցավը, իսկ այգում բացվում են ապիտակ բարդիսաբախներ, կարմիր կակաչներ, դեղին արևածաղիկներ ու զամբեխներ։

Ողջ գիշեր ես չքնեցի։ Մտածում էի մյուս օրը ձի գրտնելու և Նապելուն ներկայացնելու մասին...

Քանի՞, քանի՞ նժույգներ անցան այդ գիշեր երազներիս կանաչ դաշտերով...

Իսկ Նապելիենց տանը ողջ գիշեր կերուխում էր։

Առավոտյան Սուրենի, Վարդանի, Խորենի ու Ատանիկի հետ միասին դուրս եկանք խմբի մյուս անդամներին ճարելու, կշլան գնալու և զենք բերելու համար։

Ոչ մեկը չերևաց։

Անցանք երկու փողոց։

Շուտով իրար կորցրինք։

***

Ամայի այգում, ածունների մեջ արածում էր լղար մի ձի առանց սանձի և կապի։

Գլխապատառ թռա դեպի ձին։

Ջրհորի մոտ ընկած է մի հին պարան։ Ըստ երևույթին կտրել և դույլը տարել են։ Աչքս ընկավ նաև մի ծաղկամանի։

Ես վերցնում եմ պարանը և ծաղկամանը ու մոտենում Ֆիուն։ Զին թողեց արածելն ու հնազանդ իշու պես կանգնեց։

Մի կերպ պարանը կապեցի վզից և քաշեցի։ Զին առանց դիմադրության հետևեց ինձ։

Ծաղկամանը ձեռքս և ձին հետևիցս, փողոց դուրս եկա։

Ուխը փնշաց կողոպտված տան պատուհանից։

Թալանելուց հետո կրակ էին տվել։

Գնում եմ փողոցով իմ թանկագին ավարի հետ և ուրախությունից ոտներս գետնին չեն դիպչում։

Միայն թե շուտ հասնեմ։ Նազելին, Նազելին, որքա՜ն կուրախանա Նազելին։ Ես նրան կդնեմ ձիու վրա և կտանեմ...

— Զուր աշխարի ծեր...

Ես թողի գլխավոր փողոցը և մտա մի կողմնակի «ջրի փողանց»։

Այստեղ ավելի ապահով է։

Տասը քայլ չարած, դեմս դուրս եկավ մի ածդահա մարդ, հասա, ակ բեղերով և ջղմաներով։

— Դո՞ր կտանիս էդա ձին, շան ցինած, տուր էստեղ։ Ինչ որ գլխիս տային։

— Ես Ակմոնց Գրիգորի տղեն եմ, էսա ձին կամավոր տվեց, մի՛ առնե, մի առնե,— լացակումած ասացի ես։

Ածդահան ուշադրությամբ նայեց ձիու դեմքին և քնքուշ ձայնով ասաց.

— Գնա, բալամ, գնա, քեզ պան ասող չկա...

Կրկնակի ուրախությամբ շարունակեցի ճանապարհը։

Տուն հասա և դիմեցի ուղիղ այգի։

Կապեցի ձին մի կանաչ ածուի մեջ, խնձորի ծառից, և ծաղկամանը ձեռքիս սենյակ մտա։ Անուշը չկար։

Սենյակում նստած էր տատս և արագ-արագ, ըստ երևույթին բարկացած, գուլպա էր գործում։

— Մայրիկ, ծաղկաման եմ պիրե՞,— ուրախ ասացի ես։

— Դե՛ն թալ, խարամ մալ ի... մեր ունեցածից ի՞նչ խեր տիսանք, մնաց օտարի ունեցածից ինչ տիսնանք։

Ձիու մասին լռեցի։

Ես դիմեցի դեպի Նազելենց տուն։ Ներս մտա դարբասից, կանգնեցի ջրհորի մոտ և կանչեցի.

— Նազելի՞... Նազելի՞...

Ոչ մի պատասխան։

— Նազելի՞...

Բակում օրորվում են խնձորենիները, գուցե ջուրը լցվ-

վում է ավազանը, իսկ մի թռչուն ծառի վրայից երգում է.

— Ծծծճի՜... ծծծճի՜-ճի՜-ճի՜...

— Նազելի՜...

Առաջին հարկի պատուհանից երևում է սպասուհին։

— Նոր լոզացավ, քնե, չի՛ կանա գա։

— Չէ, պիտի գա,— ասում եմ ես,— պան պիտի ասեմ։

Պատուհանից անհետացավ սպասուհին, ապա երևաց նազելու գլուխը.

— Ի՞նչ կասես։

— Նազելի՜,— ճչում եմ ես հուզված և ուրախ,— ձին պիրի։

Նա սառն անտարբերությամբ ասում է.

— Քո ձին ի՞նչ պիտի անեմ որ... տե՛ս,— ու ցուցամատով ցույց է տալիս բակի ձախակողմը։ Այնտեղ, ծածկի տակ կապված են հինգ-վեց ձի։

— Էդ վի՞րն ի,— հարցնում եմ ես շանթահար։

— Խմբապետներին...

— Իմ ձին քոնն ի...

— Խմբապետն ասաց, որ իտոնք իմն են։

— Դուրս չե՞ս գա,— հարցրի ես, ինչ ասելս չիմանալով։

— Դո՞ր։

— Էրթանք... Վարդնոց։

— Չէ՜,— ծղրտաց նա,— քե չեմ ուզե... Շամրիկն էլ քե չուզե։

— Ի՞նչ գիտես։

— Ինքն ասաց։

— Ի՞նչ ասաց։

— Ասի՝ Գուրգենին կուզե՞ս, ասաց՝ չէ, կամավոր կուզեմ...

Սպանիշ էր հարվածը։ Ես նրանց բակից դուրս թռա, մտա մեր տուն, սանդուղքների տակից վերցրի մի հաստ փայտ և կատաղած մոտեցա ձիուն։ Զին կանգնել էր անշարժ, գլուխը բարձր։ Ամբողջ ուժով ես բարձրացրի փայտը նրա գլխին իջեցնելու համար։ Զին տեղից չշարժվեց։

Ես ուշադրությամբ նայեցի նրա դեմքին։

Զին երկու աչքով կո՛ւյր էր...

***

Խաչ-փողանից արընթաց մի կառք անցավ։ Ես տեսա մի ժպտուն, աչեզարդ դեմք։

Հովհաննես Թումանյանն է,— ասաց Աղասին։

«Գառնիկ ախպե՞ր»...

Բայց ես ավելի սիրում էի տատիս սովորեցրած մի ուրիշ բանաստեղծությունը.

Ձյունը կուգա փաթիլ-փաթիլ,
Հետն էլ անձրև կաթիլ-կաթիլ,
Այդ միջոցին մի պառավ կին
Հորթ կը փնտրեր գաշտի միջին...
Կովը նկավ լեցուն կրծքով,
Շուրջը նայեց լացով, կոծով,
— Հորթուկս ո՞ւր է,— նա բառաչեց,
Խեղճ պառավին ցավ պատճառեց։

Մինչև ինձ թվում էր, որ այդ կորած հորթը ես եմ, տատս փնտրում է ինձ և չի գտնում...

. . . . . .

. . . . . .

...Այո, այո, այդ կորած հորթը ես եմ...

Ես բաց եմ անում աչքերս, ուզում եմ շարժվել և չեմ կարող։ Գնում են, փախչում, շտապում, ես մնացել եմ, ես ընկել եմ անօգնական։

Վերջացավ ամեն ինչ։ Վեր կաց, Գուրգեն, հիմա դու ես քո գլխի տերը։

Ո՛չ մանկական երազներ, ո՛չ թոռնիկային ցնորքներ.— ամեն ինչ վերջացավ...

Ես շարունակում եմ ճանապարհը հիվանդի պես, ո՛չ, հաշմանդամի՛ պես...

4. ՆՈՐԻՑ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ճանապարհից դուրս կանգնած են երկու բեռնավորված ֆուրգոններ։ Ձիերը բաց են թողնված ազատ արածելու։

Ֆուրգոններից մեկի բեռների գլխին մուշ-մուշ ենջում է

Վանի տոհմիկ, սպիտակ ու մեծ կատուն։ Ես այնպես նախանձում եմ նրան։

Այդ ո՞ր երջանիկներն են տեսնես, որ չեն մոռացել իրենց կատուն անգամ այն ժամանակ, երբ շատերը թողնում էին իրենց որդիներին։

Ես առաջ եմ անցնում։

Այնտեղ, Ֆուրգոնի բարձր ստվերի տակ, ծաղկանկար չուքի վրա նստել է Նազելին, հայրը, մայրը, քույրը, եղբայրները, ապա հորեղբայրը նրա, իր ընտանիքով։

Նրանք ուտում են։

Նոր զգացի, որ սարսափելի քաղցած եմ։ Աղիքներս խառնվեցին ու դառնահամ մի ջուր լցվեց բերանս։

— Նազելի։

Իմ ձայնը պետք էր որ շափազանց նվազ լիներ. չլսեց նա։

— Նազելի։

Նա նայեց ինձ և կարծես չճանաչեց։

— Ես եմ... Գուրգենը...

Հանդարտ նա բարձրացավ տեղից և մոտեցավ ինձ. քոլորն էլ ինձ նայեցին, ապա շարունակեցին ուտել։

— Ես քեզ էնտեղ ասի, էստեղ էլ կասեմ, քեզ չեմ ուզե։

— Նազելի, անոթի եմ... խաց տուր։

— Խաց է՞լ չունես,— ասաց նա այնպիսի տոնով, որ կարծես հանցանք էի գործել...

— Մերոնք... ես...

Նա երկու քայլ առավ, ապա մոտածկոտ կանգնեց։

Նայում է ոտիցս գլուխ։

— Իշխանի ըռովել քո մո՞տն է։

Ես հիշեցի իմ ունեցածը։ «Մեղրագետ»-ը կորցրել էի, իսկ ատրճանակը...

Շոշափեցի գրպաններս։

— Առաս է...

Մոտենում է։

— Տուր՝ քեզ խաց տամ...

— Ոչ,— ասացի ես և, առանց ցավ զգալու, ատրճանակը պարզեցի նրան։

Նա վերցրեց, վազեց յուրայիններիի մոտ, ցույց տվեց,— նրանք դիտեցին ապրանքը մեկը մյուսին տալով։

Ապա թե Նազելին մոտ է վազում մի մեծ լավաշ ձեռքին, պարզում է ինձ լավաշը և հարցնում.

— Քո ընտվելի անունն ի՞նչ է։

— «Սիմիթ-Վիլսոն»,— պատասխանում եմ ես և սիրտս, սիրտս լցվում է երախտագիտությամբ...

. . . . . .

. . . . . .

Գետ է, կիրճ և զարհուրելի գիշեր։

Թերկրի։ Թենդի — մահու...

Հասել է թշնամին և կրակում է լեռներից։

Գալարվում է մի դանթեական խուճապ։ Փախչում են, տրորում մեկմեկու, կանչում են իրար ու նորից։

Գիսախռիվ են կիները, իսկ տղամարդիկ՝ արյունոտ աչքերով։

Թողնում են սայլերը, ձիերը, անասունները, վազում են դեպի կամուրջը, շատերն իրենց զեռն են նետում՝ նորից դուրս չգալու համար։

Մայրը գետ շպրտեց իր երեխային և թեթևացած առաջ վազեց։

Գնում է մայրը և ծիծաղում է, գնում է մայրը և նորից է ծիծաղում, գնում է մայրը ու խելագարվում է։

Ես լսում եմ ծանոթ մի ձայն։

— Մայրիկ, մայրիկ, քելի, քելի...

Ես վազում եմ դեպի այդ ձայնը և բռնում ծանոթ մի փեշից։

Մայրս է։

— Անո՛ւշ...

— Գուրգեն, մայրիկ էլ չի կանա քելե,— ասում է մայրս և լալիս է...

— Իմն էստեղ պրծավ,— ասում է տատս,— դուք գնացեք...

Ու սողում է դեպի գետը։

Խառնվում է այստեղ հիշողություն, հիշողության աղմուկի միջից լսում եմ տատիս «ամա՜ն...» հառաչանքը, տա-

ախս վերջին ձայնը, տատիս ձայնը, որն այլևս չհնչեց ինձ համար ոչ մի արևի տակ...

Ջուրը, ջուրը թեթև լինի քեզ վրա, իմ լուսավոր տատիկ, ու թող ձկները չմոտենան քո բաց և սառած աչքերին...

Բայց գիտե՞ս, տատիկ, ես մինչև հիմա չեմ հավատում, որ դու մեռած ես, ես դեռ փնտրում եմ քեզ։

. . . . . .

... Այդ տատս չէ՞ր, որ երգում էր.

Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք,
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ բերավ,
Ցավերդ առավ մեկ-հազար...

. . . . . .

Կենար տատս և կբանար վանքի դռները։

Կշրջեր վանքի պարիսպների տակ, խաչ կհաներ երեսին և կմրմնջար.

— Բարի լուսու սիրուն Քրիստոս, դու օրն բարի անես... Կխաղար դուալ քամին մեջ դաշտերուն ու կելներ արևը։ Հեռու բլրի լանջին հովիվ Անդրոն է իր հոտով։

— Հովիվ Անդրո, է՞յ, հովիվ Անդրո...

Տատս մթնում է, տատս ստվերում է, ահա խավարում է արևը գենիթի վրա, իսկ Սուրենը լալիս է։

— Զընգըր, զընգըր, զընգըր, զընգըր...

Այդ — գյուղերից է։

Գյուղացիները խփում են պղինձներն իրար, որպեսզի արևը դուրս գա։

Սև յափունջին հագին՝ բլուրից բարձրանում է քեռիս։ Նա ժպտում է, իսկ նրա աչքերը սև՛ են։

. . . . . .

Կանգնել է մեր դռան վրա մի ուս կապակ։

— Բյուռ, բրաո...

Նա խմելու բան է ուզում։

Ես վազում եմ և ջուր եմ բերում նրան մի մեծ թասով։

Նա վերցնում է թասը, ջուրը թափում է գետին և թասը դժգոհությամբ տալիս է ինձ։

Ես վազում եմ և կաթ եմ բերում։
Նա թափում է կաթն էլ։
Ախ, դու, ո՛ւս բրատ, գինի է քո ուզածը...
Ես վազում եմ ու գինի եմ բերում։
Նա մի քիչ խմում է հայկական գինուց, հետո թռչում է իր սև ձիու մեջքին և ուրախ սրտով հեռանում։
— Ո՛ւս բրատ, բարի ճանապարհ...
— Խա՛-ռա՛-շո՛...

* * * * * * * * * * *

Այսօր Մայիսը դպրոցական հանդեսին արտասանեց.

Մեր Մարիամ բաջին մածուն էր մերել,
Մածուն էր մերել, մառան էր դրել,
Որ երեկոյան նոր փեսան որ գա՝
Մեր ձվածիզով մի լա՜վ պատիվ տա։

Փիսոն թաքուն ուտում է մածունը, իսկ Մարիամ բաջին հալածում է նրան։

Չէ, չէ, պատահում է ճիշտ հակառակը.— Մարիամ բաջին մերում է մածուն,— մեծ, սև ու շատ փիսոյին պատիվ անելու համար։ Փեսան մտնում է մառան ու թաքուն ուտում է մածունը։ Մարիամ բաջին փայտը ձեռքին հալածում է փեսին։— Ի՞նչ պատասխան տա Մարիամ բաջին փիսոյին... իսկ գող փեսան նստել է մի ծառի վրա ու ներողություն է խնդրում Մարիամ բաջուց։

...Փեսա, ինչ փեսա,— Մարիամ բաջին տեսնում է ծառի վրա գող փեսին՝ սև՝ փիսոյի գլխով, հետո երևում է փիսոն՝ փեսի գլխով, ֆասն էլ գլխին։

Փեսան ծառի վրայից «միաո՜ւս է անում, իսկ՝ փիսոն ասում է.

— Մարիամ բաջի, բեր մածունն ուտեմ...

* * * * * * * * * * *

Մայրս բաց է անում իր օժիտի սնդուկը։ Նրա մետաքսե շորերի վրա լայն, դեղին բծեր կան։ Մայրս սարսափահար փակում է սնդուկը և դուրս վազում։ Քիչ հետո սենյակը լցվում է դրացի կանանցով.

— Անուշ հանքամի շորեր սատանաներ տարեր են, հագեր, հարսանիք են գնացել, լաքոտել են...

— Ո՞ւ-ա՞, ո՞ւ-ա՞...— պարում են սատանաները պատուհանի տակ։

Իսկ Վարդանը բակից կանչում է։

— Գուրգե՛ն, ծիրան խասե՛, ծիրան խասե՛...

Վազում ենք այգի և հասնում ենք ամենից շուտ հասնող ծիրանի ծառի տակ։

Ջորացել է ծիրանի ծառը, իսկ խակ շալաղանները թափվել են գետնին...

. . . . × × . . . . . .

Պղնձե աքլոր։

Փայլուն իրից արևի անդրադարձումը պատի վրա,— դա պղնձե աքլորն է։

Պղնձե աքլորը խաղում է պատի վրա։

Նա՝ պղնձե աքլորը, հաղորդում է ծնողներին՝ երևանների կատարած հանցանքների մասին։

Գիշերները գալիս է պղնձե աքլորը, նստում է բարձիս վրա և իր պղնձե թևերով ծեծում է երեսս։

Լուսաբացին խփում են «գողի ժամ»-ի կոչնակները։

Այդ ժամին բոլոր գողերը պետք է վերջացնեն իրենց գործը և փախչեն տուն։

Իսկ պղնձե աքլորը շարունակում է ծեծել իմ երեսը պղնձե իր թևերով։

Ես ի՞նչ հանցանք եմ գործել որ։

Քեռուս սեղանի վրայից թոցրի մի պապիրոս ու տանիք ծլկվեցի։

Երդիկի տակ, մեծ տաշտի մեջ լողանում էր կենվոր Վարդանուշը։ Երբ նա ոտքի կանգնեց և ծածկվեց սպիտակ սավանով, դարձավ իսկական սպիտակ սատանա...

Իսկ տանիքի վրա փռված փշատենին բուրում է քարկ, բուրում է հաճելի և խեղդող։

Դեպի այգին ձգվող առուն սկսում է երգել։

— Գուրի՛ս,— կանչում է տատս ներքևից,— դո՞ր իմ Գուրիս, ջուրն էկավ, էրթա ածուներ ջրի...

Ես դնում եմ փորրիկ բահը ուսիս և վազում եմ դեպի այգին։

Տատս նստում է թմբի վրա, երգում է ու դուլպա է գործում։ Հետո հանկարծ հառաչում է ու հառաչելու պես ասում.

Ենկան ծառի նմա՞ն ես,
Պտուղ, դու քաղցրահա՞մ ես,
Բարի պտուղ, գույյալ ես,
Ասավածածին, միղա քեզ...

— Մեղա քեզ, միղա՞,— կրկնում է տատս տեքստից դուրս, իսկ ես ուզում եմ ջրել երրորդ, նանատրիսունի ածուն։

— Էդ ածուն մի ջրե,— ասում է տատս։

— Ինչի՞, մայրիկ։

Նա նայում է շուրջը և ցած ձայնով ասում է.

— Իտոր տակ զնոք կա թաղուկ...

...Մի հատ ծառ է բարձրանում գետնի տակից։ Նրա ճյուղերը սրեր են և հրացաններ, տերևները փամփուշտներ են, իսկ մրգերի փոխարեն կախվել են «սիմիթ-վիլսոններ», ախ, որքան «սիմիթ-վիլսոններ»...

. . . . . .

Ծառը կրակում է,— տրախկ-տրարա՛խկ, տրախկ-տրարա՛խկ։

— Տրախկ-տարարա՛խկ, տրախկ-տարարա՛խկ...

Ֆուրգո՞ն է գնում ճանապարհով, իսկ ես ֆուրգոնի մեջն եմ։

Ես բաց եմ անում տենդից ծանրացած աչքերս։

Դղրդալով առաջ է վազում ֆուրգոնը։ Ֆուրգոնը լցված է ինձ նման անտեր երեխաներով։

5. ԻԳԴԻՐՈՒԼ

Բարդիների փոքրիկ մի պուրակ, ծառերի տակ սպիտակ վրաններ. ահա այն, ինչ որ ինձ համար կոչվում է Իգդիր։

Ուրիշ ոչինչ, ուրիշ ոչ մի հուշ, ոչ տան մի քար, ոչ փողոցի մի կտոր։

Մեզ ֆուրգոններից վար իջեցրին և, նախքան տեղալորելը, շարեցին նկարելու համար։

Լուսանկարիչը կանգնեց կազմ ու պատրաստ։

— Խրեք, լացեք,— կարգադրեց կարգադրիչը։

Ինչ վերաբերում էր տխրելուն, այդ միանգամայն ավե-

լորդ կարգադրություն էր, որովհետև բոլորն էլ տխուր էին, իսկ գալով լալուն, այդ նույնքան դժվար էր, որքան ծիծաղելը, այս իսկ պատճառով ոչ ոք չարձագանքեց կարգադրիչի մարտական կոչին։

Կարգադրիչը ենթադրելով, որ մենք չենք հասկանում նրա լեզուն, դիմեց իլյուստրացիայի.

— Լացեք, լացեք, այ, այսպես, հը՛-հը՛-հը՛-հը՛...

Ու ցուցամատով ճմրթեց աչքը։

Բոլորն էլ գործի անցան։ Բարձրացավ մի անդուր երաժշտություն։ Նկարչական գործիքը չիկաց։ Բայց պատահեց մի զարմանալի բան.— ցուցադրական լացը փոխվեց իսկական լացի, և իզուր կարգադրիչը կարգադրում էր.

— Բավական է, բավական. էլ պետք չէ։

Մեր խումբը հանդիսավոր իր երաժշտությամբ դիմեց դեպի վրանները և դադարեցրեց լացը միայն այն ժամանակ, երբ սպիտակ հագած աղջիկները բերին տաք թեյ և սպիտակ բոքոն։

Անցանք միահամուռ հարձակման։

Երբ վերջացրինք առաջին բաժակը, սպիտակ հագած աղջիկներից մեկը հարցրեց.

— Էլի ածե՞մ...

Ես շատ զարմացա այս, որքան ինձ թվաց, անհարմար և միաժամանակ հետաքրքիր հարցի վրա։ Հավաքեցի իմ ուժերը և ասի.

— Ածի... տեսնենք։

Նա լցրեց իմ բաժակը։

Այսպես ուրեմն. ածել նշանակում է լցնել, իսկ ես կարծում էի...

Ես չեմ մոռանա այդ ածող օրիորդին։

6. ԱԾԻ՛Ր

Խոտի ներքնակների վրա քուն մտանք։ Որքան էի քնել, չգիտեմ. խոր քունս փոխվեց սովորական քնի, քունը՝ նիրհի, նիրհը՝ թեթև նիրհի ու որքան թեթևանում էի քնից, այնքան

ավելի պարզ և մոտիկ լսում էի երաժշտության օրորող հընչյուններ։

Երբ ավելի կենտրոնացա, իմացա, որ նվագում են վրաններից դուրս ծառերի տակ և նվագում են զուռնա-նաղարա, միայն ո՛ւր մեր երկրի աղմկալի զուռնա-նաղարան, ուր սրանք...

Աշխատելով որքան կարելի է՝ շիանգարել կողակիցներիս, ես զգուշությամբ սողացի դեպի վրանի դուռը և դուրս նայեցի։

Ծառերից լուսավորում էին նավթի կախված լամպեր, ծառերի տակ նստել էին... ահա նա, որը կարգադրեց, որ լաց լինենք, հետո սպիտակ հագած երկու օրիորդները, որոնցից մեկը՝ ածող, ինչ-որ երկարաճիտ կոշիկներով և կարճ խուզած բեղերով երիտասարդ, մի հաստ կին, որը շարունակ ծիծաղում էր և ուտում... նվագողները, ապա կապակի շորերով, փափախով և թրով տասներեք տարեկան մի տղա։

Նստել են ծալապատիկ, ուտում են, խմում ու քեֆ անում։

— Ածի՛ր,— գոռում է երիտասարդը՝ կարճ, սև փափախը աչքերին իջեցնելով. իսկ այն օրիորդը ոչինչ չի ածում։ Դրա փոխարեն մելամաղձոտ նվում է զուռնան ու ամբամբում դհոլը։ Իսկ երիտասարդը երգում է.

Երևան բաղ եմ առե՞,
Կամավոր յար եմ առե.
Ամբապետ Անդրանիկից
Խաչ ու խաչվառ եմ առե...

— Ածի՛ր,— գոռում է երիտասարդը, իսկ օրիորդը չի ածում։

Ես մի ծառ եմ ծիրանի,
Հին արմատ եմ անվանի՛,
Պտուղներս պատվական,
աման, աման,
Բոլոր մարդկանց պիտանի...
Հին ծառ եմ արևելյան...

Էլ չեմ հիշում...

— Ազգի կենաց, հին արմատ հայ ազգի...

Ամում են, իսկ օրիորդները կչկչում են, կչկչում են, ինչ-

պես տատս էր ասում, «կըր-կըր», բայց այնքան զուլալ, այնքան հստակ, որ զարմանալի։ Չէ՛, Վանում այդպիսի ծիծաղ ես չեմ լսել։

Օրիորդները ծիծաղում են նորից, վերջն էլ ասում,— «Օ՛յ...»— այդ օյ-ն էլ ինձ սարսափելի դուր է գալիս...

Հետո երիտասարդն է սկսում պարել. նա պարում է խելագարի պես և որքան այն ժամանակ թվաց ինձ՝ հաջող, զարմանալի հաջող և ճարպիկ. ապա նա հանեց ատրճանակը և տասը անգամ կրակեց օդի մեջ, երաժշտության համաչափ տակտով։

Օրիորդները ճչում են, իսկ պայթյուններն արձագանքվում են շրջակայքում։

7. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայրիկանց տան վերի օդի հենց ճակատին կախված էր էջմիածնի մեծադիր նկարը։ Ամեն անգամ զարթնելիս, անկողնի միջից ես երկար-երկար դիտել եմ այդ նկարը և պատկերացրել նրա փառահեղ կառուցվածքը։ Ինձ այնպես էր թվում, որ վանքը, վանքի բակը, շրջակայքը, ամեն ինչ, ամեն ինչ այնտեղ սպիտակ մարմարիոնից է։ Եվ երբ որբերով բեռնավորված ֆուրգոնները շարժվեցին առաջ, երբ ֆուրգոնից-ֆուրգոն տարածվեց այն լուրը, որ մեզ էջմիածին են տանում, ես ուրախությունից մոռացա ամեն ինչ և մինչև անգամ մրտբիս մեջ սկսեցի երգել Վանում սովորած էջմիածնական մի երգ...

Քեզի մեռնեմ, էջմիածին,
Նանի, նանի, նանի ջան...

Ի՞նչ կապ կար էջմիածնի և նանի մեջ, չգիտեմ. առհասարակ այդ երգը սովորեցնող երգեցողության ուսուցիչը արտառոց երգեր էր սովորեցնում մեզ։ Այդ նա էր, որ մինչև հիմա ինձ անծանոթ լեզվով սովորեցրեց մի երգ, որի յուրաքանչյուր տան վերջում կրկնվում էր.

Յուփայ-դիյայ-դիյայ-դա
Յուփայդի-յուփայդա,
Յուփայ-դիյայ-դիյայ-դա
Յուփայ-դիյայ-դա...

Հետո սատանան գիտե, թե ինչ...

Հետո ես հիշեցի նույն այդ ուսուցչի մի ուրիշ արտառոց երգը՝ «Երեք ագռավ ծառի վրա», որի յուրաքանչյուր տողավերջում կրկնվում էր.

Ս՞, Բիլի-մակի-մակա...

Այս հիշողություններն ու էջմիածինը տեսնելու հեռանկարը զվարթություն պատճառեցին ինձ։ Ես մինչև անգամ կատակելու ցանկություն ունեցա. նայեցի կողքիս նստած տղային. հապիվ լիներ նա 12—13 տարեկան, թուխ դեմքով և սև մազերով, փոքրիկ, սև և անփայլ աչքերով այդ տղան զարմանալի մոտիկ և հարազատ թվաց ինձ. մինչև անգամ ինձ թվաց, որ ես նրա անունն էլ գիտեմ.

— Բիլի-մակի...

Նա նայեց ինձ և ժպտաց վախկոտ ժպիտով։

— Բիլի-մակի,— կրկնեցի ես։

— Ես Բիլի-մակ չեմ,— կամաց և հայցող ձայնով առարկեց նա, կարծես ցավելով, որ ուրիշ անուն ունի։

— Ապա ի՞նչ է քո անունը...

Նա կենտրոնացավ, հետո լարվեց ու հանկարծ սկսեց լաց լինել։

— Մոռացել եմ։

— Ռուբե՞ն, Խորե՞ն, Վահա՞ն, Վարդա՞ն, Վազգե՞ն...

— Չէ՞...

Էլի մի քանի անուն տվի։

— Չէ՞...

Ես սկսեցի նրան մխիթարել, վեր հանելով Բիլի-մակի անվան բարեմասնություններն ու առավելությունները. ես մի տեսակ շար խնդություն էի զգում դեպի նա, որը մոռացել է իր անունը, և զվարճանում էի, որ նրան կպցնում եմ մի ծաղրական անուն։ Երբ մենք էջմիածին հասանք, երբ նախքան մեզ տեղավորելը արձանագրեցին բոլորի անունները, իմ փոքրիկ հարևանը պատասխանեց «ի՞նչ է քո անունը» հարցին՝ տխրությամբ և թախիծով.

— Բիլի...

— Եվրոպական անուն ունես, փոքրիկ,— նկատեց արձանագրողը, որը սև ակնոցով, նիհար և զարմանալի երկար մի կին էր։

— Հայրանո՞ւնը,— շարունակեց արձանագրողը։

— Մակ,— մեքենաբար արտասանեց Բիլին։

— Ա՛զգդ...

— Խայ եմ...

Դուրս եկավ այսպես.

Բիլի Մակ Խայեմ...

Ու ամեն անգամ, երբ ներկա-բացակա էին անում, մի առանձին հանդիսավորությամբ հնչում էր նրա անունը.

Բիլի Մակ Խայեմ...

Նա հլու և հնազանդ պատասխանում էր.

— Ներկա...

— Բիլի-Մակ-Խայեմ,— ինչ-որ ֆրանս նորվեգական հյուպատոս, այնպես չէ՞...

. . . . . .

Էջմիածին։

Ես երբեք, երբեք իմ կյանքում չեմ կրել այնպիսի հիասթափություն, ինչպես կրեցի այն ժամանակ, երբ տեսա Էջմիածնի խունացած դեմքը։

Շոգ։ Փոշի։ Կեղտոտություն։ Վանքի խունացած սիլուետը։ Իսկ պարիսպների տակ իրար վրա թափած գաղթականություն։

Ճեմարանի բակի ծառերի տակ մեզ շարեցին ծալապատիկ և ճաշ տվին։

Բիլի Մակը կծկվեց մոտս։ Ես մի անգամ էլ հիշեցի մայրիկանց տան վերի օդի պատից կախված Էջմիածնի փառահեղ նկարը, մի անգամ էլ նայեցի Բիլի Մակի վրա, և սիրտս լցվեց անասելի դառնությամբ։

Ճաշից հետո լուր տարածվեց, որ բոլոր որբերին տանելու են բաղնիք, հին շորերը ոչնչացնելու և նոր շորեր տալու։

Այդպես էլ եղավ։

Այստեղ ես շատ վնասվեցի, որովհետև ես կորցրի իմ նոր և վայելուչ շորերը և բոլորի նման հագա ծաղկավոր չթից կարած մի շապիկ, մի վարտիք, իսկ գլխիս կապեցի մի ծաղ-

կավոր թաշկինակ։ Ուրիշ ոչինչ։ Այլ պայմաններում ես կամաչեի այդ դրությամբ՝ մի տակ շապիկ-վարտիքով և բորիկ ոտներով ման գալ, բայց ստեղծված կացությունը թույլ չէր տալիս զբաղվել նման կենցաղային մանրուքներով։

Ինձ մոտեցավ ինձնից մեծ, հանդուգն աչքերով մի տղա և մի կողմ տարավ։ Զգուշությամբ, շուրջը նայելով, նա շապիկի տակից հանեց մի ծաղկավոր թաշկինակ և ցույց տվեց.

— Թռցուցի... շորերդ ինչի՞ տվիր։

— Ի՛նչ անի... առին։

— Ը՛ը, ը՛ը, ը՛ը... թաժա ին... գնա ուզի, տանենք ծախենք... էս ալնախ կուտամ քեզ։

— Չեն տա։

— Կուտան։ Աստա մորքուր ունեմ, տանեմ տամ ինոր, խեղճ ի։

— Չեն տա,— պնդեցի ես, զգալով, որ այդ իմ ուժերից վեր է...

— Ես տեր կելնեմ. դու սուս կաց... խա՞։

— Խա՛։

Նա ներս մտավ բաղնիք և հինգ րոպե հետո դուրս եկավ արցունքները սրբելով, ձեռքին իմ շորերը։ Մոտեցավ, շարությամբ ծիծաղեց արտասուքների միջից.

— Զուր լաց չելա՝ շուվին շանորդիք... արեւ։

Ես հետևեցի նրան։

Մենք դուրս եկանք վանքի դարբասից, անցանք փողոց և մտանք առաջին պատահած խանութը, ֆիշ հետո մենք նստեցինք փողոցի մի քարի վրա, քանդեցինք մեր գլխի թաշկինակները և բաժանեցինք 300 հատ կոնֆետ մեր մեջ։

— Քո անունն ի՞նչ ի,— հարցրի ես նրան՝ լցված անսահման երախտագիտությամբ.

— Կուշո... քո՞։

— Գուրգեն...

Մենք մտերմացանք. նա դարձավ իմ խնամատարն ու շահերի պաշտպանը։ Ես իմ բաժին կոնֆետից մաս հանեցի նաև Բիլի-Մակին, որի համար և արժանացա Կուշոյի հանդիմանությանը։

Ես խոսք չգտա արդարանալու։

8. ՄԱՀ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ամեն առավոտ շրջիկ դագաղ-ֆուրգոնը շրջում էր գաղթականների մեջ և հավաքում էր մեռածներին։ Զորանոցային խոհանոց դիմող հում և վատ մսով բեռնավորված ֆուրգոնների նման մեռելատար ֆուրգոնները առաջ էին շարժվում տեղ-տեղ կանգնելով.

— Մեռել կա՞...

Մեռել չունեցողներն անիծում էին ծերունի ֆուրգոնչուն, իսկ ունեցողներից ոմանք լալով, ոմանք քարացած սրտով և դեմքով օգնում էին նրան՝ դիակը, հաճախ դիակները դիակույտի վրա բարձրացնելու համար։ Ամեն մեռելատեր հրճվում էր, որ իր մեռելը չէր պառկում դիակների տակ, բայց լեցվում էր ֆուրգոնը մինչև բերան, և նրա կողքերից կախվում էին ճռճվող ձեռներ, ոտներ, գլուխներ։

Պատահում էր, որ ուժեղ ցնցումից մի դիակ ներքև էր շպրտվում, և ծերունի ֆուրգոնչին չէր նկատում։ Այդ միջոցին մաքրության անզոր հսկիչները կանչում էին.

— Ադա, մեռել վեր գցիր, է՛յ...

Կանգնեցնում էր ֆուրգոնը ծերունին, դժգոհ մրթմրթում էր ինչ-որ, բարձրացնում էր դիակը և խցկում ֆուրգոնի ճաղերի հետև, այնպես, որ երկրորդ անգամ չընկնի ներքև։

Վերից կրակ էր թափում արևը։ Չէր շարժվում և ոչ մի տերև, ու հնամյա վանքի պատերի ու օգոստոսյան արևի տակ մեռնում էր մի ամբողջ ժողովուրդ։

Կեսօրին կապտում էին Մասիսները, ու շոգը դառնում էր ավելի ահռելի։

Շրջում է մահը, իսկ նրա հետևից՝ դագաղ-ֆուրգոնը։ Նիհար ձիերը գլխիկոր և հնազանդ տանում են իրենց զարհուրելի բեռը վանքի պատերից դուրս, դեպի բաց դաշտը։ Այնտեղ ամեն օր փորվում է մի մեծ սենյակի չափ փոս։ Գերեզմանափորները ընդունում են ֆուրգոնները և սկսում են դատարկել։ Շպրտում են փոսի մեջ իրար վրա ծեր, կին, աղջիկ, տղա, ծծկեր երեխաներ. ընկնում են նրանք կողքի, փորի, կռնակի վրա, բաց, քարացած աչքերով նայում են նրանք, մինչև գալիս են նորեր և ծածկում նրանց մի նոր շերտով։

Մի ծերունի ընկավ դեղին, ցցված թեղերով, նրան ծածկեց սև, երկար մազերով մի երիտասարդ աղջիկ. ծաղրածու դեմքով, անմիտ ժպիտով, մի տղա թռավ և պառկեց կոնակի վրա. նա կարծես մեռած չէր և թռավ իր կամքով, մի կողմից՝ գերեզմանափորին ձեռք առնելու, մյուս կողմից՝ սառուցելու համար, թե ինչպես կարող է այնտեղ զգալ իրեն մեռելը։ Բայց նա մնում է անշարժ, նրա ժպտացող դեմքը դառնում է ավելի սարսափելի և նա դառնում է ավելի մեռել, քան մյուսները, որոնք իսկական մեռելներ են, իսկական մեռելներ։

Հետո սկսում են ծածկել արևի տակ շորացած հողով. ծածկում են մինչև կեսօր. թռչում է հողը, ցանվում է դիակների երեսներին ու թվում է, որ ահա, ահա նրանք կարող են փոշտալ։ Բայց նրանք չեն փոշտում, և ծածկվում են, անընդհատ ծածկվում։ Երբ հողը գետնից կես վերշոկ բարձրանում է, բահերի հակառակ կողմով տափում են հողը և գրեթե խնամքով հարթում։ Ապա թե նրանցից մեկը բահի կոթով մի մեծ խաչ է քաշում այդ վիթխարի շիրմի վրա, և նրանք, առանց մի խոսք փոխանակելու, սկսում են նոր փոսեր փորել։

Դատարկված ֆուրգոն-դագաղը դղրդալով ներս է մտնում վանքի պարիսպներից և հազարավոր աչքեր նայում են նրան բութ սարսափով.

— Մեռել կա՞...

Բոլորը կամավոր կերպով չեն հանձնում իրենց մեռելները. շատերը դիմադրում են, ուրիշները վերմակների տակ թաքցնում, մինչև որ նեխման հոտը բռնի շրջակայքը, մինչև խուղարկություն կատարելը։ Երեք օր սպահված 23 տարեկան որդու դիակից կախվել է մայրը, ճչում է չի թողնում, որ սանիտարները տանեն իր որդուն։ Քաշքշում են դիակի շորերից՝ մի կողմից մայրը, մի կողմից՝ նրանք։ Սանիտարներից մեկը ջղայնացած բռնում է դիակի ոտից և ձգում դեպի իրեն։ Բայց այդ միջոցին սառը քրտինքը պատում է նրա ճակատը. նա զգում է, որ եթե մի քիչ էլ ուժով ձգեր, դիակի ոտը պիտի անջատվեր մարմնից և մնար իր ձեռքում։

Խելացնոր մորը մի կողմի վրա են քաշում և դիակը, որպես բացառիկ պատիվ, պատգարակով տանում են ֆուրգոնին հանձնելու։

— Մի՛ տանեք.— ճչում է մայրը,— ես ինոր երկիր կը տանի, մեր սարերու ջուր կը խմցուցի, կը սաղցուցի... մի՛ տանեք...

...Եկավ Հովհաննես Թումանյանը և շրջապատեց իրեն որբերով. ես նրան գիտեի. այդ նա է, որը գրել է «Մի կաթիլ մեղրը», «Շոանն ու կատուն»։ Նա հագել էր սպիտակ շորեր և դրել էր կեպի։ Կեռ քթով, սպիտակ ընչացքով, խաղաղ դեմքով կանգնեց նա, լուռ նայեց բոլորին, հետո նայեց հեռու և հեռացավ։

Հետագայում, երբ ես կարդացի նրա «Հոգեհանգիստ»-ը, ինձ թվաց, որ նա հենց այդ օրը, մեզնից հեռանալուց հետո գրեց այն։

...Կապտում են Մասիսները ավելի և ավելի, ու մահու թևերով իջնում է գիշերը վանքի և աշխարհի վրա։

9. ԿՈՒՇՈՆ ԵՎ ԲԻԼԻՆ

Փայլուն, քառակուսի, սպիտակ քարերով սալարկված մի հսկայական դահլիճ— այդ նախկին ճեմարանի ճաշարանն էր և մեր ներկա ննջարանը. մի տակ շապիկ-վարտիքով, կողք-կողքի ընկնում էինք պաղ սալարկի վրա և քնում, սղմված իրար, որպեսզի չմրսենք։

Գիշերները ցուրտ էր լինում։

Մոտ հազար երեխա։

Առաջին իսկ գիշերվանից ստեղծվեցին անհարկի բարդություններ։ Երեխաների 50 տոկոսը ամեն գիշեր ամենայն բարեխղճությամբ թացում էր տակը, իսկ շատերը մինչև անգամ ավելի հեռու էին գնում...

Հոսում էր ջուրը, լցանում բոլորի տակ, և անմեղներն ստիպված էին բաժանելու թացության մեջ պառկելու և հարակից բարդությունների ողջ բավականությունը, մյուսների հետ համահավասար։

Կուշոն գործի անցավ։ Նա աղմկեց, գոռգոռաց, մինչև կարողացավ անժխտելի փաստերով ապացուցել, որ մեր կողքին պառկողներից հինգը հիվանդ են։

Նրանց տարան Հիվանդանոց, որից հետո Կուշոն ապահովեց մի փոքրիկ անկյուն։ Կուշոն առաջարկեց Բիլուն էլ մասնակից դարձնել մեր նոր հարմարությանը ի զարմանս ինձ, որովհետև այդ նույն Կուշոն էր, որը հանդիմանեց ինձ նրա համար, որ ես խեղճ Բիլուն բաժին հանեցի իմ կոնֆետներից։

Բիլուն բերինք։

Անցավ երեք օր։ Բիլին պառկում էր մեջտեղ և գանգատվում էր, որ Կուշոն իրեն ամեն գիշեր խտուտ է տալիս և չի թողնում, որ հանգիստ քնի։ Իսկ առավոտյան, երբ զարթնում էինք և զգում, որ սալաքարը չոր է, մեղ զգում էինք մեստաքսե անկողիններում պառկողների չափ երջանիկ։

Բիլին գունատվում էր օր-օրին։

Չորրորդ գիշերը ես զարթնեցի Բիլու լացի ձայնից։

— Բիլի, Բիլի Մակի, ինչի՞ կուլաս...

— Թացեր եմ...

Թացել էր ոչ միայն իրեն, այլև մեզ։

Ես շատ զարմացա, որ Կուշոն գիշերը չզարթնեց, իսկ մյուս օրը դժգոհության ոչ մի խոսք չասաց։ Կուշոն անհասկանալիորեն հոգատար էր դարձել և ներողամիտ դեպի Բիլին։ Նա միայն ոտից գլուխ չափեց Բիլուն և ասաց.

— Ասեմ, քեզ Հիվանդանոց տանեն... բոշ ես։

Բիլին չառարկեց։ Կուշոյին հաջողվեց նրան Հիվանդանոց ուղարկել տալ։

. . . . . .

Երեկո էր։

Ես և Կուշոն նստել էինք Գամառ-Քաթիպայի արձանի տակ և ցրված նայում էինք մեր շուրջը։ Ես արդեն մի քանի անգամ կարդացել էի բանաստեղծի կտակը և նկատում էի, որ այն հանգամանքը, որ ես կարդալ գիտեմ, իսկ նա ոչ, իմ վարկը որոշ չափով բարձրացրել էր նրա աչքում։

— Բիլին գնաց,— ցրված ասաց Կուշոն և ձեռքի ճիպոտով սկսեց գետինը խազմզել։

Ես նայեցի նրան և առաջին անգամ նկատեցի, որ նրա ճակատի վրա մի սպի կա և որ ընդհանրապես նրա դեմքի արտահայտությունը խիստ է և երկյուղալի։

Զգիտեմ ինչու, խռանին հիշեցի։

Հետո նա ասաց.

— Բիլին գնաց, մեկ-երկու օրից մենք էլ կերթանք։ Ես էլ կհիվանդանամ, դու էլ, զրմենն էլ...

Այնքան համոզիչ հնչեցին նրա խոսքերը, որ ինձ թվաց, որ ես արդեն հիվանդ եմ, և որ հարկավոր է ինձ էլ տանել Բիլու մոտ։

— Ի՞նչ անենք,— հուսահատ հարցրի ես։

— Փախնենք։

— Դո՞ր։

— Բազատ։

— Բազա՞ռ։

— Խա՞ռ։

— Էնտեղ ի՞նչ անենք։

— Կապրենք։

— Ի՞նչ ուտենք։

— Էնքա՜ն։

— Դո՞ր քնենք։

— Ըստեղի պես սալի վերեն չենք քնե... հիվանդանա...

— Ապա Բիլի՞ն։

Կուշոն ընկավ մտածմունքի մեջ։

Ես ուրախացա, որ կարողացա իմ առարկությամբ ետ կանգնեցնել նրան և ինձ՝ որբանոցից փախչելու վտանգավոր ձեռնարկությունից։

Կուշոն հեռացավ։ Անցավ բավական ժամանակ։ Հնչեց իրիկվա թեյի զանգը։ Վերջապես երևաց Կուշոն, Բիլին հետևից։

Ես իմ աչքերին չհավատացի։

— Ահա՛ն Բիլին,— ասաց Կուշոն, ցույց տալով Բիլու վրա այնպես, որ կարծես ոչ թե մարդ, այլ սեղան կամ աթոռ էր բերածը։

Բիլին նայեց ինձ և խեղճ ու կրակ ժպտաց։

— Բիլի, փախնե՞նք,— հարցրեցի ես։

— Ես չեմ իգա։

— Կուգա՜ս,— ատամների միջից մռմռաց Կուշոն, և նրա աչքերը կիսախավարի մեջ բարկությունից փայլեցին։

— Կուգա՞ս։

— Չեմ իգա,— կրկնեց Բիլին, և արցունքները հեղեղի պես թափվեցին նրա գունատ այտերի վրա։

— Ես էլ չեմ իգա,— սրտապնդված Բիլու արցունքներից, ասացի ես։

Կուշոն մթնեց։

— Մարդ չեք դուք, թուլա եք, ճիժ... գնացեք մտեք օրի-որդի... գիշերներն էլ թացեք տակերդ։ Մի օր էլ թալեն ֆուրգոնի մեջ, տանեն թալեն փոս... որդերն ուտեն...

Ասաց ու գնաց, դուրս եկավ դարբասից և լուծվեց մթության մեջ։

Ես և Բիլին նայեցինք իրար երեսի։

Մենք իրար կարդացինք։

Մի բոպե երկուսս էլ զղջացինք, որ չգնացինք։ Ես հիշեցի մեռելների փոսը և մի սարսուռ անցավ մարմնովս։ Բայց երբ նայեցի ցանկապատից դուրս, փողոցի խավարին, ավելի գրավիչ չթվաց ինձ փողոցի հեռանկարը, քան մեռելների փոսը։

Մենք քնում ենք արձանի տակ։

10. ՆՈՐԻՑ ԲԻԼԻՆ

Ես լսում եմ մի զսպված հեկեկանք և աչքերս բացում եմ, Նստել է Բիլին արձանի մոտ, հենել է գլուխը նրա պատվանդանին և լալիս է։

— Ինչո՞ւ ես լալիս, Բիլի...

Փայլում է բարակ մի լուսին, նայում են աստղերը դեղին աչքերով, հետո ոստոստում են նրանք տեղում.— մի աստղ սուրաց և անհետացավ։

— Ինչո՞ւ ես լալիս, Բիլի...

Քնել են հիմա Մասիսներից այս կողմ տասնյակ հազարավոր որքեր։ Ժպտում են նրանք ու գիշերվա մեջ բացվել են տասնյակ հազարավոր ժպիտներ։ Երազում տասնյակ հազարավոր մայրեր գուրգուրում են տասնյակ հազարավոր որքերին...

— Այդ ինչո՞ւ ես լալիս, Բիլի...

Տեսար— մի որբ ճշաց, ճշաց պիշերահավի պես սուր և հատու։ Վարած սարսափներից մի կտոր՝ սև դանակի պես կտրեց նրա լուսավոր քունը։ Ճշաց նա և լռեց։ Տանջակ հազարավոր մեռած մայրեր թարթեցին իրենց աչքերը և ուզեցին բարձրանալ ու մեռելների անծայրածիր թափորով գալ նրան օգնության։

— Բիլի, դու ո՞րտեղացի ես։

— Արտամետա...

— Ուստա լող տվողներ Արտամետից շուր Աղթամար լողալով կերթին, չէ՞, Բիլի։

— Չեմ գիտե...

— Կերթին, կերթին, Բիլի։

— Տովու վերեն գյամի կեր...

— Է՞լ...

— Վանք։

— Է՞լ...

— Քումբեթ։

— Է՞լ...

— Է՛... —տրտնեղած ասում է Բիլին ու ժպտում է։

Քիչ հետո մենք շատախոսում ենք ամենաուրախ բաների մասին։ Բիլին այնքան զվարթացավ, որ մինչև անգամ սկսեց շնիկի պես հաչել, և նրա ձայնի ամենափոքր նմանությունը մեզ անասելի հրճվանք էր պատճառում։

Աստղերը գունատվեցին։

Ես սկսեցի երգել մի երգ. այդ երգը ես սովորել էի Հայոց-ձորի գյուղացիներից։

Բարի լուսու աստղն էրևաց,
Աղոթարանն դռներն իրաց,
Բարով բացվեր լուս-աղոթրան.
Լծեմ սարվածք,
Էրթամ գութան։
Գութնի թախրամ նմուշ-նմուշ,
Չկեր վաստակ չանգ էն անուշ,
Գութան չելներ, աշխարհն ի՞նչ էր,
Աշխարի շեն վեր գութնին էր...

Փչեց լուսարացի ցուրտ հովը, ու մենք ոտքի կանգնեցինք։

— Բիլի, արե էրթանք բաղառ։

— Էրթանք,— ասաց Բիլին ու իր փոքրիկ թփթիկները դրեց իմ ձեռների մեջ։

11. ՓՈՂՈՑ

Այդպես ուրեմն, մենք փողոցայիններ ենք։

Մենք միացանք որբանոցից փախած ուրիշ որբերի և կազմեցինք մի 10—12 հոգանոց խումբ։

Թռցնում էինք ձմերուկ, հաց, ինչ-որ հանդիպեր, իսկ գիշերներն հոգնած մեր արշավանքներից և տպավորություններից, հոգնած ու ջարդված, քնում էինք փակված խանութների տախտակների վրա։

Ես պարզապես գազանացել էի։ Եվ մինչև անգամ մոռացել էի, թե ո՞վ եմ ես, որտեղի՞ց եմ եկել, ինչպե՞ս ընկա փողոց. այս վերջին հանգամանքն այնքան հասարակ էր թվում ինձ, որ կարծես ես ծնվել էի փողոցում, պիտի ապրեի փողոցում ու փողոցում էլ կնքեի իմ մահկանացուն։

Կուշտն չկար, անհետացել էր, և այս հանգամանքը Բիլուն ուրախություն էր պատճառում։ Նա չէր բաժանվում ինձնից, կատարում էր իմ ցանկությունները և դրա փոխարեն վայելում էր իմ հովանավորությունը։

Ես շուտով կարողացա արժանանալ մեր խմբապետի բարեհաճ ուշադրությանը։ Իսկ երբ նա իմացավ, որ ես կարդալ գիտեմ, ինձ ազատեց թռցնելու սև աշխատանքից և ինձ էր հանձնարարում լուծել մանր-մունր կոնֆլիկտներ և թյուրիմացություններ, որոնք թեև անպակաս ու չնչին՝ բայց կենսական էին և խռովահույզ։

Ես կամաց-կամաց վերածվեցի մի տեսակ հաշտարար դատավորի։

Մեր խմբում կար մի տղա, որը կոչվում էր Սև-Սահակ, մի վերին աստիճանի անհաջողակ ու խեղճ տղա, Ջեղավ, որ նա մի անգամ ավարի գնար և արյունլվա ու ծեծված

չվերադառնար։ Եվ երբ խմբապետը նրան ուղարկում էր մի որևէ հանձնարարության, պարզապես ասում էր.

— Սև-Սահակ, էսօր քո ծեծվելու օրն է... յալլա՛։

Ու Սև-Սահակը հուր ու հնազանդ գնում էր կատարելու իր պարտականությունը։

Մի անգամ նա վերադարձավ առանց ծեծվելու, այնպես, ինչպես գնացել էր, բայց վերադարձավ առանց ավարի։ Խմբապետ Սենոն վերականգնեց խախտված օրինականությունը և ծեծեց նրան ոչ նվազ հաջողությամբ։

Խմբի տղաները դժգոհեցին։ Սև-Սահակը դառնագին արտասվեց. բանը հասավ այնտեղ, որ դժգոհությունը վերածվեց ափաշկարա բողոքի տիրող ղեկավարության դեմ, Ես չեմ մոռանա Սև-Սահակի լացը. ինչ-որ հերոսություն և հերոսական զոհի բան կար նրա արտասուքների մեջ։ Իսկ խմբապետ Սենոն խեղճացել էր, ահավո՛ր Սենոն, որի խոսքը օրենք էր բոլորի համար, այժմ նայում էր մեզ երկչոտ ու խոստափուկ։

Եվ երբ կոմիկ Սիկոն առաջարկեց Զարգանդին՝ միասին գնալ բոստաններից բան-ման թռցնելու, Զարգանդը ձեռքը խփեց իր մերկ փորին և ասաց.

— Թող Սենոն էրթա...

Ազդանշանը տրված էր։ Տապալվեց Սենոյի ղեկավարությունը, և նրան հաջորդեց Զարգանդը։

Սենոն առանց մի բառ արտասանելու հեռացավ։ Տասնհինգ րոպե հետո վերադարձավ նա ծեծված, արյունահոս քթով, մի ամբողջ սպիտակ բոքոն ձեռքին։

Ուրախությունն անսահման էր։

Սենոն չարտասանեց ոչ մի բառ, ոչ իսկ վերաբերմունքի մի նշույլ ցույց տվեց դեպի մեր խանդավառությունը։ Նստեց մեզ հետ, շապիկի փեշով սրբեց արյունոտ քիթը և սկսեց լուռ ծամել։

Նրա այս ժեստը մեծ տպավորություն թողեց մեզ վրա։ «Ճաշը» անցավ հանդիսավոր լռությամբ։ Եվ երբ ճաշից հետո Սենոն հեռացավ մոտակա առվի ջրով լվացվելու, ես, որպես իրավախորհրդատու, առաջարկեցի, որ խմբի ղեկա-

վարության գործը տանեն Սնոն ու Զաքլանդը հավասար իրավունքներով և պարտականություններով։

Այս առաջարկությունն անցավ միաձայն, և մենք միապետությունից անցանք դեմոկրատիկ կարգերի։

12. ԿՈՒՇՈՆ ՀԱՅՏՆՎՈՒՄ Է

Երեկաց նա փողոցի ծայրից, մաքուր շորեր հագած, սև, փայլուն կոշիկներով, փափախը աջ հոնքի վրա ծռած, ձեռքին դամշի, շուրջը նայելով, ըստ երևույթին սուլելով։

— Կուշո։։

Նա ինձ նկատեց և մոտեցավ հասարակ և անժպիտ։

— Ի՞նչ կանես։

— Հեշ, որքանոցից փախանք։

— Բիլին դո՞ր է...

— Բոստաններ։ Դու դո՞ր ես։

— Էրևան գնացի, էկա... էսօր Բաքու կերթամ։

Խոսում է ու շարունակ նայում է շուրջը։

— Էդ շորեր ո՞րտեղից,— հարցնում եմ ես։

— Տես...— ու նա զգուշությամբ ցույց է տալիս թղթադրամների բավական հաստ դարս։

— Որտեղի՞ց է...

— Գնանք,— ասում է նա,— Բիլուն գտնենք։

— Մենք խումբ ունենք,— ասում եմ ես, խոսքը մի կերպ շուռ տալու համար։

— Խո՞ւմբ։

— Խա՛...

— Քանի՞ հոգի...

— Տասներկու։

Մտածում է։

— Ձեր տեղ ո՞րտեղ է...

Ես ցույց եմ տալիս մեր տեղը։

Կուշոն առանց ցտեսություն ասելու գնաց, համարյա թե փախավ, և այդ շափազանց տարօրինակ տպավորություն թողեց ինձ վրա։

Ես խմբին զեկուցեցի Կուշոյի մասին։ Խմբի երևակայությունը վառվեց։ Որտեղի՞ց է հարստացել, ինչո՞ւ է գնում Բաքու, Կուշոն, շապիկ-վարտիքով Կուշոն, բախտակից Կուշոն, նա, որն ամենից շատ կարող է լինել Սենո, կամ առնվազն Զարզանդ, ինչպե՞ս կարողացավ տիրանալ այդ բախտին։

Բիլին կարծես չէր լսում, Բիլին անտարբեր էր։

Եվ երբ երեկոյան մենք՝ իմ և Լեմշիկի ձեռներով թոցրած ծիրանները ոչնչացնելուց հետո համառորեն քնելու նշաններ էինք ցույց տալիս, եկավ Կուշոն։

— Գուրգեն,— ասաց Կուշոն,— խումբն է՞ս ի...

— Էս ի։

— Կերեք։

Ու նա գրպաններից հանեց զանազան կոնֆետներ, մի լիմոն, որը չնայած ինքը կերավ, բայց ինձ վրա մեծ տպավորություն թողեց նրա առկայությունը... այնուհետև մի քանի լավաշ, մի կտոր պանիր, որտեղից որտեղ մի ներկած ձու...

Իսկ ամենից զարմանալին այն էր, որ Կուշոն ոչ մի վերաբերմունք ցույց չտվեց Բիլու հանդեպ։ Նա համարյա թե նրան չնկատեց։ Գալով Բիլուն, նա, երբ տեսավ Կուշոյին, խռովկանի պես քաշվեց մի քարի վրա և երեսը շուռ տվեց, իսկ երբ նկատեց Կուշոյի սառնությունը դեպի իր ներկայությունը, կամաց-կամաց սկսեց ճշտել իր դիրքը հանդեպ Կուշոյի բերած բարիքները։ Իսկ երբ Կուշոն համառորեն շարունակեց նրան չնկատել, Բիլին անցավ իր մասնագիտությանը. նա սկսեց հաշել և դրանով արժանացավ խմբի լիաթոք ծիծաղին և Կուշոյի ներողամիտ, զուսպ ժպիտին։

Փոշեհագ իրիկուն։

13. . . . . , .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

14. «ՇԸՄԸՆԴԸՖԸՌ»

Թռչում է գնացքը Արարատյան դաշտով։

Առաջին տպավորությունը, որ ստացա ես գնացքից, դա մի անանուն սարսափ էր։

Ու երբ տագնապով ճչաց նա, թվաց ինձ գնացքը մի խելագարված հրեշ, մի վիթխարի զարհուրանք. իսկ երբ շարժվեց տեղից, ես զգացի, որ նրա աղմուկի նման իմ կյանքում աղմուկ չեմ լսել, չեմ լսել։

Շըմընդըֆը՛ռ...

...Վանքի բլրի տակ, պուրակի եզերքին, ձգվում է փշատենիներով եզերված մի ճանապարհ։

Հաղեցել է օդը փշատենիների բույրով, լավում է առվի խոխոջը, հետո բզզում են ինչ-որ բզեզներ, կատաղած խմբով են երգում նրանք և նրանց այրբենարանում երկու տառ կա միայն, երկու տառ.

— Ժ-զ...

— Զ-ժ...

— ժժժժժ...

— Զզզզ...

Պառկեմ հիմա խոտերի վրա ու նայեմ ահա այն մի կտոր երկնքի կապույտին.

— Օհո-հո-հո՛...

Դանդաղ ճռռոցով, արտերի ճամփով մի սայլ է գալիս։

Ճոնչում է սայլը, բարկ բուրում են փշատենիները, բզեզները շարունակում են սերտել իրենց դասը, իսկ առուն խոխոջում է։

Առվի եզերքին, հենց ջրերի մեջ, ծաղկել են սպիտակ ջրաշուշաններ։

Ես ձգվում եմ թմբից ներքև, պարզվում իրանով, որպեսզի կարողանամ քաղել ահա այն մեծ ջրաշուշանը,

Ես կորցնում եմ իմ հավասարակշռությունը, թրմփում եմ ջրի մեջ, և լցվում է ականջներիս ու ողջ էությանս մեջ մի սարսափելի աղմուկ։

Հետո զգում եմ, որ մեկը բարձրացնում է ինձ։

Ես բաց եմ անում աչքերս։

Սելվորն է։ Նա կանգնեցրել է սայլը կամուրջի վրա։ սայլի մեջ նստած նրա 14—15 տարեկան աղջիկը սարսափահար ճչում է և ինչ-որ բան է ասում։

Աղջիկը փեշերով շորացնում է իմ գլուխը, դողացող մատներով քանդում է կոճակները, և ես անձնատուր եմ լինում նրան, նրա հոգատար ձեռներին։

Իսկ սայլը գնում է։

Շնորհակալություն, փշատենի, և ձեզ, բզեզներ, շնորհակալություն, շնորհակալություն և քեզ, սպիտակ ջրաշուշան, որովհետև դու երջանկացրիր ինձ այսօր։

Վաղը ես ձեզ ավելի զգուշությամբ կքաղեմ ու ձեզնով կզարդարեմ աստվածամոր պատկերը։

... Կամաց գնա, գնացք, գուցե ահա այս առվի մեջ մի տղա՞ է խեղդվում...

Գնացքը չի լսում, գնացքը սլանում է։

Իսկ ես սպիտակ ջրաշուշաններ եմ ուզում։

15. Ի՞ՆՉ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՏԱՀԵՑ

Կանգնել է մեկը գնացքի պատուհանի մոտ և ժպտում է։

Բիլին է այդ։

Վագոնը լիքն է որբերով։ Նրանք աղմկում են, լալիս, երգում, կանչում, կանչվռտում, վիժվիժում։

Բիլին լուռ է, բարակ ժպտում և նայում է ինձ։

Ի՞նչ ես հիշում, Բիլի...

... Այդ օրը Կուշոն երկար խոսեց, շատախոսեց, պատմեց Երևանից, ապա ծրագիրներ կազմեց իր Բաքու գնալու մասին, հետո Բիլուն առաջարկեց գնալ միասին մանգալուն։

Բիլին մերժեց։

Կուշոն փոշ առաջարկեց։

Բիլին մերժեց։

Կուշոն սպառնաց։

Այդ էլ չօգնեց։

Կուշոն հայհոյեց, թքեց և հեռացավ։

Ընկանք տախտակների վրա և քնեցինք։

Առավոտյան թալանի գնացողները դատարկաձեռն, խուճապի մատնված վերադարձան և գուժեցին, որ ինչ-որ մարդիկ շրջում են, բռնում խուժանին և քշում են որբանոց։

Կարգադրվեց փախչել քաղաքից դուրս, և խումբը ստրատեգիական նկատառումներով զանազան ուղղություններով ցրվեց։

Ես բռնեցի Բիլու ձեռքը, և մենք առաջ անցանք։

Հիշո՞ւմ ես, Բիլի, քո պատճառով մենք գնում էինք դանդաղ։ Հանկարծ հետևից մի երիտասարդ կանչեց.

— Կանգնե՛ք, կանգնե՛ք...

Մենք ուժ տվինք մեր ոտներին, բայց իզուր։ Երիտասարդը հասավ ու բռնեց երկուսիս։

— Մա՛րշ, որբանոց։

— Չենք գա, թո՛ղ։

Չեզ նոր շորեր կտանք... Դիլիջան կտանենք։

— Չե՛մ...

— Չե՛նք...

— Ոստիկանատան բաց կանենք... կսովորեք, մարդ կդառնաք։

Ի՞նչ զարմանալի բան կատարվեց, Բիլի...

Բոպեական կայծակի լույսով կարծես լուսավորվեց իմ անցյալը։

Ես հիշեցի հորս նկարը, գիրքը ձեռքին կարդալիս. հետո նրա մահից հետո մնացած գրքի սնդուկները, իմ առաջին աշակերտական տետրերը, «Մեղրագետ»-ը, դասարան, նստարաններ, գրատախտակ, կավիճ, քարեատախտակ, քարեգրիչ.

Մեղնից շատ առաջ կար մի թագավոր,
Հոգով դեռ արի, գլխով այլևոր,
Մեծ ծով էր պատել նրա աշխարհը,
Ոսկի կոշեցին իրոք այն դարը.
Ուներ նա երկու մատղահաս աղջիկ,
Մինը խիստ տգեղ, մյուսը գեղեցիկ...

Կամ՝

Ագատն ասուած այն օրից...

Երբ հավաքվում էին աշակերտները, նախքան դասերն ասելը կանգնում էինք դպրոցի ընդարձակ բակում և երգում

էինք «Լույս», լայն ձայն ունեցող աշակերտներից մեկը մեն երգում էր մի «Լույս» բազում ելևէջներով, երեք քոպեի տևողությամբ, որից հետո խումբն սկսում էր «Արարիչ լուսո, առաջին արդար լույս...»

Ի ծագել լուսո առավոտու,
Մաղյա ի հոգուս մեր
Զլույսն քո իմանալի...

Հետո դասեր,— հայերեն, թվաբանություն, աշխարհագրություն, կրոն, իրավագիտություն, գեղագրություն, գծագրություն...

Հայերեն.— Ես տեսնում եմ մթնշև անգամ դասագրքի երեսն ու տառերը.

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար...

Երբ ամուսնացավ հայերենի ուսուցիչ պարոն Գրիգոր Գաբրինյանը, ամբողջ աշակերտությունը դնաց եկեղեցի և սեղմեց նորապսակների ձեռքը. երբ հերթը հասավ ինձ, ես այնքան տարվել էի քողի տակ թաքնված հարսի դեմքը տեսնելու մարմաջով, որ իմ ձեռք սեղմելն անցավ վերին աստիճանի անհաջող և խորդուբորդ։

Թվաբանություն.— Ավազան մը ունի երեք խողովակ։ Ամեն մի խողովակ մեկ ժամվա մեջ 3 դույլ ջուր կհոսեցնե։ 12 ժամ հետ քանի՞ դույլ ջուր կհաշվվի ավազանի մեջ։

— Գումարման նշա՞ն... բազմապատկման նշա՞ն, իշու կտոր,— գոռում էր թվաբանության ուսուցիչ պարոն Ահարոն Դուդիկյանը, որը կորցրել էր հարյուր տոկոսով իր ազդեցությունը դասարանում, որովհետև աշակերտներից մի քանիսը տեսել էին նրան մի անգամ արտաքնոցից դուրս գալիս...

Կրոն.— Ես տեսնում եմ մորթված այն գառը, որի արյամբ ներկվեց Հովսեփ Գեղեցիկի սպիտակ շապիկը։

Մովսեսն իր ժողովրդին առաջնորդում է դեպի Ավետյաց երկիրը, դեպի Քանան։

Ահա Սավուղը քնար է նվագում Դավիթ թագավորի գահի ոտների տակ, իսկ թագավորը նիզակ է շպրտում երգչի վրա... Թե՞ ընդհակառակը...

...Տեսա՞ր դու, Բիլի, ինչպես անմռունչ հնազանդությամբ նա հետևեցի այն մարդուն, որը եկել էր մեզ որբանոց քշելու համար։

Գնում էր նա առաջից, նա նրա հետևից, գլխիկոր ու հուշերով բեռնավորված, իսկ դու հետևում էիր ինձ, Բիլի...

Մեզ սրբեցին փողոցից, նրա մրից, ախտից, նատեցրին ֆուրգոնների մեջ, ֆուրգոնները շարժվեցին դեպի «էջմիածին» կայարանը։

Երբ ֆուրգոնները դուրս եկան վանքի դարբասից, նա քեզ ցույց տվի, Բիլի...

Երկու զինված ոստիկաններ տանում էին Կուշոյին. իսկ Լեմշիկը փտած մի խնձոր նետեց մեր ֆուրգոնի հետևից։

16. ԱՆՏԱՌՆԵՐ

...Անձրև՞ է, անձրև, մեղմ ու քաղցրաշիթ՝
անտառի վրա,
Երդ կա ամեն տեղ, ամեն թփի տակ
մի տրտում աղջիկ...

Գ. Մաճառի

«Անտառ կկոչվին այն մեծ տարածությունները, որոնք ծածկված են միատեսակ կամ այլազան ծառերով։

Տեռեյանի աշխարհագրության գրքից

«Զարաքիլիսա» կայարան։

Մեզ նախաճաշ տվին, ապա թե լցրին ֆուրգոնները, և անտառապատ շոսեով շարժվեցինք դեպի Դիլիջան։

Գնում ենք, Բիլի, Դիլիջան ենք գնում...

Բլուրների վրա բարձրանում են բլուրներ, իսկ բլուրները ծածկված են ծառերով։

Անտառ։

Անցնում ենք գյուղերի միջով, իսկ այդ գյուղերն իմ աչքին փոքրիկ քաղաքներ են թվում, որովհետև տների կտուրները տափակ չեն, և ամեն տուն ունի պատշգամբ։

խաղում է բարակ մի քամի, փայլում արևը անտառի վրա, իսկ ձորամիջով օձագալար հոսում է սպիտակ շուանն։

Բիլին բռնել է ֆուրգոնի ճաղերից և նայում է ուր որ ես եմ նայում։ Երբ ես սկսում եմ ուրիշ կողմ նայել, նա էլ նույնն է անում։ Արևը փայլփլում է նրա թարթիչների վրա և երևում է, որ նա իրեն լավ է զգում։

Անտառը ապրում է։

Կանաչավարս, գանգրահեր գլուխների նման օրորվում են ծառապատ բլուրները. մի նապաստակ թռավ թավուտների մեջ, անտառամերձ փոքրիկ տափաստանի վրա մի կով բառաչեց, և շարունակեց ապրել անտառը։

Անտառը։

Գայլեր են ապրում այստեղ և եղջերուներ. աշխարհի բոլոր անտառներում գայլերը սիրում են եղջերուներին, իսկ եղջերուները գայլերին՝ ոչ։ Վայրի մեղուները մեղր են շինում ծառերի փչակներում, իսկ արջը երկու ոտների վրա կանգնած ուտում է անտառային տանձը և օր ու գիշեր մեղր է փնտրում։

Անտառը, ապրում է անտառը։

Մարքերս խառնվում են, մարքերս թռչում են ետ, վան և Այգեստան։

Ո՞ւր է տատս, ո՞ւր են Անուշը, Սուրենը, Խորենը։

Ո՞ւր եմ գնում ես, մեզ ո՞ւր են տանում։

Հովը հիմա խաղում է Այգեստանում, իսկ մրգերը հասնում են։ Մշուշի միջից նայում են Սիփանն ու Արտոսը, իսկ քաղաքում ոչ մի մարդ։

Քաղաքում ոչ մի մարդ։

Դատարկ են եկեղեցիները, և նրանց զանգերը լուռ են։ Շներն ու վայրենացած կատուները մոնում են տնից տուն։ Հոսում են ջրերը, և ոչ մի բահ չի փոխում նրանց ուղղությունը, և օրեր են անցնում, իսկ ադբյուրները ոչ մի կուժ չեն տեսնում։

Էլի արև կա այնտեղ, և կա լուսին. բայց արևը չի շորացնում լվացքի ոչ մի շոր, իսկ լուսինն իզուր է խուզարկում Այգեստանի թավուտները՝ սիրահարված զույգերի սերը գերեզմանացնելու համար։

Իլուր կարոսի, գինձի, նանայի, տրխունի ածուներն սպասում են, որ կաղատվեն մոլախոտերից, որոնք աճում են և տիրաբար խլում են նրանց սնունդը։ Այգեստանները վրդովվել են, ոչ մի խնամող ձեռք, ոչ մի մարդկային շունչ։

Վախենում և սարսռում են այգեստանները։

Հետո արծիվները քաղաք կմտնեն։ Այդ առաջին անգամ կնիկատի մայրիկանց այգու բարձր բարդենու վրա բույն դրած կոտ-կոտ-արագիլը, մայր արագիլը։ Եվ երբ նա կթռչի, կգնա իր ձագերի համար դորտեր բերելու, երկու արծիվներ շառաչուն թևերով կիջնեն բարդու գագաթին և կթռցնեն բնից արագիլի ձագերին։

Արծիվներն ալաստորեն կարող են ներս մտնել բաց պատուհաններից, մայրիկանց վերի օդեն և այնտեղ, գորգերի վրա ճաշակել արագիլի ձագերին։ Նրանցից մեկը հանկարծ հայելու մեջ կը տեսնի երկու արծիվներ, որոնցից մեկն արնոտ կտուցով իրեն նայելիս կլինի, իսկ մյուսը՝ իր որսի մնացորդները գլշատելիս։ Քինախնդիր արծիվը կթռչի դեպի հայելին և կտեսնի, որ արծիվը թռչում է դեպի իրեն. նա կխփվի թափով մեծ հայելուն, իսկ հայելին կընկնի հատակին և փշուր-փշուր կլինի...

Այդ միջոցին կանափի տակ պահված հսկա բուն կթարթի իր կույր աչքերը և անհամբեր կսպասի խավարի իջնելուն։

Իսկ արծիվները, թափահարելով իրենց թևերը, դուրս կթռչեն մայրիկանց տան վերի օդի բաց պատուհաններից։

Կվերադառնա մայր արագիլը՝ մի գորտ կտցին։ Ձագերը չկան։ Գորտը վայր կընկնի նրա կտցից և խոտերի վրա կմնա անշարժ։ Հետո արագիլը կծալի իր թևերը և իրեն բաց կթողնի բարդու ամենաբարձր ճյուղից։ Վայր կընկնի նա քարի պես և կմեռնի կիսաբաց կտուցով և ինքնասպան...

Մայր արագիլը...

. . . . . .

Հեռվից երևում է Դիլիջանը։ Բիլին ուրախ ծափ է տալիս, և անտառապատ բլուրների զոգից մեզ է նայում փոքրիկ և գվարթ մի ամառանոց։

17. ՈՐԲԱՆՈՑՈՒՄ

Որբի՞ հայրենիք,
Ողբի՞ հայրենիք...

Հ. Թումանյան

Ռուսական եկեղեցու դիմաց, բլուրի վրա, կանգնած է միհարկանի շենք։

Կաղարմա են ասում նրան։

Իսկ այդ մեր որբանոցն է։

Դա մի երկար շենք էր, նեղ փողոցի նման երկար միջանցքով, որը գնում էր, հետո դառնում ձախ, էլի էր գնում և հասնում էր մինչև խոհանոց, բաղնիք և պահեստները։

Միջանցքի արևելահայաց պատուհանները նայում էին անտառի վրա, իսկ արևմտյան կողմը սենյակներ էին, նորից սենյակներ, փայտի մահճակալներով, խոտե վերմակ-ներքնակներով։

Ես և Բիլին բռնեցինք կողք-կողքի դրած երկու մահճակալները։

Կառավարչուհին 40—50 տարեկան, սպիտակած մազերով, նիհար, մագաղաթե դեմքով մի կին էր, որին Օրիորդ էին ասում։ Դաստիարակչուհին՝ օրիորդ Մարդոն, գեղեցկատեսիլ մի աղջիկ էր, բալականին գեր, սպիտակ վզով և սև մազերով։ Նա հագնում էր սպիտակ իալաթ և, հակառակ կառավարչուհու խիստ սակավախոսության, զվարճախոս էր ու անհանգիստ։ Նա խոսում էր մայրապետների, ծառայողների հետ, իսկ երեխաներին օրական հազար անգամ ասում էր.

— Երեխե՛ք, խելոք...

— Երեխե՛ք, սուս...

— Երեխե՛ք, վե՞ե՞...

Մայրապետներից մեկը մի վիթխարի, առողջ և գեղեցիկ այրի էր. նրան Աքաբի էին ասում։ Մի անգամ նա ինձ բարձրացրեց խաղալիքի պես և համբուրեց. ես սպառնացի, որ կհայտնեմ կատարված գեպքի մասին Օրիորդին, նա ծիծաղեց բարձր. հետո ինձ կաշառեց շամիշով, և ես լռեցի։

Մեզ հագցրին նոր շորեր, սպիտակեղեններ և չթից կար-

ված պատրաստի բլուզներ ու շալվարներ բաժանեցին՝ վառկարմիր ծաղիկներով։ Զգեստավորվելուց հետո ես նայեցի Բիլու վրա և չկարողացա զսպել իմ ծիծաղը։ Նա իր մեծ շորերի մեջ շէր երևում։

Ճաշից հետո նստում էինք որբանոցի դռան առաջ դրված նստարանների վրա... Օրիորդ Մարգոն առաջարկում էր երգել, և ամեն անգամ երգում էր միայն Վահանը և միշտ միևնույն երգը.

Սև սարեկներ զուլալ-զուլալ կիսաղան,
Խաղան, թափվեն արծաթավաղ ավազան...

Առավոտյան ես և Բիլին նստում ենք բարձր բլրին և նայում ենք ամառանոցի վրա։ Կալում է դեռի խուլ խշշոցը, իսկ բլրի ստորոտին մի տուն կա, միհարկանի, սպիտակեցրած պատերով և կանաչաթիթեղ տանիքով։ Դուրս է գալիս մի կին, պառավ կին, և ինքնաեռի մեջ կրակ է դցում։ Հետո երևում է սպիտակ շորեր հագած մի աղջիկ և օգնում է նրան։

Քիչ հետո մի բարձրահասակ երիտասարդ, որսորդական հրացանն ու պայուսակն ուսին, անտառ է մտնում, իսկ նրան հետևում է շագանակագույն մի շուն։

...Մի տղա և մի աղջիկ բարձրացան արահետով դեպի անտառ. բարձրացան և նստեցին մեզնից քսան քայլ հեռու։ Տղան գիրքը դրեց գլխի տակ և ձգվեց խոտերի վրա, իսկ աղջիկը մնաց նստած։ Նա կանաչ խոտ էր քաղում և լեցնում էր տղայի դեմքին և մազերին։ Հետո աղջիկը տղայի գլուխը վերցրեց և դրեց իր ծնկներին։ Մի ժամ հետո, երբ նրանք շարժվեցին դեպի անտառի խորքը, խոտերի վրա թողին մի գիրք։ Բիլին գնաց և բերեց գիրքը։ Այդ գիրքը Շիրվանզադեի «Արտիստն» էր։

Բիլին գնաց ծաղիկներ հավաքելու, իսկ ես սկսեցի հափշտակությամբ կարդալ ու քանի կարդում էի, այնքան անտառը, որբանոցը, ծաղիկներ որոնող Բիլին, ամեն ինչ, ուրիշ տեսակ էին թվում։

— Այդ ի՞նչ է,— լսեցի իմ գլխի վերև մի ձայն։ Օրիորդ Մարգոն էր։ Ես հանցանքի մեջ բռնվածի պես ոտքի կանգնեցի։

— Դու կարդա՞լ գիտես,— հարցրեց նա սիրալիր։ Ես գլխով արի.

— Այո...

— Ապա՞, ինչ ես կարդում... այ-այ-այ,— ժպտաց նա, վերցնելով և նայելով գիրքը,— այս քեզ չի կարելի կարդալ. ես քեզ համար գրադարանից հարմար գիրք կբերեմ, լա՞վ...

— Էս լավ է,— կոտրված սրտով ասի ես։

— Չէ, ջանիկ, ես քեզ համար լավերը կբերեմ...

Այդ «ջանիկ»-ը այնքան ազդեց իմ վրա, որ սիրտս լցվեց արցունքով։ Ես անհուն երախտագիտությամբ նայեցի օրիորդ Մարգոյին, և նա ինձ թվաց աշխարհի երեսին եղած աղջիկների մեջ ամենազեղեցիկը. իսկ երբ նա շոյեց իմ գլուխը, ես փաթաթվեցի նրան ու լաց եղա...

Բիլին կանգնել էր հեռու և, անտառային ծաղիկների մի փունջ ձեռքին, նայում էր այս տարօրինակ տեսարանին։ Վերջապես նա սիրտ առավ, մոտեցավ կամաց-կամաց և փունջը տվեց ինձ։

Ես վերցրեցի ծաղկեփունջը և պարզեցի օրիորդ Մարգոյին։

Օրիորդ Մարգոն վերցրեց ծաղիկը և ժպտուն հեռացավ։ Քիչ հետո եկավ նա Օրիորդի, պահեստապետուհի տիկին Վարսենիկի և ինչ-որ երիտասարդի հետ՝ ինձ տեսնելու։ Մոտեցան և որբերն ու շրջապատեցին ինձ։

Ինձ մանրամասնորեն գրեթե պատմել տվին իմ կյանքը։

Օրիորդը հուզմունքից արտասվեց, իսկ որբերի մեջ տարածվեցին զանազան սենսացիաներ իմ մասին, ի թիվս որոնց, այն, որ ես տասներկու լեզու գիտեմ...

...Անտառի իրիկունը։

18. ՄԵՆԱՇՆՈՐՀՈՒՄՆԵՐ

Ամեն առավոտ, երբ որբանոցը զարթնում էր, օրիորդ Մարգոն մտնում էր մեր ննջարանը.

— Գուրգեն, զարթնե՞լ ես...

Հետո գալիս էր Օրիորդը։— Ո՞նց ես...

Որբերն անում էին ամեն ինչ, ինձ անախորժություն չպատճառելու, իսկ հասակավոր որբուհիներից երկուսը պահեստից թել վերցրին և սկսեցին գուլպա հյուսել ինձ և Բիլու համար։

Միշտ մեր թեյը քաղցր էր լինում ավելի, իսկ ճաշին մենք ստանում էինք ամենալավ պատառը։

Օրիորդ Մարգոն ամեն օր գիրք էր բերում ինձ համար։

Որբերն իրավունք չունեին որբանոցի շրջակայքից հեռանալու, իսկ ես ընում էի Բիլու ձեռքից, և գնում էինք անտառի խորքը, որքան քեֆներս ուզեր։

Իսկ երբ լողացնում էին մեզ, հասակավոր որբուհիները մի առանձին խնամքով լողացնում էին ինձ ու Բիլուն և մեզ էին հատկացնում եղած շորերի մեջ լավագույնները։

Ես իմ ստացած բոլոր մենաշնորհումները բաժանում էի Բիլու հետ համահավասար։ Իսկ Բիլին երջանիկ էր. նա թրջկոտում էր քուռակի նման և գլուխկոնծի էր տալիս խոտերի վրա։

Որբերը կազդուրվում էին օրը օրին. սկսեցին լսվել ծիծաղի ձայներ։ Մի օր էլ կլոր պար ընեցին որբանոցի բակում։

Գութանը մանի-մանի,
Շեկ աղջիկը հաց կտանի,
Ոտ մի քելա, տաս կայնի,
Մարդու խելքը կտանի...

Երգեց ամեն մեկն իր երկրի պարերգը, մեկը Մշից, մյուսը Բիթլիսից, երրորդը Բուլանխից, Խնուսից, Վանից։ Դառնում է շուրջպարը, ու վառվում են որբերի դեմքերը հուզմունքից և ոգևորությունից։ Ո՞վ գիտի, ո՛վ ինչ է մտածում, ո՛վ ինչ է հիշում։ Պարը կարող է լայի փոխվել, բայց ահա Արճակեցի Գառնիկը մի կոմիկական պարերգ է սկսում և էլեկտրականացած տրամադրությունները խաղաղվում են։

Ինչո՞ւ չգրել այդ պարերգը. Նրա յուրաքանչյուր տողի վերջում կրկնվում էր.

«Մաքրուհի ջան, Մաքրուհիս...
Քարվանն էկավ զնգզնգալեն,

Մեջ քարվանին՝ ջորի մը կեր (այսինքն՝ կար)
Վեր էն ջորուն՝ անդուկ մը կեր,
Մեջ էն անդկին՝ շահմաջեմ կեր,
Մեջ շահմաջին՝ շուշա մը կեր,
Մեջ էն շուշին՝ շուշփա մը կեր,
Մեջ էն շուշփին՝ աղջիկ մը կեր.—
— Աղջի, աղջի, անունդ ի՞նչ է...
— Խորած, խեղդված, Դավիդ ի՞նչ է,
Իմ խեր լսի՝ քե կսպանի,
Արուն կանի ջուր — կը խմի,
Մազերդ կանի բուրդ — կը մանի,
Քիթդ կանի զուռնա — փչի,
Կաշիդ կանի դրֆ — կը զրնի,
Ատամդ կանի ուլնիկ — շարի,
Կանի թագրեխ, ինձի կուտա,
Ես իմ սիրած տղին կուտամ...

Ահա թե ինչ,— խե՞ղճ սիրահար, դի՛ր աղջկան շուշի մեջ, շուշեն դիր շուշփի մեջ, էն շուշփեն՝ շուշփի մեջ, շուշփեն շահմաջի մեջ, շահմաջեն՝ անդուկի մեջ, դիր անդուկը ջորու վերեն, ասուր ջորին քարվանին, թող էրթա՞, էրթա՞...

Գիշերն Արտաշը մի հեքիաթ պատմեց։

«Զմրուխտ-դուշ» էր կոչվում այդ հեքիաթը։

Ողջ գիշեր իմ նրազներում զմրուխտե դուշեր են թևում։

Ես ուզում եմ «Զամբիլ-Ֆրոշը» հիշել և պատմել, բայց սիրտս լցվում է արցունքով։

Քամի է։

Դրսում շառաչում է անտառը...

19. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀԵՔԻԱԹ

Ես բռնում եմ Բիլու ձեռքը, և մենք մտնում ենք անտառի խորքը։

Բարկ բուրում են մշտադալար սոսիները, բարակ արահետը կորչում է խիտ ծառերի հետև, իսկ անտառի վրա իջել է հալիտենական մի խաղաղություն։

Բիլին երգում է, ավելի շուտ երգելու պես է անում, հաչում է, տրտինգ է տալիս և զվարթ ձայներ է արձակում։

Անտառի խորքում, խոտերի վրա; մի փոքրիկ, շիկահեր և խաժ աչքերով աղջիկ է նստած։

Կլինի նա 17 տարեկան։

Նրանից քսան քայլ հեռու արածում է մի սպիտակ գառ։ Ես կարոտով գրկում եմ գառը, համբուրում եմ նրա խոնավ դունչը և թվում է մի րոպե, որ ես գտնվում եմ Հայոցձորում, վանքի պուրակում։

Բիլին եռանդով շփում է նրա բուրդը, իսկ աղջիկը բարձր ու զիլ ծիծաղում է։

Աղջկա մոտ վազեց մի փոքրիկ շուն. ես գառը թողի և ամենաբարձր զգացումներով մոտեցա նրան և բռնեցի։

— Մի՛...— լսեցի աղջկա ճիչը և միևնույն ժամանակ զգացի, որ ցուցամատս տաքացավ։

Ես զսպեցի իմ վախն ու ճիչը և ասի.

— Կծեց...

— Արուն,— գունատված արտասանեց Բիլին։

— Կաց, շարժիլ մի,— կարգադրեց աղջիկը և վազեց դեպի իրենց անտառային փոքրիկ տնակը։

Կանաչ խոտերի վրա կաթեցին արյան երեք կարմիր կաթիլներ։

Վերադարձավ աղջիկը, սպիտակ մի լաթ ձեռքին, և հուպված հոգատարությամբ կապեց իմ մատը.

— Ցավո՞ւմ ա, շա՞տ...

Ես նայում եմ նրա գեմքին, մազերին, ձեռներին, ու նա թվում է ինձ անտառային ֆեյա։

Անտառային ֆե՛յա։— Սպիտակ ազավնին իջել է լճափը, թողել է իր փետուրները լճափին, դարձել է աղջիկ և լողացել է լճի արծաթե ջրերում։ Հետո թռել է, անտառային մի քամի և ցրիվ է տվել լճափի սպիտակ փետուրները։ Աղջիկը դուրս է եկել ազավնակերպվելու և չի գտել, չի գտել իր փետուրները։ Հետո նա մտել է անտառ և եկել, բնակություն է հաստատել ահա այս անտառային փոքրիկ տնակում և ապրում է որպես մարդացած ազավնի, որպես անտառային սպիտակ ֆեյա։

Անտառային ֆեյա, դու սպասում էիր ինձ։ Դու գիտեիր, որ ես պիտի գամ հեռու-հեռավոր երկրներից։ Երբ ես դուրս եկա իմ երկրից, դու տեսար քո երազը։— Գալիս է մի

տղա, գալիս է յոթ սարով ու յոթ ձորով, գալիս է արյունոտ ոտներով ու հոգնած...

Անտառային ֆեյա, դու կախարդ ես, այդ դու արիր այնպես, որ ես կորցնեմ իմ բոլոր հարազատներին, գամ և մտնեմ այս անտառը։ Դու հնարեցիր այն գառը, որպեսզի ես մոտենամ նրան, դու հնարեցիր այն շունը, որպեսզի կծի ինձ և դու կապես իմ մատը և ինձ՝ քեզ։

Ասա, ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ քեզ համար, ինձ համար, այս սեղի համար, արևի ու լուսնի, հողի և մարդու համար, ի՞նչ անեմ ես...

...— Անունդ ի՞նչ է,— հարցրի ես նրան։

— Նունիկ...

— Ի՞նչ կանես էստեղ...

— Հերս մեշի պահապանն ա... ապրում ենք...

— Ես որբ եմ,— ասում եմ ես,— Բիլին էլ որբ է...

Բիլին բարակ հառաչեց, հարմարվելով իմ լիրիկական տրամադրությանը, իսկ աղջիկը հպվել նայեց նրա վրա։

— Գիտեմ...

— Ի՞նչ գիտես...

— Իմացա, որ որբ ես... ցավո՞ւմ ա...

— Չէ, անցավ...

Բիլին վազեց մի թիթեռնիկի հետևից։

— Բիլի, չկորչե՞ս,— կանչեցի ես։

— Չէ,— կենսուրախ ճիչով պատասխանեց նա։

— Քո անունն ի՞նչ ա...

— Գուրգեն...

— Վա՜յ, էդ ինչ լավն ա...

— Ի՞նչը...

— Անունդ... դու էլ լավիկն ես...

Ես որպեսզի կարողանամ վարձահատույց լինել, ասում եմ.

— Դու սիվաակ, սիրուն, մեծ կատու ես...

— Դու էլ դե՝ շուն ես... մատս կծես ոչ...

Ու ծիծաղեց, գրնգուն ծիծաղով, ծիծաղեց և ավելացրեց.

— Թե ուզում ես՝ էստեղս կծի...

Ու ցույց տվեց երեսը։

Երկուսս էլ լռեցինք. թվաց, որ նա վղջաց իր ասածի համար։

— Այ, հերս, գնանք, քեզ տանեմ հորս մոտ։

Անտառի ճանապարհով առաջանում էր մի լայնաթիկունք մարդ, երկարաճիտ կոշիկներով, ամառային բլուզով, մորթի փափախով, մեջքին փամփշտակալ և հրացան, իսկ ձեռքին մի պայուսակ։

Նա նայեց աղջկան ու փափուկ ձայնով հարցրեց.

— Գառն ո՞ւր ա...

Աղջիկը շուրջը նայեց.

— Հրեն հա՞...

— Կորչի ոչ...

— Կորչիլ չի... պապա, այ, որբ... լավ տղա է... շունը՝ մատը կծեց, կապեցի... հեչ լաց չէլավ...

— Տենամ...

Անտառապահը քանդեց շորը, պնեց ուշադրությամբ, հետո նորից կապեց։

— Հեչ բան ա...

Հետո անժպիտ՝ թայլեց դեպի տուն, կարծես ինքն իրեն ասելով.

— Կրակ վառի, միսը խորովենք...

— Տեղ չդնաս, մեզ հետ ճաշենք,— ասաց Նունիկը։

— Չէ։ Գնալու ենք... Բիլի, Բիլի...

— Նա թող գնա, դու կաց... կգնանք մեն գալու...

— Բիլի,— պնդեցի ես։

— Պապա,— քմահաճ և խռովկան կանչեց աղջիկը,- պնո՞ւմ ա...

— Ո՞ւր ես գընում, տղա ջան, կաց, կաց...

— Ախր Բիլին կկորի...

— Ես կգտնեմ,— ասաց աղջիկը և վիթի նման անհետացավ ծառերի հետև։ Հինգ րոպե հետո վերադարձավ մենակ։

Բիլին չկար ու չկար։

— Որբանոց գնացած կլինի, մտածիլ մի,— ասաց աղջիկը և, դրեթե քաշքշելով, ինձ տարավ խրճիթը։

Փոքրիկ մի նախախրճիթ, անկյունում մի ավել, մի դույլ,

մի քանի պղնձե և մի քանի կավե ամաններ, հետո խրճիթը, մաքուր ավելած, հոգե հատակով, մի կոշտ անղանով և պատարաններով, երկու փայտե թախտեր՝ համեստ անկողիններով, պատից կախված զանազան գործածական և անգործածելի զենքեր, մի քանի շորացած թռչուններ, մորթիներ, թռչունների թևեր...

— Դե նստի, ես միայլ խրոլեմ...

Նա դուրս եկավ։ Ես մոտեցա պատուհանին և դուրս նայեցի։ Հեռու, անտառի մի բացատում երևում էր Բիլին, նա նստել էր մի ծառի տակ և հայտնի չէ, ինչով էր զբաղված։ Ես առանց երկար-բարակ մտածելու դուրս թռա պատուհանից և աննկատ վազեցի դեպի Բիլին։

Նա նստել էր մի ծառի տակ և լալիս էր.

— Չեմ ուզե դու երթաս ինոնց մո՞ս...

— Ինչո՞ւ Բիլի...

— Չեմ ուզե...

— Ախր ինչի, է...

— Ես մենակ կմնամ... ես կվախենա՞մ...

Ես Բիլուն մխիթարեցի և սրտապնդեցի.

— Հիմար ես, Բիլի, ի՞նչ կա վախենալու... ես քեզ հետ չե՞մ... տեսա՞ր, Բիլի, ինչ խորտա աղջիկ էր...

— Չե՞մ ուզե...

Ես նայեցի դեպի անտառապահի խրճիթը։ Կանաչ ծառերի մեջ ոլորվում էր կապույտ ծուխը։ Ինձ թվում էր, որ նա ներքաթումն եմ, կամ երազում. ահա, ահա կարթնանամ ես և հօդս կցնդի այս անտառն էլ, այն կապույտ ծուխն էլ, տնակը անտառապահի, անտառապահն ու նրա սպիտակ աղջիկը...

Ահա կարթնանամ ես, կցնդի այս ամենը և կմնա միայն Բիլին, խեղճ, լացող Բիլին։

Լսում եմ աղջկա հեռու, ղանգակ ձայնը.

— Գուրգե՞ն, Գուրգե՞ն...

Նա ինձ կանչում է, նա ինձ չի նկատում։

Ես և Բիլին քաշվում ենք թավուտների խորքը և ենթադրում ենք անտառային հարբեցնող ու հատակ նինջով։

20. ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՅԳԻ

Անտառային, լուսնահար գիշեր։

Ես սպասում եմ, մինչև քնում է Բիլին։ Ահա նա դադարում է լեզվին տալուց, և գիշերային անդորրը տարածվում է անտառի և որթանոցի վրա։

Ես զգուշությամբ հագնում եմ իմ շորերը և դուրս եմ սահում որթանոցից։

Խորունկ, վիթխարի գիշեր։

Լավում է գետի միալար վշշոցը վարից, ծառերի արանքից նայում են մի քանի գունատ, էլեկտրական լամպեր, իսկ վերից լուսինը հոսում է աշխարհի վրա ու նրա լույսը կարծես, դնարով ավելի է մոլեգնում, ավելի է շառաչում ու հորդում։

Ամեն ինչ լուսնով է հարբած։

Ես առանց մի փոքրիկ վախ անգամ զգալու՝ մտնում եմ անտառ։

Գնում եմ ծանոթ կածանով, քայլում եմ սովերների ժանյակների վրայով, իսկ սիրտս երգում է։

Երգում է սիրտս, իսկ ես լցված եմ նոր ճայթող հունդերի, նոր ծաղկող ծաղիկների և հասնող առաջին պտղի երգով։

Թվում է, որ ես լսում եմ ծիլերի ծլելը, լսում եմ ավիշի երգը. նա երգելով բարձրանում է դեպի ծառերի գագաթը, և ապրում են ծառերը, իսկ լուսինը նրանց քաշում է։

Լուսինը քաշում է անտառին,— դրանից է, որ հանախ կանգնում է ավիշների ընթացքը նրա երակներում, և անտառի սիրտն սկսում է ավելի ու ավելի արագ բաբախել։

Ես լսում եմ իմ սրտի տրոփը. այդ իմ սիրտն է, իմ սիրտն է տրոփում, անտառի սիրտն է տրոփում, ասես՝ սիրտն է տրոփում...

Անտառապահի տունը։

Պատուհաններից լույս է երևում, գունատ մի լույս, ու ես բոլոր ոտներիս մատների վրայով դիմում եմ դեպի լույսը։

Հանկարծ հիշում եմ շան գոյության մասին. նա կարող է հասնել և ինձ կծել։ Բայց այդ միտքն անգամ ինձ անապատելի հրճվանք է պատճառում։ Ախ, միայն թե գա, միայն թե կծի այդ շունը։ Դուրս կգա նա՝ անտառապահի աղջիկը, և սի-

քով ու հոգատարությամբ կկապի շան կծածը։ Հետո նրա լռակյաց ու բարեհամբույր հայրը բաց կանի վերքը, կնայի և կասի.

— Հեշ բան ա...

Բայց ոչ մի շուն ինձ չի մոտենում, իսկ ես մոտենում եմ անտառապահի տան պատուհաններին։

Նա նստած է զունատ լամպի առջև և ինչ-որ բան է կարում, Անկողիններին ձևոք չի տրված, Հայրը տանը չէ։

Ես ծնծում եմ ապակին այնքան կամաց, որ ես հազիվ եմ լսում ապակիների բութ ձայնը։

Նա մի բոպե լարված լսում է, ապա հանգստացած շարունակում է իր կարը։

Ես նորից եմ ծնծում.

— Քա՛ք-քո՛թ-քո՛թ...

Նա թողնում է կարը և բոցավառ ու լարված դեմքով վազում է դեպի պատուհանը։

Ես փախչում եմ շնչատպառ ու շնչակտուր. վազում եմ դեպի անտառի բացատը և նորից ետ եմ նայում։ Նա ապահովաբար ինձ չի տեսնում հիմա։ Նա ինձ չտեսավ։

Պատուհանի մեջ երևում է նրա գլուխը, հետո անհետանում, նորից է երևում։

Մի սավեր է մոտենում նրա պատուհանին։ Ես լարում եմ տեսողությունս. ճի՞շտ է տեսածս, թե՞ ինձ այդպես թվաց...

Հետո լույսը մարում է։

Հետո...

Երկու հոգի նրանց խրճիթի մոտով բարձրացան դեպի անտառը։

Ես մինչև անգամ լսում եմ նրա ձայնը։

Ճի՞շտ է լսածս, թե՞ ինձ այդպես թվաց...

Շվար ու լուսնահար մարքերով ես դիմում եմ դեպի որբանոց։

Բիլին նստել է դռան վրա և լալիս է...

— Ինչի՞ ես նստե, կուլաս, քուռա՛կ,— արդեն ջղայնացած ու անպուսակ գոռում եմ Բիլու վրա։

Նա պետք էր որ սակվեր, բայց նրա լացը հիստերիկայի է փոխվում, և նա համարյա թե ճչո՛ւմ է.

— Ինչի՞ կերթաս էնտեղ... ես... ես... ես... կը... կը... վախենամ... դու... դու... դու փիս... ես... մի էրթա... մի...

Ես բռնում եմ նրա ձեռքից ու ջարդված սրտով մտնում եմ ննջարան։

Բոլորը քնած են։ Պառկում ենք մենք էլ։

Ախ, միայն թե շուտ բացվեր առավոտը։

21. ՆՈՒՆԻԿ.

— Նունիկ, Նունիկ,— մրմնջում եմ ես ու կարծես շուրջս ծավալվում է անտառաբույրը։

Տոն է, տոն-տոն-տոն,
Տոն է, տոն-տոն-տոն,
Տան-տան-տան-տոն...

Հոլտում փռված ամառանոցի փոքրիկ եկեղեցու զանգակներն են հնչում։

Տո՛ն է, իմ սրտի, իմ արյան, իմ աչքերի տոնը,— ես մոռնում եմ անտառապահի տանը։

Տոն է, տոն-տոն-տոն,
Զիլ-ժիլ-ժիլ...

Ես ողջունում եմ ամեն մի ծառ ու թուփ, ու քար։ Ես բարձր հրդում եմ, և իմ ձայնը թվում է ինձ ամենաուրախ ձայնը իմ լսած բոլոր ձայներից...

Անցնում է մի պառավ, շալակած մի մեծ խուրձ կանաչ խոտ։

Ես ուզում եմ փաթաթվել այդ ցնցոտիապատ պառավին, համբուրել նրա խորշոմած դեմքը, հետո վերցնել նրա բեռը ու տեղ հասցնել, որպեսզի չհոգնի նա, իր թեթև բեռի տակ կքած այդ պառավը։

Ճանապարհը մի անգամ էլ ոլորվում է, և հեռվից ողջունում է ինձ անտառապահի տունը։

. . . . . .

. . . . . .

Մենք ժամերով կարող ենք նստել այսպես լուռ, կամ խոսել ամենահիմար բանների մասին։

Հետո կգա անտառապահը, մենք կխոսանք գայլերի և արջերի մասին, իսկ հենց որ արևը թեքվի, մայր մտնի արևը, ես որբանոց կվազեմ, որովհետև հենց որ ուշանամ, Բիլին անտառ կմտնի ինձ որոնելու։

Հենց որ ուշանամ։

Մի օր ինձ ասաց Նունիկը.

— Արի գնանք անտառ, պտակվենք...

Ես ուրախացա.

— Տատնհինգ տարեկան դառնամ՝ նո՛ր...

Նա բարձր ու զիլ ծիծաղում է։

. . . . . .

. . . . . .

. . . . . .

Լուսինը շառաչում է անտառում, հետո ամպում է և խրշխրշում բարակ մի անձրև։

Մենք վար ենք իջնում։

Անտառապահն արդեն վերադարձել է և կրակ է արել։ Նա դժգոհում է անձրևից ու նայում է վեր.

— Հիմա կդադարի...

Դադարեց անձրևը. լուսինը վար նայեց սպիտակ լեռների կապույտ ձորերից. անտառապահի աղջիկը կրակն է բորբոքում, իսկ անտառապահը նայում է ինձ իր թավ հոնքերի տակից և հայտնի չէ, ժպտո՞ւմ, թե՞ մի բան է ուզում ասել...

Ուշ է, պետք է գնալ, Բիլին հիմա խենթացած կլինի, մի խոսք պետք է ասել, հետո հեռանալ. ես փնտրում եմ այդ խոսքը և չեմ կարող գտնել...

Թիուտը խշխշաց։ Անտառապահը լարվեց.

— Ո՞վ ա...

Ոչ մի ձայն,

— Ո՞վ ա...

Թիուտը նորից խշխշաց.— ոչ մի պատասխան։

— Մոլորված պախրա կլի, յա թե չէ՝ արջաբոթոթ,— մռմռաց անտառապահը, մաալ խրճիթը և հրացանով դուրս եկավ։

Իմ ուրախությանը չափ ու սահման չկար...

22. ՆՂՆԻԿԸ

...Բայց իմ հոգիս,
Իմ խեղճ հոգիս,
Այս բոլոր թագուհիներին
Ու մահացումներին վիրավոր,
Անտառների սարսափին մեջ
Բանտարկված մնաց։

Ս ի ա մ ա ն թ ո

...Անձրև կիջնի հոգվույս մեջ.
Կզգամ մահվան սրսփուք,
Ձեռքս է առկախ մնացեր
Պարապին մեջ սգավոր։

Մ. Մ ի ծ ա ր ե ն ց

Անտառապահն ուղեց հրացանի փողը դնալ թփուտները։

Ես և Նունիկը մատներով փակեցինք մեր ականջները, որոտը խլացնելու համար։

Բո՛ւմ-բո՛ւմ-բո՛ւմ...

Պայթեց երեք որոտ իրար հետևից։

Թփուտների մեջ մի բան թրմփաց։

Անտառապահը հրացանը հենեց ծառին և դիմեց դեպի թփուտները։

Մենք լսեցինք նրա հեռու, շոր ձայնը.

— Թյո՜ւհ, սատանա՛...

Նա գրկել էր մի բան և գալիս էր կարծես դժվարությամբ, ծնկին տալով։

Մոտեցավ, կանգնեց ու, ծանրացած բազուկներով, խփած որսը բռնեց լուսնի դեմ, իր գլխից մի քիչ բարձր, իրենից մի քիչ հեռու, լավ տեսնելու համար։

Լուսնի գունատ շողերի դեմ բռնել էր նա...

Բիլու դիա՞կը, Բիլու դիա՞կը...

Ես չեմ մոռանա իմ Բիլուն, եթե ապրեմ անգամ այնքան, մինչև որ ածխանա լուսինն ու մոխրանա արևը։

Իմ խեղճ, իմ անուշ Բիլի, անցար դու հապարավոր սարսափներից ու արյունոտ ճանապարհներից, հասար այս ա-

դառ անտառները, ժպտացիր, լեզվին տվիր, սկսեցիր աճել, ու կույր պատահականության արմատահան արավ քեզ։

Դու կապվեցիր ինձ հետ, ինչպես չի կապվել ոչ մի կարտոպ իր լճի, ոչ մի ծաղիկ իր արմատի և ոչ մի եղբայր իր եղբոր հետ։

Մա՛րդ, ընթերցող, որքան տարօրինակ է լինում որբերի սերը. որքա՜ն տարօրինակ...

Տարիներ են անցել, տարիներ այդ օրից, բայց ամեն անգամ, երբ լուսնկա է գիշերը, ես իմ դեմ տեսնում եմ Բիլու դիակը։

Իսկ ականջներիս մեջ խշխշում է խռոված անտառը... խռոված ու լուսնահար անտառը...

. . . . . .

...Մեկը կարծես դիպավ իմ թևին։ Ես շուրջս եմ նայում։ Ոչ ոք չկա։ Մենակ ես եմ։ Կեսգիշեր է և ես, նստած Լենինականի հյուրանոցի № 19 սենյակում, դրում եմ իմ կյանքի ողբերգությունը։ Ո՞վ էր դիպավ իմ թևին։ Հիմա արդեն մի ձեռք ծանրացել է ուսիս վրա և, կարծես ապտակից, այրվում է իմ կիսադեմքը։ Ես ուզում եմ ազատվել այդ ծանրությունից և բարձրացնում եմ գլուխս...

Լուսի՞նն է նայում պատուհանից, ապրիլյան լիալուսինը... ապրիլյան լիալուսինը ծեծում է իմ կիսադեմը ու ծանրացել է աջ ուսիս վրա...

Բիլի, Բիլի, նա արդեն հրհրում է ինձ, և գրիչը վայր է ընկնում իմ ձեռքից...

23. ԵՊԱՔԻՆՈՒՄ

Ես զարթնում և ինձ գտնում եմ բարձր ճաղերով մի մահճակալի մեջ, գոտ և թեթև քրտինքով ողողված։

— Հիվանդանոցային բաժին,— անցնում է մտքովս, և ես ճիգ եմ անում հիշելու ինձ հետ պատահածը։

Ոչինչ, ոչինչ չեմ հիշում. գլխիս մեջ դատարկություն կա, և այդ դատարկությունը լցված է ծանր խավարով։

Համաչափ հեռավորության վրա դրված են երկու տաս-

նյակի չափ մահճակալներ, որոնցից միայն մի քանիսն են զատարկ։

Թարմ օդը բալզամի նման հոսում է մեջս, և ես զգում եմ, որ բոպե առ բոպե հառնում են ներքին ուժերս, և ես կազդուրվում եմ բոպե առ բոպե։

Քրտինքը գոռնում է ալեքի և ալեքի հաճելի, ու ես, ամբողջ էությամբ կարծես, լողում եմ զով մի մեղկության մեջ...

Ամոսամացող հայացքս դուրս է ընկնում պատուհաններից և սահում է անտառի վրայով։ Ու բոպեպես, կարծես անտառային հովից, քշվում է ուղեղիս վրայից մառախուղը, ու ամե՜ն ինչ, ամեն ինչ հիշում եմ...

— Բի՛լ-լի՛...— ինձ թվաց, որ ճչացի ես, բայց անզոր հառաչանքի նման միայն մի ձայն լսեցի։

Իսկ այդ ձայնը իմս էր։

Ներս մտավ հեթանոսահ բույրը, ապիտակ դիմաշորով, կլոր, ապիտակ գեմքով մի աղջիկ։ Երբ նա տեսավ ինձ բաց աչքերով, անձայն և ուրախ ծիծաղեց, ու երևացին նրա կանոնավոր, ապիտակ ատամները։

Բարձրացրեց իմ գլուխը, մի մեծ գդալով կաթ լցրեց բերանս և վազելով դուրս թռավ։

Քիչ հետո ես շրջապատվեցի հատակավոր որբ-որբուհիներով, կառավարչուհիով և բժշկով։

Ակնոցավոր, կարճահասակ բժիշկը դարձավ կառավարչուհուն և, կարծես շարունակելով ընդհատված զրույցը, ասաց.

— Եվ ներքին ուշադրություն այսպես կոչված... վտանգն անցել է։

Ներս մտավ կապույտ աչքերով, շեկ հյուսերով և կարճ, նուրբ շրջագծատով մի աղջիկ։

— Օրիորդ Նադիկ,— երգեցիկ ձայնով ասաց կառավարչուհին, իսկ ես ուշադրությամբ նայեցի նրա գեմքին ու շրթունքներին. զարմանալի բան, ինչպես մինչև հիմա ես չեմ նկատել, նրա վերին շրթունքի վրա սևին է տալիս խիտ և սև աղվամազ, իսկ ծնոտի վրա, տեղ-տեղ, որպես ցանցառ բուսականություն, երևում են հատ-հատ ցից մազեր...— Օրիորդ Նադիկ, Գուրգենը առողջանում է, դու նրա համար դրքեր կբերես, այնպես չէ՞...

— Անպայման,— ժպտալով ասաց օրիորդ Նադիկը։
Ես հիշեցի օրիորդ Մարգոյին.
— Օրիորդ Մարգոն դո՞ր ի...
Օրիորդն ու օրիորդ Նադիկը նայեցին իրար երեսի, և ես գուշակեցի իրերի դրությունը. ինչպես երևում է, օրիորդ Մարգոն հեռացել էր գործից և այժմ նրա տեղ աշխատելու էր օրիորդ Նադիկը։ Գրքի մասին դրությը տեղի ունեցավ նրա համար, որ ես առանձնապես չդգամ որևէ տարբերություն երկու օրիորդների մեջ, մի խոսքով իմ կառավարությունը փոխվել էր, և նրանք հոգում էին, որ անցումը լինի առանց ցնցումների... իսկ իմ հարցին հետևող նրանց նայվածքների փոխանակությունը նշանակում էր, որ նրանք գուշակել են իմ կողմից բավականին էներգիա խլող վայնասուն, որը պիտի բարձրացնեի ես, անձամբ, հենց որ լսեի օրիորդ Մարգոյի հեռանալու լուրը։
Այժմ համարյա թե ես լուրը լսել եմ... քաղաքավարության համար մի քիչ թնկթնկում եմ, իսկ մտքիս մեջ մտածում, որ օրիորդ Նադիկն ամենևին վատ չէ օրիորդ Մարգոյից և, ընդհակառակը, Նադիկը նման է մինչև անգամ մի տեսակ հրեշտակի, ոչ, նման է այն աղջկան, որին ես տեսա էջմիածնում, կոնֆետների թղթերի վրա, և որն այն ժամանակ ինձ շափազանց դո՞ր եկավ...

24. ՏԽՈՒՐ ԱՅՑ

Ես դիմում եմ դեպի անտառ և ինձ թվում է, որ ինձ հետևում է Բիլին։ Մի թիթեռնիկ թռավ, ինչպե՞ս է որ Բիլին անտարբեր է, Բիլին չհետևեց նրան, ճչալով չվազեց նրա հետևից...
Բիլին չկա, և ես մենակ եմ աշխարհում և անտառում։
Ահա անտառապահի տունը։
Ես նայում եմ նրան ու թվում է, որ այս այն տունը չէ, ինչ-որ բան է փոխվել նրանում, բայց ի՞նչ... նույն դուռը, նույն փոքրիկ պատուհանները, նույն պատերը...
Դռան վրա նստել է մի պառավ և քաղած կանաչներն է

կարգի բերում։ Ես տատանվում եմ. մոտենա՞լ, թե չմոտենալ...

Մոտենում եմ։

Չնայած որ արև չկա նրա վրա, բայց նա աջ ձեռքով հով է անում աչքերին և նայում է ինձ.

— Ի՞նչ կա, ոգա ջան։

— Էն, որ էստեղ կապրեր, դո՞ր իս։

— Ոնեցին, ոգա ջան։

— Վո՞վ,— հարցով կարողանում եմ հարցնել ես։

— Ջանդարմեք... վո՞վ պոի պոնի... մին պուճուր ոդի էր դարկել սրպանե՞լ... պոնին, քշին...

— Աղջիկը ի՞նչ էլավ։

— Բո՜... մայերը կարում էդ թամոր աղջկան... լրբի մեկը... անառակի մեկը... հի՞նչ պոի ըլի... հրեն, թաղումն ա... ապար ու պատկված ոդերանց խելքից հանում ա ու ապրում...

Պառավը արտաքսվով վեր կացավ, գոգը թոսի ոտից ու կարծես նոր տեսավ ինձ։

— Դուն վո՞վ ե՞ս...

— Որբ եմ,— ասացի ես անուշադիր ու ցրված։

— Դե որ որբ ե՞ս...

Ես մի բոպե մտածեց, կարծես չիմանալով ինչպե՞ս շարունակել...

— Լա՛վ ա, լա՛վ ա,— հետո, մաքրված կանաչները բուռ արած, խրճիթ մտավ.

— Լա՛վ ա...

Ես նայում եմ շուրջս. արևը ծածկվում է ամպերի հետև, իսկ անտառը մթնում է ու տխրում։

...Սպիտակ ագռավին իջել է լճափը, թռկել է փետուրները լճափին և լողացել է լճի արծաթ ջրերում։ Հետո փչել է անտառային մի քամի և ցրիվ է տվել լճափի սպիտակ փետուրները։ Աղջիկը դուրս է եկել ագռավնակերպվելու և չի գտել, չի գտել իր փետուրները։ Աղջիկը աշխարհ է մտել և ապրում է հիմա ո՞վ գիտի, ո՞ր անտառում, ո՞ր քաղաքում, կամ ո՞ր հովտում...

Նունիկ, որքա՜ն դու նման էիր այդ մարդացած աղավնուն և որքա՜ն նման չէիր...

Ես որտե՞ղ, որտե՞ղ գտնեմ նրան, որտե՞ղ որոնեմ, չէ՞ որ ես ծնվել եմ նրա համար, որպեսզի գտնեմ, գտնեմ նրան...

Էլ ինչո՞ւ եմ ապրում ես, ինչո՞ւ դաղթի ճանապարհին մի ձի չկոխոտեց ինձ, ինչո՞ւ անտառապահի գնդակներից մեկը ինձ չդիպավ...

...Ամպը որոտաց անտառի վրա, և կաթից անձրևի խոշոր կաթիլը։

25. ՕՐԵՐ

(Հատվածներ հուշատետրից)

191... թ., օգոստոսի 6, Դիլիջան

Այսօր շատ ուրախացա։ Օրիորդ Նազիկը ինձ սպիտակ կոթով մի դանակ նվիրեց։

***

8 օգոստոսի

Այսօր եկավ Արտաշի մայրը և գտավ Արտաշին։ Արտաշի մայրը լաց եղավ, Արտաշն էլ լաց եղավ, հետո հավաքվեցին որբեր, նրանք էլ լաց եղան, եկան օրիորդներ, օրիորդներն էլ լաց եղան, բոլորն էլ մի խոսքով լաց եղան, իհարկե, ես էլ լաց եղա։

Շատ ուրախ էր։

***

9 օգոստոսի

Այսօր ես նստել էի խոհանոցում և նայում էի վաբրիտի պատրաստած կոսկետները ինչպես են եփվում։ Վարպետը պոլսահայ է, իսկ անունը Սիմոն։ Ներս մտավ մայրապետ Աքաբին և հարցրեց՝ ճաշ պատրաստ է։ Հետո շատ և շատ

պինդ խփեց վարպետ Սիմոնի մի տեղին և փախավ։ Վարպետ Սիմոնը բարակ բեղեր ուներ. նա Աքաբու գնալուց հետո ասաց. «բեղերս կկարեմ, թե օր մը քեզի...»— ու վատ խոսք ասաց։ Ես գնացի անտառ ու նրա ասած խոսքը մի քանի անգամ ասի։ Լավ չէր։

***

12 օգոստոսի

Այսօր օրիորդ Նադիկը ասաց ինձ— «քեզ հետո ռուսերեն պարապեմ», ես շատ ուրախացա, իսկ նա վաղը գիրք պիտի բերի։ Այսօր անձրև եկավ և անանակ դուրս եկավ. ես Սուլթանին ասի, ասի «Սուլթան, գնա անանակի տակով անցի, դարձի տղա» նա ասաց՝ «աղջիկ լավ է», և ես նրա հետ համաձայն էի, որ աղջիկը ավելի լավ է,

***

13 օգոստոսի

Այսօր հիշեցի մորս, իսկ սուտը լավ էր։ Իսկ Սիմոնն ու Աքաբին անտառ գնացին։ Օրիորդ Նադիկը երեկոյան ինձ կանչեց իր սենյակ և գիրք տվեց ռուսերեն։ Հետո սկսեց պարապել։ Մի քանի գիր սովորեցի, իսկ օրիորդ Նադիկը շատ է ուզում, որ ես ռուսերեն սովորեմ։

Իսկ ես կսովորեմ,

***

14 օգոստոսի

Օրիորդ Նադիկը այսօր չեկավ։ Ես ռուսերեն գիրքն առի և գնացի անտառ։ Բայց չգնացի հետո և շատ պառկեցի։ Այսօր լավ չէր։ Հետո Աքաբին ինձ զարթեցրեց և հարցրեց՝ վարպետ Սիմոնին չե՞մ տեսել. ես մայրապետ Աքաբուն ասի, որ չեմ տեսել։ Հետո նա գնաց, իսկ ես շատ պառկեցի։

✲✲✲

15 օգոստոսի

Այսօր եկավ օրիորդ Նադիկը։ Հետո ինձ հետ շատ մատ եկավ։ Հետո հարցրեց՝ լա՞վ էր Վանն իսկ ես նրան պատմեցի։ Հետո ասաց, ոչինչ, էլի կերթաս Վան, ես շատ ուրախացա, հետո նա տխրեց, ասաց՝ ես էլ կգամ Վան, մենակ երթանք Վան, հետո նա ուրախացավ, և ես տխրեցի։ Հետո պարապեցինք։

✲✲✲

15 օգոստոսի

Այսօր երեք մարդ եկան գրեցին, թե ո՞վ ի՞նչ է կորցրել։ Ասին, ով բան է կորցրել կամ թալանել են, կգրենք, կուղարկենք Ֆրանսիա, Եգիպտոս, Գերմանիա, նրանք կուղարկեն։ Արտաշ գրել տվեց 10 կով, 10 արտ, 10 ոչխար, 10 գառ, 10 այծ, 10 ուլ, 10 հավ, 10 ճուտ, 1 աքլոր, 1 հաստ։ Իսկ ես ոչինչ չասի, իսկ օրիորդ Նադիկ շատ բան ասաց իմ տեղ։

Լավ էր։

✲✲✲

16 օգոստոսի

Այսօր մայրապետ Աքաբին լաց էր լինում և թեյ էր բաժանում։ Ես հարցրի՝ ինչո՞ւ կուլաս, իսկ նա ասաց՝ Սիմոնին հարցրու. իսկ ես Սիմոնին հարցրի, նա ասաց. երեխով են ձգեր, է, ո՞վ է մեղավոր։ Ես շատ զարմացա։ Հետո նա ասաց, ուրիշի տղա պահելու հետ քեֆ չունեմ, եղածը եղած է... Հետո սկսեց թուրքերեն երգ երգել։

✲✲✲

17 օգոստոսի

Այսօր նկարվեցինք։ Ես նստեցի օրիորդ Նադիկի մոտ. նա ասաց՝ մի անգամ էլ մենակ ես ու դու նկարվենք, ես ասի՝ հաս։ Հետո հաշեցինք, պարապեցինք. հետո Օրիորդը և օրի-

որդ նպիկը շատ խոսեցին Աքաբու մասին. խոսեցին ուսանելին, հետո հայերեն ասին՝ հիվանդանոց տանել, իսկ Աքաբին շատ հաստ և առողջ է։ Ի՞նչ հիվանդանոց։ Հետո նրանք կանչեցին Աքաբուն և հարցրին, որտեղից է, իսկ նա լայ եղավ և ասաց, չգիտեմ. իսկ Օրիորդը բարկացավ ասաց, չորս գնայիս, որ դու չգիտես, ե՞ս գիտեմ...

Ես չհասկացա, այնպես որ չգիտեմ, լավ էր, թե լավ չէր։ Իսկ երբ որ մարդիկ լալիս են, լավ չէ։

***

18 օգոստոսի

Այսօր մի շատ լավ և զարմանալի բան կատարվեց։ Օրիորդ նպիկի հետ մենք նստեցինք իրենց սենյակ, պարապեցինք։ Հետո սեղանի վրա մեր դիմաց հայելի կար։ Օրիորդ նպիկ ասաց, տես ինչ սիրուն է, ու ցույց տվեց հայելին։ Իսկ հայելու մեջ երևում էր մեր երկուսի գլուխը իրար մոտ, շատ գեղեցիկ։ Հետո նա դարձավ դեպի ինձ և ասաց.— ապա՞,— ու նա մոտեցրեց հայելին, և մեր գլուխները կողքկողքի շատ գեղեցիկ էին։ Էլ գրավոր չնայեց, հետո ասաց,— ե՞ս եմ երկար, թե դո՛ւ,— և իհարկե, նա էր երկար։ Հետո նա ասաց՝ համբուրիր ինձ և գնա քնիր, իսկ ես համբուրեցի, իսկ նա ասում էր՝ այստեղ էլ, այստեղ էլ. իսկ ես համբուրեցի։

Այսօր ուրիշ տեսակ էր։

***

19 օգոստոսի

Այսօր մայրապետ Աքարին շկար և շատ փնտրեցին. իսկ Սիմոնն ինձ տեսակ-տեսակ բան պատմեց, և ես չեմ կարող գրել։ Այսօր շպարապեցինք։ Այսօր քաղցր շայ խմեցի երկու բաժակ և շատ լավ էր։

***

20 օգոստոսի

Այսօր Աքաբուն անտառից մեռած բերին, և նա մեռած էր։ Իսկ նրանից մի քիչ հեռու եղել է մի ծանր քար և մի մեռած, շատ փոքրիկ երեխա։ Աքաբին գնացել է անտառ, ծանր քար է վերցրել, և արյուն է եկել և մեռել է։ Բոլոր որբերը խաղում էին, իսկ վարպետ Սիմոն չէր խաղում և միայն նայում էր, իսկ ճաշը շատ ադի էր։ Իսկ Սուլթան ասաց. օրիորդ Նադիին էլ ծանր քար պիտի վերցնի. նա ասի օրիորդ Նադիին, որ ծանր քար չվերցնի, իսկ նա պարմացավ և բարկացավ։ Նա շատ պարմացա, որ նա պարմացավ և բարկացավ։

Լավ չէր և ուրախ չէր։

Իսկ մայրապետ Աքաբուն տարան և թաղեցին։

***

21 օգոստոսի

Այսօր երաշ տեսա և շատ ուրախացա. տեսա Վան, մայրիկին, Անուշին, Կալիփսին և Սուրենին, խորենին, Եվ նստած էինք Պանտիշի ձիու վրա և գնում էինք էրմանց. հասանք սուրբ Գրիգոր. տեսա Հզրին պատի տակ կուլա և շատ տխուր էր։ Հետո ուզեցի օրիորդ Նադիկին պատմեմ, իսկ նա խոսվել էր և չէր խոսում։ Նա էլ խոսվեցի և անտառ գնացի։ Իսկ երեկոյան չգնացի նրա սենյակ, և նա եկավ և ասաց՝ անցիր պարապմունքի։ Նա ժպտաց և պարապմունքը վերջացավ, և նա ասաց՝ գնա քնի։ Իսկ ես շատ վատ եղա և հետո լացի։ Նա գրկեց ինձ, համբուրեց, և ես շատ հանգստացա։

Այսօր սոխորեցի պոլ, պատալոկ, սոոլ, սոուլ, խուրաշո, պլոխո։

Այսօր խուրաշո էր։

***

22 օգոստոսի

Այսօր եկան ասին՝ քեզ կանչում են. ես դուրս եկա և տեսա մի տղա։ Նա ասաց, զո՞ւ՝ես Ամենյան Գուրգեն. ասի հա. ասաց նամակ ունիս, կարդա, պատասխանիր։ Եվ կարդացի.

«Գուրգեն ջան, ջան, ջան...

Քեզ շատ եմ կարոտել, ջան, ջան, ախ, երբ կլինի մուրազիս հասնեմ, Գուրգեն ջան, ջան, ջան։ Լսել եմ, որ Նազիկի հետ ես լինում, ջան, նրա հետ մի լինի. նա լավը չէ։ Գուրգեն ջան, ջան ու ջան, ջան։ Երևկոյան քեզ անտառում կսպասեմ, կանաչ նստարանի մոտ։ Կարոտել եմ աչքերիդ, երեսիդ, քթիդ, ջան, ջան, ջան, հազար ջան։ Ն.»։

Իսկ ես շատ վատ եղա, քրտնեցի և սիրտս խփում էր. և տղան ասաց՝ պատասխան տուր, ասի թող գա անտառ, իսկ ես նամակը տարա տվի օրիորդ Նազիկին։ Օրիորդ Նազիկ շատ բարկացավ և ասաց անտառ չերթաս, փճացած աղջիկ է։ Իսկ ես, իհարկե, չգնացի և մինչև ուշ դիշեր օրիորդ Նազիկի մոտ պարապում էինք։

***

23 օգոստոսի

Այսօր Նունիկը եկել, նստել էր որբանոցի մոտի դարի վրա. ինձ տեսավ և մատներով կանչեց։ Իսկ ես չգնացի։ Իսկ ես շատ վի ուզում գնալ և վախենում էի օրիորդ Նազիկից։ Հետո պարապեցինք, իսկ պարապելու ժամանակ պատուհանը ծեծեցին։ Օրիորդ Լուսիկը վարագույրը բացեց, նայեց, հետո պատուհան բացեց, և լսվեց, որ նվագում են։ Եվ երևաց մի կանաչ գլխարկով տղա և նվագում էր, և օրիորդ Նազիկին ասում էր գնանք. իսկ օրիորդ Նազիկն ասում էր՝ Սաշա, չի՞ լինի որ չգամ. իսկ տղան ասում էր, որ տոմսեր առել եմ։ Հետո օրիորդ Նազիկ հագավ ժակետ և երեսի՞ քսեց սպիտակ, և տղան պատուհանի տակ նվագում էր և երգում։ Եվ օրիորդ Նազիկ ինձ ասաց, գնա քնի հանգիստ. ես թատրոն եմ գնում, և ես շատ վատ եղա և ղրջացի, որ Նունիկի մոտ չգնացի, երբ նա մատներով կանչեց. նրանք գնացին, իսկ ես դուրս եկա, և լուսին կար, և տղան շարունակ նվագում էր, և էլ չլսվեց։

Եվ ես գնացի նստեցի Նունիկի նստած տեղը և քնեցի. և մեկ էլ զարթնեցի, լուսին չկար, իսկ ես վախեցա, մի քիչ մնացի և լսեցի, որ էլի նվագում են. իսկ ես մութ-մութ տե-

ան, որ օրիորդ Նազիկ և այն տղան գալիս են, և տղան մի բան ասաց, իսկ օրիորդը բարձր ծիծաղեց և ասաց՝ մեռնես Սաշա. և ես շատ ուրախ կլինեի, որ նա մեռներ։

Եվ օրիորդ Նազիկը ներս մտավ, իսկ տղան մի երգ սողոսկալով իջավ գնաց։

***

24 օգոստոսի

Այսօր եկան ու ասին, որ մեծ տղաների որբանոց է բացվել և բոլոր մեծ տղաներ պիտի երթան այդ որբանոց, և ես շատ տխրեցի։ Օրիորդ Նազիկը Օրիորդին ասաց՝ Գուրգենին չթողնենք, իսկ Օրիորդ ասաց՝ ուզում ես մնալ, իսկ ես ասի, որ ուրիշ տեղ չեմ գնա։ Եվ օրիորդ Նազիկ ասաց՝ քեզ Համար մաքր մանդիլին նվագեմ, և գնացինք անտառ նստեցինք, և նա նվագեց։ Հետո ես բռնեցի նրա ձեռք և տեսա, որ շատ փոքր և սպիտակ ձեռք ունի, և ուրախացա։ Իսկ նա ժպտաց ինձ, և ես շատ ուրախացա։

***

26 օգոստոսի

Բաց խուրջինը և տուր գանակը, և մայրիկին կարտաում եմ, և սիրտս խառնում է։

***

27 օգոստոսի

Երեկ ես գնացի Օրիորդի սենյակ գիրք վերցնելու, և նա ճաշում էր. և նա ասաց, ուզո՞ւմ ես կես բաժակ գինի, և ես խմեցի, և փորս տաքացավ։ Հետո նրան կանչեցին, և ես մեկ էլ խմեցի, մեկ էլ, կես էլ, իսկ Օրիորդը ներս մտավ և խփեց իր երեսին, ասաց, խմե՛լ է, հարբե՞լ է, հարբե՞լ է, իսկ ես ծիծաղում էի և ասում՝ դու, Օրիորդ, գնա բեղերդ կարի, յո՞ւ, յո՞ւ յո՞ւ, Օրիորդ բեղ ունի, Օրիորդ բեղ ունի։ Հետո դուրս փախա և տեսա Սուլթանին և նրան կծեցի, և

նա ճվաց, գնաց Օրիորդի մոտ, և նա ով տեսա կծնցի և երգում էր։ Եվ գնացի օրիորդ Նազիկի սենյակ և ասի՝ օրիորդ Նազիկ քեզ պիտի առնեմ, էրթամ Վան. հետո անտառ փախա և տեսա, որ ուզում են գան ինձ բռնեն. հետո նա էլ փախա և մյուս դռնով էլի մտա օրիորդ Նազիկի սենյակը, մտա մահճակալի տակ։ Հետո օրիորդ Նազիկ ներս մտավ և գտավ ինձ մահճակալի տակ և սկսեց ծիծաղել, իսկ ես սկսեցի լալ։ Իսկ ես նրան ասի՝ դու ծիծաղի, հետո Աքարու պես ծանր քար կվերցնես, և նա լաց եղավ, իսկ ես մահճակալի տակ շատ և շատ ծիծաղեցի, հետո ինձ տարան պառկեցրին և երազում տեսա, որ օրիորդ Նազիկը լալով գնում էր անտառ Աքարուն փնտրելու։

Այսօր, որ հիշում եմ, շատ վատ է և գլուխս ցավում է։ Իսկ Սուլթանը երևը կապել է։

***

29 օգոստոսի

Այսօր միայն համբուրվեցինք. փորձեցինք. ով է ուժով և, իհարկե, օրիորդ Նազիկն էր ուժով. իսկ ես շուզեցի նրա փոքրիկ ձեռքը ցավացնեմ. հետո նա ինձ ասաց՝ կծիր ինձ, իսկ ես շուզեցի, որ նա էլ Սուլթանի պես երևը կապի։ Չկծեցի, և նա խռովեց և մանդալինա նվագեց։

Այսօր գնացի անտառ և երգեցի, և իմ ձայնը շատ լավ էր։

***

30 օգոստոսի

Այսօր անձրև է գալիս և շատ տխուր է, իսկ միջանցքում տղաները պարում են ու երգում.

Մշու գաշտը գուման է,
Հա՜յ, գուման է, գուման է։

Եվ ես հիշեցի Ուլբաթ առուն։ Այնտեղ ամեն ուրբաթ այգեստանցիք գնում էին, ման էին գալիս և պարում էին. հետո քաղաքացիք իրենց համար պատրաստեցին Շաբաթ

առու և շաբաթ օրերին էին գնում քեֆի։ Իսկ էնտեղ տղաներն աղջիկներին աչքով էին անում և Հետո պսակվում էին։ Հետո պարում էին, և հնչակներ ջոկ էին պարում, դաշնակներն ջոկ և ռամկավարները ջոկ։ Ձեզոքները ման էին գալիս, իսկ Փարամազը Պոլսից եկավ ու ասաց՝ Ձեզոք մարդիկ, անպետք մարդիկ։

Իսկ ես նստել եմ պատուհանի մեջ և նայում եմ անտառին, և Հետո չգիտեմ ինչու սիրտս կտոր-կտոր է լինում։

Իսկ անձրևը գալիս է, և շատ տխուր է։

***

31 օգոստոսի

Էլի անձրև է գալիս։ Այսօր ես Հիշեցի, որ երեկ չեմ պարապել և գնացի օրիորդ Նազիկի մոտ։ Նա պառկած կարդում էր և շատ ուրախացավ, որ գնացի։ Հետո ես ասի, ինչո՞ւ երեկ չպարապեցինք, իսկ նա ասաց, որ ես չկանչեմ, չգի՞տի դաս. Հետո ասաց՝ դու ինձ չես սիրում, իսկ ես ասի, որ սիրում եմ, և նա ցույց տվեց իր սպիտակ թևի վրա մի սև խալ և Համբեց իմ երեսի խալերը ու ծիծաղեց։

Հետո մի մեծ մեշոկ շալակած ներս մտան Արտաշ, Խաչալ և Ասատուր. նա ասաց՝ Օրիորդն ասաց այս մեշոկ օրիորդ Նազիկի սենյակ տար, իսկ օրիորդ շատ զարմացավ և ասաց, ինչ գործ ունի իմ սենյակում մեշոկ, և ասաց՝ դիր այդտեղ, և նրանք գնացին։ Իսկ օրիորդ Նազիկ պատուհանի տախտակները փակեց, և շատ մթնեց, և նստեց իմ կողքին, և մեկը ծիծաղեց։ Օրիորդ Նազիկ պատուհանը բացեց, և մեշոկը շարժվեց։ Օրիորդ Նազիկ ոտքով խփեց մեշոկին, և լսվեց՝ վայ, կոզա։ Հետո դուրս եկավ Սուլթան և փախավ, իսկ տղաները շատ խոսում էին, երբ ես ներս մտա, սուս արին, իսկ աղջիկները ծիծաղում էին։

Պլսխտ։

***

6 սեպտեմբերի

Օրիորդ Նազիկը հրաժարվեց, գնաց, իսկ վաղ մեծ տղաներին տանում են նոր որբանոց։

26. ՆՈՐ ՈՐԲԱՆՈՑ

Բոլոր որբանոցներից հավաքեցին հասակավոր տղաներին (10—14—15 տարեկան), և եղավ մեծ տղաների որբանոց։

Գլխավոր խճուղու վրա կանգնած սպիտակ մի շենք էր սա, երկար պատշգամբով, իրար մեջ բացվող հինգ քառակուսի սենյակ-ննջարաններով, մի սերտարան ճաշարանով, մի խոհանոցով. ապա մի սենյակ, ուր ապրում էր մեր կառավարիչ՝ պարոն Տիգրանը, և դաստիարակը (պարոն Համբարձում, թե՞ Վռոդարշակ)։

Էր տխուր և անձրևային օր, երբ զանազան որբանոցներից գրեթե միևնույն ժամին, իրենց հին տեղերին վարժված և այժմ նոր անակնկալների և փորձությունների առաջ կանգնած, անհանգիստ դեմքերով հասակավոր որբերը հավաքվեցին սերտարանում։

Եկավ պարոն Տիգրանը, կապույտ աչքերով, շեկ կիսագանգուր մազերով, խոհական ժպիտով մի երիտասարդ և սկսեց հարցուփորձ անել ով որտեղացի է, ով որքան է, սովորել, ով ինչ գիտե և այլն։ Պարոն Տիգրանը բոլորիս վրա թողեց միանգամայն նպաստավոր տպավորություն, և առաջին իսկ զրույցից որբերը կապվեցին նրա հետ։

Հետո մենք սկսեցինք նայել մեկմեկու աչքերի և հոգու խորքը։ Զրվեցին անտես թելեր սրտից սիրտ, աննշմարելիորեն մշակվեցին կենդանի փոխհարաբերություններ. մենք ուզում էինք որքան կարելի է շուտ ծանոթանալ մեկմեկու նախասիրությունների, բնավորության, անցյալի և մտադրությունների հետ։ Իսկ դա այնքան էլ հեշտ չէր։ Ոչ ոք չէր ուզում առաջին հանձնվողը լինել, ոչ ոք չէր ուզում առաջին անկեղծն ու բացը լինել։ Ամեն ոք վախենում էր առաջինը մերկանալ, վախենալով, որ կարող է դառնալ ծիծաղելի։

Բայց ահա մեկն սկսեց նկարել և դուրս բերեց քաջ Վարդան Մամիկոնյանի դեմքը։ Մի քանի հոգի կենդանի վերաբերմունք ցույց տվին դեպի նրա վաստակը։ Մյուսը թղթից նավ շինեց, իսկ երրորդը՝ ծիտ։ Մեկը շշուկով հարցրեց իր

հարևանին ինչ-որ տեղի մասին, և նրանք միասին վեր կացան ու գնացին։ Հետո նրանք իմացան միմյանց անուններն ու մոնրմացան։

Կյանքը նոր որբանոցում սկսեց հոսել և հյուսվել։

Մեծ տղաներից հինգ հոգու տեղավորեցին մի սենյակում։ Այստեղից էլ սկսվեց հինգի մտերմությունը. նրանք էին՝ Հայկը, Գևորգ, Գառնիկ, Հարությունն և նաև Գևորգը կառավարիչների համար ճաշ էր տանում և դրանով նա երկու թե երեք գլխով բարձր էր հաշվվում մյուսներից։ Հայկին աչքի ընկավ իր գեղեցիկ ձեռագրով, իսկ Հարությունը...

Այս տղան ցած ձայնով խոսել չգիտեր. ինքը լեռնային երկրի զավակ՝ ամենահասարակ բանի մասին խոսելիս այնպես էր գոռում, որ մի անգամ պ. Տիգրանն ասիսլված եղավ նրա վրա քրդերեն գոռալ.

— Հարությունն, ստ, իժի ծնունդ, մի գոռա, դանգետա չիյո կանոտո... (ձայնդ դրասենյակ հասավ)։

Արժանի է հիշատակել Գառնիկին. մի վերին աստիճանի միամիտ, բայց միաժամանակ խորամանկ տղա էր Գառնիկը։ Այսպես, օրինակի համար, նա կլարմանար և կուրախանար, եթե մեկը մի քարով կարողանար դիպչել հավի պոչին, բայց նա կարող էր հավ ապանել, նիրել, ուտել, իսկ փնտուրները լցնել իր խոտե բարձի մեջ, վասն փասիկության... Եվ այս ոչ ոք չէր իմանում։

Հիշատակենք և այն, որ մենք ճաշով կապված էինք աղջիկների որբանոցի հետ։ Աղջիկների որբանոցը գտնվում էր մեր որբանոցից ոչ հեռու, կամուրջի վրա։ Ամեն օր, ճաշի ժամանակ, շարքով գնում էինք, վայելում աղջիկների տեսքն ու սպասարկությունը, ճաշում և վերադառնում։ Շուտով պարզվեց, որ մեզնից շատերն աղջիկների որբանոցից վերադառնում են ինչ-որ «տպավորություններով», իսկ դիշերներն գրազվում նրանց «վերանայումով»... սրա դեմն առնելու համար. պ. Տիգրանը գնեց և մեր մեջ տարածեց «Մտերմական խորհուրդներ պատանիներին» գիրքը, որն ընդունվեց խանդավառ ոգևորությամբ։

27. ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Բաֆֆու «խենթ»-ը վերջացնելուց հետո ես փորձում եմ քնել, բայց ոչ մի կերպ չեմ կարողանում։ Պատկերներ և տեսիլներ խժվժում են գլխիս մեջ։ Ննջարաններում տիրում է խորին լռություն. լսվում է միայն քնած տղաների խաղաղ շնչառությունը։ Ներս է մտնում մայրապետը, ծածկում է տղաներին և դուրս քայլերով հեռանում։ Ուրեմն կնագիշեր է։ Ես վեր եմ կենում, հագնվում եմ, անցնում եմ սերտարան, վառում եմ լույսը, վերցնում մի թերթ թուղթ և վերցնում գրիչը։ Ինչի՞ համար եկա ես այստեղ, ի՞նչ անելու եկա։

Խաղաղ գիշերը փռվել է Դիլիջանի և անտառների վրա, գետը խշխշում է ներքևում, իսկ վերևում վերի որրանոցն է,— այնտեղ կար մի Բիլի, իսկ հիմա չկա։

Ինչի՞ համար եկա ես այստեղ, ի՞նչ անելու եկա։

Բիլու հետ եկա ես այստեղ էջմիածնից, իսկ Բիլու հետ ես ծանոթացա էջմիածնում։ Որքեր կային այնտեղ, զաղթականներ և մեռելներ, ու մեռելների վրա նորից մեռելներ։ Յոթ սարերից անդին նրանք թողին ողջը, ինչ ունեին, անզահանեց նրանց սև մի ձեռք և նեռեց Մասիսից ադին։ Նզովում են նրանք թագավորին և աստծուն, նզովում են ու չեն հանգստանում։

Ինչի՞ համար եկա ես այստեղ, ի՞նչ անելու եկա...

Խաղաղ գիշերը փռվել է Դիլիջանի և անտառների վրա, իսկ ներքևում խշշում է գետը։

...Շամիրամի գետ կար, Շամիրամի ջուր էր կոչվում. այնտեղ, այդ ջրերի մեջ, լողացել է Շամիրամ թագուհին։ Հետո երևի նստել է քառաձի կառքը, կառքը կանգնեցրել է, բերդի պարիսպների տակ, իսկ ինքը բարձրացել է բերդը։

Շամիրամի գետի մոտ, թուրքերի փոխի օրերին, ես տեսա մի թուրք պառավի այլանդակված դիակը, իսկ դիակի մոտ սև մի կատու։

Երևի պառավը նրա տիրուհին էր։

Իսկ այդ գետում լողացել է սպիտակ թագուհի Շամի-

բամբ, նա, կրքոտ այդ թագուհին, Արա Գեղեցիկի լեգենդար երկրպագուհին։

Պառավը։ Կատուն։ Շամի...

. . . . . .

Սերտարանի լռության մեջ ճռճռում է գրիչը, և թղթի վրա դուրս է գալիս մի բառ՝ «Հայրենիք»։

Հետո գրում եմ հինգ տուն բանաստեղծություն, որի վերջին տողն է. «Գրկիդ մեջ պառկեմ ու մեռնեմ...»։

Երբ վերջացրի բանաստեղծությունը, մեծ, շատ մեծ մարդ թվացի իմ աչքին, այնքան մեծ, որ եթե հնար լիներ, ծունր կդնեի իմ առաջ և աղոթքի ու փառաբանության խոսքեր կասեի։

Այդ բանաստեղծությունը...

Դրանից հետո ես շատ լավ ու վատ երգեր գրեցի, բայց երբեք, երբեք իմ սիրտը ազվեց վսեմ այդ զգացմունքով և դողով։

Երբեք։

...Լուսաբաց էր։ Մայրապետը վառեց ինքնաեռը, առավոտվա թեյի համար։

28. ԱՐՅՈՒՆՔ ԵՎ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Մոտենում էր նոր տարին։

Պարոն Տիգրանը պատրաստում էր հավուր պատշաճի որբանոցային հանդես։

Չեմ հիշում ով՝ ինչ, բայց ինձ վիճակվեց արտասանել պարոն Տիգրանի երկու ինքնուրույն բանաստեղծություններ, որոնցից առաջինում խոսվում էր ինչ-որ քույրիկի, հեղինակի անմխիթար և լուրջ կացության մասին, ապա ինչ-որ նուրբ ակնարկ այն մասին, որ հեղինակը սույն այդ քույրիկից սպասում է ինչ-որ օգնություն... Գալով այդ օգնության, պետք էր որ այդ չափազանց անհրաժեշտ լիներ հեղինակի համար, քան որում շորս տուն ունեցող այդ բանաստեղծության մեջ 6 հատ «ախ» կար և 3 հատ «հեյ- վախ»... Մյուս

բանաստեղծությունը նվիրված էր զուտ հասարակական վշտին, որից շորս տող դեռ հիշում եմ.

Զուլում տարի, թալան տարի,
Խալան, գուլում, յաման տարի,
Սև սուգ բերիր, սևով էկար,
Անտեր տարի, վերան տարիր

Բանաստեղծության վերջում կար ինչ-որ հաստատուն հավատքի պես մի բան առ այն, որ պետք էր վերջանար այդ ամենը և ծագեր ինչ-որ արև...

Ավելորդ է ասել, որ այդ բանաստեղծություններն ինձ վրա թողին ցնցող ազդեցություն, և ես նրա վրա այն ժամանակ սկսեցի նայել այնպես, ինչպես հիմա նայում եմ, ասենք Պուշկինի վրա... Անաչառ լինելու համար արձանագրենք, որ նրա վաղ հեղինակությունը զգալի չափով նսեմացավ, երբ նա փոխանակ նույն հիացմունքով ընդունելու իմ սեփական ստեղծագործության երախայրիքը, բավականացավ թույլ տեղերը մատնանշելով և ինձ մի-երկու քաջալերանքի խոսք ասելով...

Հասավ նոր տարին, նրեկույթի օրը։

Դահլիճը լիքն է։ Բոլոր արտասանողները բեմի հետևն են։ Վարագույրը փակ է, իսկ իմ սիրտը հուզմունքից դողում է։

... Երբ ես բեմ դուրս եկա ու նայեցի դահլիճից դեպի ինձ սևեռված բազմաթիվ աչքերին, ունեցա այն զգացմունքը, ինչ որ կունենար բարձր սարից դեպի անդունդ նայողը։ Ես աչքս փակեցի և բերանս բաց արի։ Զգիտեմ ինչպես վերջացրի, բայց վերջացրի։ Այս ես իմացա նրանից, որ սկսեցին բուռն կերպով ինձ ծափահարել։ Ես գլուխս ուվի և դուրս եկա։

Բեմի հետև պարոն Տիգրանն էր։ Նա ինձնից պակաս չէր հուզվել։

— Մյուսն էլ, մյուսն էլ,— ասում էր նա։ Ես «բիս»-երին պատասխանեցի երկրորդ բանաստեղծությամբ։

Նորից ծափեր և «բիս»-եր։

Մինչև դահլիճում որոտում էին ծափերը, պարոն Տիգրանը կուլիսներում, «օրվա» թերթը ձեռքին, մոտեցավ ինձ։

— Գուրգեն, ուրախ լուր...

— ...

— Կարդա...

Կարդում եմ, և աչքերս շաղվում են։

«Հայկանուշ Անեմյանը կորցրել է իր որդուն, Գուրգեն Անեմյանին. տեղեկություն ունեցողներից խնդրվում է հայտնել Թիֆլիս, Վարանցովյան փողոց»...

Եվ հասցեն։

Կարծես գետինը շարժվեց ոտներիս տակ և հեկեկանքը բարձրացավ դեպի կոկորդս. այս ի՞նչ է, ցնո՞ր, իրակա-նությո՞ւն...

Իսկ դահլիճը շարունակում է ծափահարել և ինձ կանչել։

— Գնա խոնարհություն արա,— ասում է պարոն Տիգ-րանը։

Ուրախության և հուզմունքի արցունքով ես բեմ եմ մրա-նում գլուխ տալու, և հանկարծ դահլիճը լռում է։

Ես ուզում եմ գոռալ, ասել, հաղորդել դահլիճին, որ գտել եմ մորս, որ կենդանի է նա, որ ես, ես ինքս անձամբ մայր ունեմ, և նա փնտրում է ինձ... բայց դրա փոխարեն ես արտասվում եմ և գլուխ եմ տալիս։

Ինձ հիմա այնպես է թվում, որ մինչև այսօր, դեռ ոչ մի բեմի վրա չի թափվել այդքան անկեղծ արտասուք...

29. ՍԻՐՈ, ԽԱՆԴԻ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

— Մի օրիորդ քեզ դրսում հարցնում է...

Ես թողնում եմ գրքերս և սենյակից դուրս թռչում։ Դռան վրա կանգնած է օրիորդ Նազիկը։

— Դու ինձ մոռացե՞լ ես...

Ես ուզում եմ նրան ասել, որ չեմ մոռացել քեզ, որ կա-րոտել եմ և կարոտել շատ, որ քո համբույրները դեռ թաց են շրթունքներիս վրա, որ մինչև հիմա աչքերիցս չի հեռանում պայծառ հայելու մեջ ցոլումն մեր երկուսի գլուխները, որ դեռ երգում է մեջս քո մանդոլինը և քո երգը։

Ах, зачем эта ночь
Так была хороша...

Հետո՝ ինչ-որ խոսքեր և душа.

Ես ուզում եմ էլի շատ բան ասել, բայց դրա փոխարեն ասում եմ.

— Մայրիկիս գոնել եմ... Թիֆիսումն է։

— Դրա համար էլ ինձ մոռացել ես,— ասում է նա տրխրությամբ։

Իսկ ես նրան ուզում եմ ասել, որ, ընդհակառակը, ես քեզ կտանեմ մայրիկի մոտ, և նա շատ, շատ կուրախանա, որ ես մայրիկին կներկայացնեմ քեզ և կասեմ՝ «մա՛, սա օրիորդ Նազիկն է, սա ինձ սիրել է և համբուրել, սա մեզ հետ պետք է ապրի, սրան անհրաժեշտ է Վան տանել, որովհետև այլ նրա ցանկությունն էր։

Բայց ես միայն ասում եմ.

— Ես շատ ուրախացա... արդեն նրան տեղեկացրել են իմ մասին։

— Ուրիշ ոչինչ չունե՞ս ինձ ասելու,— ասում է նա դողդողացող ձայնով...

Ես նայում եմ նրա դեմքին, նրա պարզ, կապույտ աչքերին, և նա թվում է ինձ, ոչ թե օրիորդ Նազիկն է, այլ աշակերտուհի, այո, այո, ինչպես ես այդ մինչև հիմա չեմ նկատել, նա ունի կարճ շրջազգեստ, սև ու բազմածալ, հետո ունի երկու շեկ հյուսեր. այդ նա, որբանոցային սպիտակ և երկար խալաթի մեջ է օրիորդ Նազիկ, իսկ այսպես... այսպես նա Նազիկ է, ամենագեղեցիկ և սիրելի աղջիկը ողջ աշխարհում, ողջ աշխարհում ամենասիրելի աղջիկը։

Ես ուզում եմ նրան ասել, որ քեզ սիրում եմ, Նազիկ, օրիորդ Նազիկ, բայց դրա փոխարեն լռում եմ և անհագ աչքերով նայում եմ նրան...

Իսկ նա շուտ է գալիս և դանդաղաքայլ հեռանում է...

Երևոյան Հարությունն իր սովորական գոռոցով մոտենում է։

— Նամակ...

— Մի՛ գոռա... ումից է...

— Օրիորդ Նազիկից...

— Մի՛ գոռա, ասում եմ...

Ես բաց եմ անում նամակը և կարդում եմ.

«Գուրգեն,

«Նաշա ազբուկա»-ն տուր Հարությունին: Դա այլևս քեզ հարկավոր չէ, իսկ Հարությունին հարկավոր է:

Նազիկ»:

Ախ, այդպե՞ս...

Ես ինձ կորցրած՝ մի պինդ քացի եմ հասցնում Հարությունի փորին, իսկ նա գոռալով գնում է բողոքելու

30. ՄՈՐՍ ՆԱՄԱԿԸ

«Իմ քաղցր որդյակ.

Նախ և առաջ կհարցնեմ քո անգին որպիսությունը, և եթե մեզ հարցնես, մինչև գրյալ գրույս ողջ և առողջ ենք և քո անգին տեսության կլիափաքեմք։

Իմ քաղցր որդյակ.— Հայտնի լինի քեզ, թե ինչ դառն օրեր քաշեցիմք մեր բաժանումեն հետու։ Կորցրած քեզ և Սուրենին, Խորենի և Տիգրանի հետ Վան նեղգաղթեցինք և ավերակ գտանք։ Լար Վանն որպես Անի քաղաք, որ զոհ եղավ բարբարոսության և անգթության։

Իմ քաղցր որդյակ.

Մինչ մենք նստած հաց թխեինք, լուր եկավ հանկարծ, որ թուրքեր նորեն մտան քաղաք։ Պահ մտավ ամեն մարդ մի տեղ, իսկ ես Խորենին հավարուն մոցրի և պահեցի, իսկ ես տանիք բարձրացա։ Հետո ղղջալով Խորենեն բաժնվելուս, վար իջա և նրան ես տանիք տարա. իսկ հավարուն մի աղջիկ մտավ և ուրախ-ուրախ ուրախացավ, որ ապահով էր։ Եվ մենք տափեցինք տանիքի վրա և քաշեցինք թուրանջան ու մնացինք։ Իսկ Վարագա սարեն փչեց ցուրտ քամի, և մենք դողացինք։

Մեկ էլ լսենք, որ թուրքեր և քրդեր թաղ մտնեն և ջարդեն դռներ և թվանք թափեն։ Եվ սրեն հասավ մեր տան և նույնպես ջարդեցին դուռ՝ և թվանքով կրտորել սկսան։ Հետո գնացին, և Խորենն ջուր ուզեց, և ես վար իջա ջուր բերելու և

որտեղ ում դնեի՝ մարդու գլուխ էր, ում և փոր։ Լուս որ լուսացավ, վար իջանք տանիքեն և տեսանք որ հավարուն մուած այն աղջիկն էլ սպանված էր և արուն էրթար հավարունեն։

Ել ի՞նչ գրեմ, ձեռքս կապա, և գրիչս դողա, երբ հիշեմ ամենն։

Հետո դերի ընկանք և մեզ Ռուսն տարան և ունեին նպատակ Թիֆլիս տանելու, բայց կոմսվորնեին էկան և ազատեցին մեզ, և մենք նորեն ընկանք Իգդիրի ճանապարհ։ Ննջեին ճանապարհի երկու կողքերուն վրա ուռած դիակներ և կապույտ երեխաներ, և թափված էին շատ բուրդեր և շաքարի հալած գլուխներ և սմավարներ ու պղինձ-պղնձակալ։ Եվ դիակների մեջ շատ փնտրեցինք մայրիկին, բայց չգտանք և գտանք միայն Լեդրինի շոր և ճանաչեցի իմ կարած կոճակեն։

Իմ քաղցր որդյակ։

Թե հարցանես տնեն և այգիեն—Հաջի-Նանի ալուչի ծառ շորացել է, իսկ խնձորի ծառեր լավ են. մեր տուն վառեր են, իսկ մայրիկանց տուն՝ ոչ, բայց ավերակ են շիներ և տախտակներ վառեր են, իսկ պատկերներն ու հայելին ջարդեր։

Թե հիմա հարցնես՝ լավ ենք, և Սուրեն, խորեն Միրանավորի որդանոցն են։ Թիֆլիս քաղաք շատ մեծ քաղաք է և շատ գեղեցիկ։ Ես կծառայեմ հիվանդանոցի մեջ և փառք աստծու։ Իսկ բարեկամներեն մեռավ տարաբախտ Կայֆիսեն և մեր Ռուտանիկ, իսկ պարոն Մկրտիչ, Վարդան և Գառնիկ լավ են և առողջ։ Իսկ Տիգրան խանութ ունի։

Բավականանամ այսքանով և սպասեմ քո քաղցր նամակին և հուսով, որ մի օր պիտի արժանանամ քո քաղցր տեսության։

Մնամ քո մայր՝ Հայկանուշ Դ. Սեմյան

191... թ. ի Թիֆլիս

31. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԱՍՏԱ — 191... թվին, մեծ ողջերից բնարեցին համեմատաբար Ս-ը առաջադեմ և բնդունակ որբերի և ուղարկեցին Երևան՝ Թեմական դպրոցում սովորելու։

1

Հայերի շարադրությունը

Արևն իր վսեմ ճառագայթների խուրձերը կթափեր Դիլիջանի անտառների վրա, երբ կարմիր ճաղերով, մոխրագույն ձիերով մեր ֆուրգոնը Դիլիջանից շարժվեց դեպի Երևան։

Թռչունների երգը, խառնված հովիվների կանչին, ոչխարների մայունը խառնված կովերի բառաչին, գետի խշշոցը, խառնված առվի կարկաչին, այս ամենը, որպես զմայլելի ներդաշնակություն լսվում էին։

Կապույտ երկնքի վրա փայլող ոսկեգույն արևը կարծես հույս և կյանք էր ներշնչում կենդանուն և անկենդանին, և մեր ֆուրգոնը գնում էր աղմկելով և օրորվելով։

Մենք անցանք կանաչ անտառների միջով, որոնց ծառերը կարծես մեկմեկու գրկած պարում էին «Մշուխլո» կամ «առալառալա» և տերևները կաթեն ծափ էին տալիս, իսկ նրանք պարում էին ավելի և ավելի եռանդով։

Ահա և Սևանա լիճը։

Իմ գրչով չեմ կարա նկարագրել նրա գեղեցկությունը և վերջացնում եմ իմ փոքրիկ շարադրությունը, որը գրեցի մեր Երևան հասնելու օրը, առավոտ կանուխ, երբ արևն իր ոսկի ճառագայթների խուրձերը կթափեր Երևանի տների, այգիների և մեր որբանոցի վրա։

2

Գառնիկի շարադրությունը

Իմ անուշիկ հայրենիքից բաժանվելուց հետո եկանք Դիլիջան և այնտեղից ճանապարհվեցինք Երևան սովորելու։

Անշուշտ ողջունելի է։

Երբ դեռ ֆուրգոնը չէր շարժվել, ահա տեսանենք մեծ աղջիկների որբանոցից շրջա որբ աղջիկներ, սիրելի քույրիկներ, եկան և մեզ մի-մի զույգ կարմիր գուլպաներ տվին, որ իրենց՝ մեր սիրելի քույրիկներին, հիշենք։ Եկել էին Սիրոնը, Նոյեմ-

զարը, Սալվին և Սրբուհին։ Իսկ դուլպա ստացանք ես, Գևորգը, Հայերը և Գուրգենը։

Անշուշտ ողջունելի է։

Հիմա եկել ենք Երևան։ Մեր շորերը փոխեցին։ Մենք պետք է այստեղ սովորենք և մարդ դառնանք, և անշուշտ ողջունելի է։

3

Գևորգի շարադրությունը

Առավոտվա թեյից հետո պ. Տիգրանը ինձ պատվիրեց, որ Կոնստանտինի պաշարը պատրաստեմ, և ինձ տրվեց պատրաստելու համար 27 ձու, մեկ ֆ. պանիր, աղ, 9 ֆունտ հաց, և ես լեցրի մեշոկ և բերանը կապելով դրի ֆուրգոնի մեջ, և բոլորս էլ բարձրացանք ու Գիլիջանին մնաս բարով ասելով՝ ճանապարհ ընկանք դեպի Երևան։ Առաջին դյուղ հասնելուն պես մի քիչ քաղցածացանք, և ես բոլորին բաժանեցի հաց և պանիր, ու կերանք։ Ճանապարհին հանդիպեցինք ձմերուկներով լեցուն սայլի, բայց չկարողացանք ուտել։ Սևան որ հասանք, մի-մի ձու էլ կերանք, իսկ ֆուրգոնչին ասաց, որ Սևանա լճի մեջ համեղ ձկներ կան։ Մնացյալ պաշարը կերանք ճանապարհին և վերջապես հասանք Երևան, որը նշանավոր է իր պտղատու այգիներով։ Նոր որբանոց հասնելով անմիջապես ճաշեցինք և կերանք հաց, սուպ և վերմիշելով փլավ, երբ արևն իր ոսկե ճառագայթների խուրձերը կթափեր Երևանի տների, այգիների և մեր որբանոցի վրա։

Բարձրացավ վեճ և անբավականություն։ Հայերը գնդում էր, որ վերջին տողերը Գևորգը գողացել է իրենից, փաստարկելով, որ ճաշի ժամանակ առավոտ չէ, որպեսզի արևը կարողանա իր ոսկե ճառագայթների խուրձերը թափել, Գևորգը հակաճառում էր, որ իր արևը ոչ մի կապ չունի և չի ուզում ունենալ Հայերի առավոտվա արևի հետ և որ կեսօրվա, ճաշի ժամանակվա արևը պակաս ոսկի խուրձեր չունի։

— Մենակ քո արևն ի ոսկի խրձով, բալա՛մ...
— Մեքենա ես... իմ սաւածն ես երկնեն...
— Դու ես մեքենա... իմ սաւածն ուրիշ է, քոնն ուրիշ...
— Որ էդպես ի՝ դու ես ինձնից գողացեր
— Հնչ էլ չէ... արևն ինձնից ես գողացեր...
— Սրան մտիկ... Նպրայր, ախր դու գրել ես ձվի, հացի, ձմերուկի, ձկան մասին... արևն էդտեղ ի՞նչ գործ ունի...
— Յա՛հ... հելքին տես, բա արև որ չէլնի, ձու, հաց ձուկ, ձմերուկ ո՞րտեղից էլլինի...

Փաստարկումն ավելի քան հիմնավոր էր, պատճառաբանված և ջախջախիչ Ինցիդենտը լուծվեց Հօրուս Գևորգի, որն շտապեց դեպի խոհանոցի լողմերը, իմանալու համար, թե ինչ պիտի տրվի ընթրիքին...

Մենակ քո արևն ի ոսկե խրձով, բալա՛մ...

32. ՆՈՐԻՑ ՆՈՐ ՈՐԱՆՈՑ

Մեզ բաժանեցին մի քանի որդանոցների վրա և ահա շուրջ հոգու (կարմիր գուլպայավորներիս) տեղավորեցին մի որդանոցում։

Մեզ շրջապատեցին տեղացի որդերը։ Նրանք հագել էին երկար ֆարթուկներ և այդ զգեստավորումով խիստ նման էին մարդերը կտրած ադչիկներին։ Մենք մեր մտքում ծիծաղում էինք նրանց վրա։ Պարզվեց, որ մեր կարմիր գուլպաները նրանց համար նվազ ծիծաղելի չեն, հակառակ այն բանի, որ մենք այդ գուլպաները կրում էինք ավելի մեծ հպարտությամբ, քան որևէ ազնվական՝ իր ծիրանին։

Մեծ եղավ իմ զարմանքը, երբ ես տեսա մեր կառավարչուհուն։ Դա ոչ այլ ոք էր, եթե ոչ Ռուտյան Աբրահամի կինը։ Ջահել և գեղեցիկ այրի կնոջ արժանապատվության և իր գեղեցկության պիտակցության շեշտված գրացումով նա շրջում էր որդանոցում և անում էր կարգադրություններ։ Ռուտիից որտեղ դուրս է ընկնում Օննիկը՝ Քոչոն, մենք ողջագուրվում ենք, և ես ինձ այնքան լավ եմ զգում, որ թվում է թե տանն եմ և ոչ թե որդանոցում։

Որքանոցի բակում, ծիրանենների տակ, ես և Օննիկը պատմում ենք մեր ապրումների և ապրած օրերի մասին։ Շատերն են մեռել, իսկ շատերի մեջ պաչծառ աղջիկ Մայիսը, մեռել է Կարտաղան, Կուլոզյան Պանհանեսը։ Իսկ Վարդա՞նը, հարցնում եմ ես, ո՞ւր է Վարդանը։

— Այստեղ է,— պատասխանում է Օննիկը,— շուտ-շուտ գալիս է։

Այդպե՞ս...

Հնչում է ճաշի զանգը։ Բոլորն էլ շարքի են կանգնում ըստ հասակի կարգի. ամենից երկարը Առաքելն է, որին լագլագ են կանչում։ Շարքը շարժվում է դեպի սեղանատուն։ Այնտեղ երկար սեղանների վրա. հավասար հեռավորության վրա շարված են ճաշի պարագաները՝ դանակ, պատառաքաղ, գդալ... իսկ և իսկ «ալաֆրանկաս»։ Նստում ենք մոնում, ամեն մարդ բռնում է իր տեղը, բայց դեռ չենք նստում։

— Պատրաստ,— ասում է հերթապահը, և մենք պատրաստվում ենք։

— Աղոթենք,— ասում է հերթապահը, և մենք աղոթում ենք...

Ով հա՛յր, օրհնե՛ ա՛յս սեղա՛ն,
Թո՛ղ բարիքնե՛ր հո՛ս տեղա՛ն,
Տո՛ւր մե՛զ քո սի՛րտ մանավա՛նդ
Ո՛ր մի՛շտ փառք տա՛նք սո՛ւրբ անվա՛նդ. ամե՛ն...

Սկսվում է ճաշը։ Խոհանոցի և ճաշարանի մեջ մի քառակուսի անցք կա։ Շեկ բեղերով և մորուքով խոհարարը մեկմեկ լցնում է պնակները, իսկ սպասավորող որբերը բաժանում են ճաշողներին։ Երբ արդեն բոլորին բաժանած է լինում, կամաց մոմռում է խոհարարը.

— Մենձերին...

Հերթապահները վազում են դեպի մեծ տղաների պնակները։

— Մեծերին կրկին կա...

— Մեծերին, հա մեծերին,— քրթմնջում են փոքրերը և ագահ աչքերով նայում են մեծերի համար կրկնվող պնակներին։

ճաշը վերջանում է։

— Ոտքի,— ասում է հերթապահը, և մենք կանգնում ենք։

— Պատրաստ,— ասում է հերթապահը, և մենք պատրաստվում ենք։

— Սղոթեք,— ասում է հերթապահը, և մենք աղոթում ենք։

Շնորհակա՛լ ենք փոխարե՛ն բարյա՛ց,
Ո՛ր տվիր մե՛զ, ով տեր աստվա՛ծ,
Շնորհե ասկե՛ ունունդ առա՛ծ
Գործածել վա՛ան քո փառա՛ց. ամե՛ն...

— Անցե՛ք,— ասում է հերթապահը, և մենք անցնում ենք բակը։

Այստեղ Մելքոնը կախվում է ծառից և մարմնամարզությամբ է զբաղվում, Առաքելն իր երկար ձեռներն ու ոտները բացած լոք-լոք է անում և վախեցնում է Համզոյին, Գևորգը խորհրդաստ դատողություններ է անում ճաշի որակի և քանակի մասին, ոմանք վազում են ջուր խմելու և լվացվելու, իսկ Մնացականը, թվաբանության գիրքը ձեռին, քաշվում է ծառերի տակ և խնդիրներ է լուծում։ 215 խնդիր արդեն նա լուծել է։

Գալիս է ծախսարարը. կանգնում է բակի մեջտեղը և գոռում է։

— Տիկին։ Տիկի՜ն...

Դուրս է գալիս պատշգամբ տիկինը։

— Վաղվա խամաբ ի՞նչ առնեմ...

— Մարտիրոս աղա, կառնես երկու փութ կարտոֆ...

— Առի...

— Մեկ փութ միս...

— Էլաչ...

— Երեք փութ հաց...

— Էկաչ...

— Մեկ փութ բրինձ, կես ֆունտ դարչին...

— Չրանց... դարչին չկա...

— Կգտնես, Մարտիրոս աղա, կգտնես...

— Թուաֆ-թուաֆ մի խոսի... չկա, դարչին չկա...

Գնում էր Մարտիրոս աղան և առաջին հերթին դարչին էր

գոնում։ Իսկ Գևորգը զուր հասուկ քննության էր առնում ճաշերի բաղադրությունը. նա ոչ մի կերպ չէր կարող գտնել, թե ինչի մեջ էր գործածվում դարչինը։ Նազարը բացատրեց, որ պաշտոնյաների համար առանձին ճաշ է պատրաստվում, և որ դարչինը նրանց կերակուրների համար է։ Գևորգի աշխատանքը կրկնապատկվեց. ուրեմն նա պարտավոր էր ոչ միայն որբերի, այլև պաշտոնյաների ճաշերին հետևել...

— Լաց-լացն էկա՞վ, փախե՞ք, փախե՞ք...

Ծաղրածու Հայկակն էր։

33. «ՉԱՉԱՐ, ՉՈ՞ՒԿ...»

Իջնում է իրիկունը։

Նույն կարգով նստում ենք թեյի։

Գալիս է խնամակալուհին՝ տիկին Հայկուհին, մի վիթխարի, բայց համաչափ կազմվածքով դեղեցկուհի, որն ինձ վրա թողնում է ցնցող տպավորություն։ Կրծքային մարտը տենորով նա խոսում է որբերի հետ, ծանոթանում է նորեկներին, անում է մի քանի կարգադրություն և կատարողուհու հետ բարձրանում է վերև։

Նազարը, որը զրեթե ամենից տարիքոն է մեր մեջ, դեռ չի կարող իր հայացքով պոկվել այն դռնից, որից դուրս եկավ տիկին Հայկուհին։ Նա կծկվել է, երկու ձեռքով գրկել է ոտքերը և մշուշված աչքերով նայում է դռներին։

Նազարին դուրս կանչեցին։

Բարեսիրտ և մելancholիկ տղա էր Նազարը։ Նրա երեսի մազերը մեծ եռանդով սեանում էին, և նա շարունակ մկրատով պայքարում էր նրանց դեմ։ Մնվել էր Մարմեռում, որը նշանավոր էր իր ձկնառատ համանուն գետով։

Աղոթքից հետո դուրս եկանք։

Արցունքն աչքերին կանգնել էր Նազարը մի տասը տարեկան տղայի ձեռքից բռնած։

— Հորեղբորս տղան է... նոր դուա... տիկինն ասում է տեղ չկա... ես դո՞ր թողնեմ էրթա...

Մի պատգամավորություն մեկնեց տիկնոջ մոտ միջնոր-

պնու, որպեսզի փոքրիկը առժամանակ մնա որբանոցում և ինի նազարի մոտ, ցնոր կարգադրություն։ Միջնորդությունը հարկվեց։ Նազարի ուրախությանը չափ-սահման չկար։

Ես Քոլոշոյի հետ մի զրույց ունեցա։

— Բա էստեղ աղջիկների որբանոց չկա՞...

— Կա... երկրորդ որբանոց...

— Լավ աղջիկ կա՞...

Քոլոշոյի աչքերը վառվեցին։

— Մեկը կա, շա՞տ լավն է...

Իմ սիրտը ավանսով տրոփեց։

— Անունն ի՞նչ է...

— Սիրարփի...

Ես ավանսով սիրահարվեցի և չմոռացա այս կարևոր իրողության մասին տեղեկացնել Հայերին, Գևորգին և Գառնիկին։ Նրանք միաձայն որոշեցին, որ ես առնվազն հիմար բան եմ ասում և որ չի կարելի առանց տեսնելու սիրահարվել։ Ես չկարողացա պաշտպանվել և շատ ջղջացի, որ իմ սրբազան պատգամիքը դրի նրանց կոպիտ դատողություններին տակ։

Պառկեցինք քնելու։ Բոլոր որբերն իրենց մահճակալներով, շորերով և անկողիններով համարակալված էին։ Այստեղ—Առաքելը № 1-ն էր, ես՝ № 9-ը։ Մեր սենյակը վերջանում էր № 18-ով, Միհրան Արաջյանով, որն իր գեղեցկության համար կոչվում էր «Աղջիկ-Միհրան»։ Նազարը տեղավորվեց իր փոքրիկ հորեղբոր որդու հետ։ Հայկանին սկսեց իր ընթացիկ գլխաբեկությունները, իսկ Մնացականը 240-րդ խնդիրը լուծեց։ Ահա Գևորգը հանվում է և մեծ ախորժակով պատմում Վարագա վանքի դիշերօթիկների կյանքից. նա եղել է Վարագա սաներից։ Մելքոնը պառկած մաժում է իր թևերի մկանները և բազուկը թափ է տալիս առաստաղի վրա, իսկ Նազարը կիսաբաց աչքերով երևի հիշում է տիկին Հայկուհու գեղեցիկ գլուխն ու փարթամ կազմվածքը...

— Զազար, ձո՞ւկ...— լսվեց փոքրիկի ձայնը։

— Սուս, հիմար... ձուկ չի...

Հայկակը փոթկաց։ Քիչ հետո ամբողջ ննջարանը լցվեց հոմերական մի քրքիջով։

Նաղարը լուռ էր։ Այդ օրվանից նրա անունը կնքվեց «Զաղար ձուկ»։

Մուսավորապես նման մի կնունք տեղի ունեցավ Հետու Մի անգամ Հայերն ու Մնացականը կատաղի ցուլերի նման հարձակվեցին մեկմեկու վրա։ Ամբողջ որքանոցն իրար անցավ։ Հասան մի քանի հոգի և հազիվ կարողացան նրանց բաժանել։ Զանգ տվին, և բոլոր որբերը հավաքվեցին սերտարանում։ Տիրում էր քար լռություն։ Բոլորն էլ գտնվում էին պատահած դեպքի ծանր տպավորության տակ։

Երևաց դաստիարակ պ. Արամը և սկսեց մի ճառ.

«Դեպքը պատահած է։ Փասը ցցուն է...»։

Եվ նրա անունը մնաց «պարոն Ցցուն»։

34. ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ամեն անգամ, երբ փողոցով անցնելիս ես հանդիպում եմ գրքերով դեպի դպրոց շտապող աշակերտների, կամ տեսնում եմ նրանց դպրոցից վերադառնալիս, ինձ տիրում է մի անուշ անձկություն։

Ելնում են տարիների մուժ ու մշուշից, անցած օրերի հեռավոր մառախուղից, իմ դպրոցական անվերադարձ տարիները։ Նրանք կանչում են ինձ մշուշե մատներով։

Իմ դպրոցական տարիները։

— Չե՞ս հիշում, այդ ես եմ, թեմական դպրոցը, երկար պատշգամբով և միջանցքով, տափակ կտուրով, եպիսկոպոսանիստ առաջնորդարանից մի պարտեզով բաժանված։

— Տեղացի աշակերտներին խառնվեցին գաղթական որբեր և սկսեցին սովորել, իսկ դու որբ էիր։

Աղմկալից դասամիջոցներ, անցած դասընկերների անուններ, սիրված և չսիրված ուսուցիչների դեմքեր... Եվ մի՞թե անդարձ կերպով կորել են այդ տարիները, և մի՞թե ես այլևս չեմ կարող գրքեր վերցնել և վազել դպրոց։

Անդարձ կերպով կորել են այդ տարիները, և ես այլևս չեմ կարող վերցնել գրքերս և վազել դպրոց։

Ահա մեր հայերենի ուսուցիչը՝ պ-ն Ստեփանը, բարկացյալ աչքերով, ջղային, բայց բարեխիղճ մի ուսուցիչ։ Նրան էր վիճակված ռուսահայացնել մեր բարբառը։

— Մի քորշ խրճիթում...

— Գո՛րշ-գո՛րշ...

— Քեռի եղբքին...

— Գեռի՛... գ, գ, ոչ թե ք...

— «Փալակա՛ն է.— ասաց Քարեգի՛նը... թո՛ւռը... փա՛ց...»։

— Բալակա՛ն է... Գարեգի՛նը... գո՛ւռը... բա՛ց...

Իսկ ամենից դժբախտը մեր կրոնի ուսուցիչն էր։ Ջեղավ մի անգամ, որ նա առանց ինցիդենտի կարողանար դասավանդել։ Խե՞ղճ պարոն Սաքո. բանն այնտեղ հասավ, որ նրա անառակ աշակերտներից մեկը ատրճանակ քաշեց նրա վրա, ահ ու սարսափ պատճառելով նրան։

Դեպքը պատահեց այսպես.

Այդ աշակերտը կրոնի դասի ժամանակ հանեց «Հորիզոն» թերթը և բարձր բռնած սկսեց կարդալ.

— Մանվելյան, պահիր թերթը, հետո կկարդաս... Այն ժամանակ Հիսուսը հավաքեց իր աշակերտներին, լեռը բարձրացավ... Մանվելյան, ծալիր թերթը... անցյալ անգամ մենք տեսանք, որ երբ Հիսուսը... Մանվելյան, թերթը...

Ամբողջ դասարանը նայում էր Մանվելյանի կողմը։

Նա կամաց իջեցրեց թերթը և նրա հետևից երևաց ատրճանակի փողը, ուղղված դեպի պարոն Սաքոն։

Դասարանն իրար անցավ, ուսուցիչը սարսափահար դուրս փախավ, իսկ Մանվելյանը ամենայն հանգստությամբ մի ծխախոտ վառեց։

Ահա հնչում է վերջին զանգը։ Խուռն աշակերտությունը դիմում է դեպի տուն։ Մենք շարք մտած քայլում ենք դեպի որբանոց, իսկ դպրոցի բակում կանգնած է «թեմական դպրոցի բարեբար» Թայիրյանի արձանը՝ կույր աչքերով։

«Դասընկեր», Ջիբրալտարի նեղուց, Կայիպա քահանա ու մշո՛ւշ...

35. ԻՆՐ ԵՎ «ԱՐԾԻՎ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ»

Կարիք չկար և իզուր Օննիկը նեղություն քաշեց, ցույց տվեց ինձ Սիրարփին։ Հապար հոգու մեջ ես կգտնեի, կճանաչեի նրան և կասեի. «Ահա այն աղջիկը, որին ես սիրել եմ դեռ չտեսած և որի հետ կարծես հազար տարվա ծանոթներ ենք մենք։

Երկրորդ որբանոցում երեկույթ է։

Երեկույթը բացվեց։ Հայերը, Գեորգը, Գառնիկը և ես նստել ենք մի նստարանի վրա։ Օննիկը ցույց է տալիս զանազան որբանոցի զանազան կառավարչուհիներին, տալիս է որբուհիների անունները, բացատրում է, ապացուցում։

— Ահա,— ասում է նա,— այն չորս աղջիկները. նրանք ամենալավ աղջիկներն են, երկրորդ որբանոցից, միշտ միասին են լինում. էն մեկը Սիրարփին է, Անժել, Նվարդ և Զարիկ... կարմիր վերարկուներով... բոլոր աղջիկների մեջ միայն նրանք են կարմիր վերարկուներով։

Նստել են որբերը կողք-կողքի և քշփշում են, աղջիկները նայում են տղաների կողմը, տղաները՝ աղջիկների. Առաքելն ու Մհրանը խոսում են նստած մի-մի աղջկա հետ, շարժելով ընդհանուրի նախանձը։

— Քույր են պոնի,— բացատրում է Օննիկը։

«Քույր—եղբայր»,— սա սիրահարության այն ժամանակվա զուտ որբանոցային վարիանտն էր, որը հետագայում համաճարակի փոխվեց...

Երեկույթը վերջացավ։ Դուրս եկանք բոլորս և շարքի կանգնեցինք։ Ճանապարհին ոչ ոք ոչինչ չխոսեց, բայց չորսս էլ զգում էինք, որ իրար ինչ-որ կարևոր բաներ ունենք հաղորդելու։

Երբ որբանոց հասանք, մենք, կարծես նախապես պայմանավորված, առանձնացանք մեծ բակում։ Այնտեղ պարզվեց, որ չորս հոգով անբուժելիորեն սիրահարված ենք, և ամեն մեկին թվում է, որ իր սիրո առարկան ամենագեղեցիկն է համայն աշխարհում...

Բախտավոր զուգադիպությամբ սիրո առարկաները տար-

բեր անձնավորություններ էին, որով և ապահովված էր մեր շրջության համերաշխությունը։

Հիմա մենք պիտի նստենք և սպասենք, մինչև շաբաթները անցնելուց հետո մի նոր երեկույթ կայանար, որպեսզի շրջս մնայնագործական ռոմեոներս հանդիպեինք մեր նույնքան մնայնագործական ջուլիետներին։

Մանր, շափազանց ծանր էր մեր դրությունը։

Պետք էր առիթներ ստեղծել ավելի շուտ-շուտ հանդիպելու, ավելի շուտ-շուտ տեսնելու նրանց, թեկուզ հեռվե-հեռու, անծանոթ, առանց մի խոսք փոխանակելու... բայց ինչպե՞ս, ինչպե՞ս...

Տիրեց ծանր լռություն։

Առաջինը խոսեց Գառնիկը։

— Եկեք նամակ գրենք...

Այս գործնական առաջարկությունը, սակայն, ոչ մի ընդունելություն չգտավ։

Շրջս սիրտ տրոփում է, և մոռացում է շրջս ուղեղը։

— Եկեք թերթ հրատարակենք,— առաջարկում է Գևորգը և շփում է քիթը։ Ինչպես մենք առաջինը գլխի չընկանք...

Ելքը գտնված էր։

Ուրախ մեր դյուտով, անցնում ենք կազմակերպչական աշխատանքներին։

Գևորգին անմիջապես ձեռնադրում ենք խմբագիր. մնում է թերթի անունը որոշել։

— «Զգում»,— ասում է Հայերը։

— Ինչի՞ ձգում,— առարկում ենք մենք։

— Ազատության ձգում, —ասում է նա։

— Ախր ի՞նչ ազատության ձգում...

— Երկրորդ որքանից գնալու,— ասում է նա և ծիծաղում է։

— Որ այդպես է,— առաջարկում եմ ես,— թերթի անունը պարզապես դնենք «Կարմիր վերարկու...»։

Մեզ նորից օգնության եկավ Գևորգն ու նրա Վարագի սանությունը։

— Գոա՛,— ասաց նա ու նորից քիթը շփեց.— «Վրծիվ Վասպուրականի»...

Այս, «Արծիվ Վասպուրականի», իսկապես որ տղան գտել էր։

Որոշվեց, որ հենց մյուս օրվանից անցնենք աշխատանքի, որից հետո ամեն մեկս մի պատկեր գրկած՝ քուն մտանք։

36. ԳՈՐԾԻ ՎՐԱ ԵՆՔ

Մեր ձեռնարկության համբավը կայծակի արագությամբ տարածվեց որբանոցում։ Կառավարչուհին, օգնականուհի տիկին Լուսաբերը, գաստիարակը ողջունելով ողջունեցին մեր ձեռնարկությունը։ Եկավ խնամակալուհին և խոստացավ թղթի հոգսը վերցնել իր վրա։ Թերթը պիտի լիներ ձեռագիր, 5—8 օրինակ, թերթը,— այս ամենակարևոր և ծանրակշիռ կողմն էր խնդրի,— պիտի բաժանվեր նաև մյուս որբանոցներին։

Հայտարարեցինք, որպեսզի առաջին համարի համար նյութեր տան։

Մենք էլ մեր հերթին սկսեցինք նյութեր պատրաստել։

Գևորգը գրեց խմբագրականը, որը վերջանում էր բուռն պաֆոսով։ Երիտասարդ խմբագիրը «հետադարձ հայացք մը կնետե անցյալին վրա», այնուհետև պարզաբանելով թերթի համեստ նպատակները՝ «կբացականչե».

— Եվ կգա մի օր, երբ «Արծիվ Վասպուրականի»-ն Վարագա լեռներուն վրա պիտի ճախրե։

Հայերը տալիս է ընության մի նկարագրություն, Գառնիկը՝ անհամ մի բանաստեղծություն, որից մի քանի տող.

— Էն ո՞ւմ յարն է կանգնած բալգոն ծամ կիստակե,
— Էն իմ յարն է, կանգնած բալգոն ծամ կիստակե։
— Էն ո՞ւմ յարն է ֆարթուկ հագած գետին կավլե։
— Էն իմ յարն է ֆարթուկ հագած գետին կավլե։
— Էն ո՞ւմ յարն է...
— Էն իմ յարն է...

Եվ այսպես անվերջ. ծամ իստակելուց, գետին ավլելուց հետո, սույն այդ յարը ջրի է գնում, աղբյուրի վրա լվացվում է, ջուր է խմում, մի անգամ էլ «ծամ կիստակե», հետո եր-

գում է աղբյուրի վրա, պարում է ու վերջացնում է, երբորդ անգամ ծամ իստակելով...

Գառնիկի նյութը ընդունվեց։ Բոլորս էլ գտանք, որ աշակերտական թերթի համար «յուր» բառը անհարմար է։ Գառնիկը ավեց մի ուրիշ բան, արձակ բանաստեղծություն, որի մեջ քերթողը հարցնում է կռունկին, թե տեսե՞լ է իր հայրենիքը և թե ի՞նչ կարևոր նորություններ կան այնտեղ։ Կռունկը միայն իր երգն է շարունակում և հրաժարվում է հեղինակի հրատապ հարցերին պատասխանելուց։

Օննիկը մի արձակ բանաստեղծություն է տալիս, նվիրված հոր հիշատակին, սարսափելի մռայլ մի բանաստեղծություն. հեղինակն սպառնում է հոր կողքին պառկել և լալ, շքալականանալով այդքանով՝ նաև մեռնել։ Պարոն Սրամը նրան խորհուրդ է տալիս՝ մի քիչ մռայլությունը մեղմացնել և տալ մի քիչ էլ բնության նկարագրություն։

Ամբողջ օր Օննիկը շարշարվեց, բայց երկու տողից ավելի չկարողացավ փոխել. ահա այդ տողերը.

«Հոր հիշատակին»

«Հայր, երբ գարնան արևը բարձրանա լեռների կատարներին, զոմբուկներս լծեմ, գամ շիրմիդ այցի»։

Ու կանգնեցի Ի՞նչ աներ այդ անհարմար դրության մեջ խեղճ ազան. թողնել լծած գոմշուկները և լա՞լ. բայց չէ՞ որ դրանից բանաստեղծությունը նորից կմռայլվեր։ Վերցներ, հերկե՞ր...

Ես տվի արձակ բանաստեղծություն «Մենության արցունքներ» վերնագրով, որի մեջ երգում էի մի քույր, մի քանի վիշտ և բազում արցունքներ, շհաշված ինչ-որ դիշերներ և մի շարք աստղ ու լուսիններ։

Մնաց կնոջանունը ճարելու հարցը։ Այդ մեզ թվում էր նույնքան կարևոր, որքան թուղթն ու թանաքը։

Ու գտանք մի-մի կնոջանուն։

Գևորգը կնքեց իրեն Գվատոն, ապա՝ Գ. Պարունի, Հայերը՝ Մաուաժո, Գառնիկը՝ Գ. Սիրվան, Օննիկը՝ Որբունի, ես՝ Վարոնը... Սերունի...

Մի բանաստեղծություն էլ Մնացականը ուզեց (նա արդեն լուծել էր 365 խնդիր) և առաջարկել էր Տիրատու Երբ մենք հարցրինք, թե ինչ է նշանակում տիրատու, նա պատասխանեց.

— Տեր աստղ...

Եվ այս մեծ ստվերություն թողեց մեզ վրա։

Լույս տեսավ թերթի առաջին համարը։

Ընդունելությունը մեծ էր և հույժ խանդավառ։

Բոլոր որբերը, նախանձելով մեր փառաց պսակներին, քաշվեցին պատերի տակ և մատների վրա հաշվելով սկսեցին բանաստեղծություններ գրել։ Հաշվում էին ինքնամոռաց մոլուցքով, վառված և տարված, հուզվում, բարկանում էին, երբ դուրս չէր գալիս, մեկմեկից խորհուրդ էին հարցնում ու, պատասխան չստանալով, գրում, գրում, գրում...

Այս գրելացավից վարակվեց նաև թերթի խմբագիր Գևորգը, որն իջավ իր հրապարակախոսի բարձունքներից, գրեց բանաստեղծություն և դուրս եկավ այսպիսի մի բան.

«Գեղեցիկ աղջիկ, վարդերես ես,
Քեզի սիրեցի մանուկ հասակիս,
Առջևդ շոքեցի, շատ արտասվեցի,
Շատ ապաշեցի, որ սիրես ինձիս։

— Էս ո՞ւմ մասին ես գրել, Գևորգ...

— Նրա...

— Ո՞ւմ...

— Նրա, էլի՞...

— Ախր նրա հետ դեռ ծանոթ էլ չես...

— Ի՞նչ կա որ...

— Ախր ե՞րբ ես շոքել, ապաշել, արտասվել...

— Բանաստեղծություններ երևակայություն է, բալամ...

Գրելացավը կամաց-կամաց սպառնալիս և վտանգավոր տեսք էր ստանում։ Շատերն սկսեցին դասերը չսովորել և միմիայն բանաստեղծություններ գրել, ուրիշները մի հանդ չճարելու համար կորցնում էին և՛ քուն, և՛ ախորժակ, ոչ ոք չէր համարձակվում մյուսից խորհուրդ հարցնել,— պատասխանը պատրաստ էր և նվաստացուցիչ.

— Ակ օղուլ, տաղանդ որ չունես, ինչի՞ կգրես...

Գրելացավը դուրս եկավ որբանոցի պատերից և տարածվեց դուրս։

Մի օր էլ եկավ Վարդանը։

— Բանաստեղծություն եմ բերե,— ասաց նա աշխույժ ժպիտով։

— Տուր...

— Չէ, ես կարդամ...

— Կարդա։

Նա սկսեց մեծ պաֆոսով.

— «Երբ գունատ արևը իր ոսկեղեն մազերով կիսախավար խրճիթիս նեղ անցքերեն ներս կնայի...»։

Ես իմ հուզմունքը չկարողացա զսպել։ Խեղճ իմ Վարդան, ինչպես ես ապրում կիսախավար այդ խրճիթում...

Վարդանը պատրաստվեց գնալու. գոնեքի մոտ նա հարցրեց.

— Չէրթա՞նք Վարադ...

— Էրթանք,— ժպտալով ասի ես, և մի բոպե երկուսս էլ սխրեցինք։

Հետո նա ասաց.

— Բանաստեղծությունս լա՞վ էր... լավ էր, չէ՞... «Երբ գունատ արևը ոսկեղեն մազերը կիսախավար խրճիթիս...»։

Ու գնաց։

Հետագայում ես եղա հորաքրոջս տանը, այնտեղ էին ապրում Վարդանն ու Գառնիկը։ Ի՞նչ կիսախավար խրճիթ, կանոնավոր, արևոտ սենյակներ, լուսառատ պատուհաններով...

— Բանաստեղծությունը երևակայություն է, բալամ...

37. ԴԵՊԻ ԵՐԿՐՈՐԴ ՈՐԲԱՆՈՑ

Պատասխանատու խմբագիրն ու խմբագրական կոլեգիայի երեք անդամներս վերցնում ենք մեր թերթի ձեռագիր օրինակները և հատուկ արտոնությամբ ուղևորվում ենք դեպի որբանոցներր՝ լույս տարածելու։

Բոլոր որբանոցներին տալիս ենք մի-մի օրինակ. մնում է մի օրինակ, իսկ այդ՝ երկրորդ որբանոցի համար է։

Մի չնախատեսված դեպք պատահեց։

Առաջին որբանոցի բակում կանգնել և սպասում էինք մեծ աղջիկներից մեկնումեկին, որին հնարավոր լիներ թերթը վստահել։

Թելից պատրաստած մի խաղագնդակ ընկավ պատշգամբից մեր ոտների տակ, իսկ Գառնիկը կռացավ և վերցրեց։

Գնդակի նման արագ՝ կարմրատակած դեմքով և սևաշվի մի աղջիկ սանդուղքներից վար սլացավ և մոտեցավ Գառնիկին ու շարաճճի փութկոտությամբ գնդակը խլեց նրա ձեռքից։

Թռավ գնդակը և գլորվեց, կարճ շրջազգեստով աղջիկը վազեց նրա հետևից, կռացավ և վերցրեց։

Գառնիկը շառագունեց ճակնդեղի պես։

Գևորգը մոտեցավ աղջկան, ապա քիթը շփեց.

— Ներողություն, թերթ ենք բերե...

— Ի՞նչ թերթ...

— Մեր որբերի թերթ... մեկը ձեզ համար...

Աղջիկը վերցրեց թերթը, թռուցիկ կերպով նայեց և դարձավ Գառնիկին.

— Դու է՞լ ես գրել։

Գառնիկը դժվար բան կուլ տվողի պես գլխով դրական պատասխան տվեց։

— Շնորհակալություն, — ասաց աղջիկը և սանդուղքներից արագ-արագ վեր բարձրացավ։

Ահա դեպքը, որն ինքնըստինքյան կարելի էր ոչ մի ուշադրության չարժանացնել, եթե նա չունենար անակնկալ հետևանք։

Երբ մենք արտատրոի մոտենում էինք երկրորդ որբանոցի դռներին, Գառնիկը մի քայլ ետ մնաց և հայտարարեց.

— Ես չեմ գա։

— Ինչի՞։

— Չեմ ուզե։

— Խո աղջիկ չե՞ս։

— Չէ, ամչնալու համար չիե։

— Ապա ինչի՞ չես գալ։

— Գնանք տես, է՞։

— Նրան չեմ ուզեր։

— Ախր ինչի՞, է՞։

— Ես փոխեցի։

— Ի՞նչ փոխեցիր։

— Ես առաջին որբանոցի աղջկա՞ն կսիրեմ։

Առ քեզ տրաքոց։

— Ինչի՞, նա գնդակ ունի դրա՞ համար,— կատակեց Հայերը։

— Արի, արի, սա էլ գնդակ կունենա...

— Բա ինչի՞ անցյալ օր երեկույթին ասիր սիրահարվեր եմ։

— Դուք ասիք, ես էլ ասի, ես, Հիսուս-Քրիստոս, նոր սիրահարվա։

Գեորգը մտածմունքի մեջ ընկավ։ Նա լուռ էր։

Իզուր ես և Հայերը վեր հանեցինք Նվարդի երեսի և աներևույթ արժանիքները և անողոք քննադատության ենթարկեցինք գնդակ խաղացողին, իզուր տաքացանք և արյուն պղտորեցինք։

Գառնիկն անդրդվելի մնաց։

— Մե՛նք էրթանք,— հուսահատված որոշեցինք մենք և մեր մտքերում Գառնիկին «դավաճան» անվանեցինք։

Ես և Հայերը առաջ անցանք։ Գեորգը կարծես ակամա շարժվեց։

— Հը՞, դո՞ւ էլ,— դարձավ Հայերը Գեորգին։

— Ի՞նչ...

— Փոխեցիր...

— Չէ՞... ինչի՞,— անորոշ արտասանեց Գեորգը և տրնկտրնկ հետևեց մեզ։

Դարբասից ներս մտանք և անհամարձակ առաջացանք։ Բակումն ենք։ Որբերը խաղում են պարտեզում։ Մտնում ենք պարտեզ։ Մի ձեռք կարծես բռնում է սիրտս և ճմլում է։ Նրանք են, անբաժան շորսը նստել են մի նստարանի վրա և ինչ-որ ձեռագործով են զբաղված։ Հայերը չգիտե ձեռներն ուր պահի, իսկ Գեորգը նայում է բութ հետաքրքրությամբ...

Երբ նրանք մեզ նկատեցին, արմունկներով իրար մրչտեցին, միասին վեր կացան և դանդաղ քայլերով մոտեցան մեզ։

— Բարև ձեզ,— ասինք մենք գրեթե միասին։

— Բարև,— պատասխանեցին նրանք։

— Ձեզ համար թերթ,— ասաց վերցրեց Գեորգը։

— Ի՞նչ թերթ։

— Մենք ենք հրատարակել, —ասաց Հայերը՝ հուզմունքից խեղդվելով։

— Դուք երբվրդ ոլբանոցի՞ց եք,— հարցրեց Սիրարիին։

Ես անասելիորեն հուսահատվեցի։ Նա միենչ անգամ մեր մասին չգիտե...

— Այո,— պատասխանեցինք մենք։

Նրանք նայեցին թերթը։

— Գվատոն ո՞վ է,— հարցնում է Անժելը։

Ես և Հայերը ցույց ենք տալիս Գեորգի վրա, իսկ Գեորգը քիթն է շփում ու նայում թերթի վրա այնպես, որ կարծես առաջին անգամն է տեսնում։

— Մառաժո՞ն...

Ես ցույց եմ տալիս Հայերի վրա, իսկ Հայերը հուզմունքը զսպելու և մի բան անելու համար հանում է թաշկինակը և ազմուկով մաքրում է քիթը։

— «Մենության արցունքներ»,— կարդում է Սիրարին,— «քույր, այս գիշեր լուանի շողերի տակ քեզ հիշեցի ու լացի...»։

Իսկ ես ամոթից ու հուզմունքից ուզում եմ գետին մտնել։

— Սա՝ սիրահարական է, ո՞վ է գրե... Վալտեր-Սերունի...

Անիծվածները մատնում են, իսկ ինձ թվում է, որ զարդանիքի կեսն արդեն բացված է։

Միամիտ, հիմար և ծիծաղելի ժամ. քեզ կարող էր տանջել միայն պատերազմը և անորոշ այն տեղահանությունը, որը դարձրեց Հայերին և Զարիկին, ինձ և Սիրարիին ռոմեներ և ջուլիետաներ։

Մենք հրաժեշտ ենք տալիս միմյանց և դուրս ենք գալիս։ Մեր ջուլիետաները, դրեթե հեռվից-հեռու, ուղեկցում են մեզ։

Դռան վրա սպասում է մեզ նույն ինքը՝ Գառնիկը, դավաճան Լոմեոն, որի սիրտը բաբախում է այժմ ուրիշ մի Ջուլիետայի համար։

Նա անխոս միանում է մեզ։

Իմ սիրտը լցված է մի գերբնական հուզմունքով։ Նրա դեմքը և շարժումները վառվում են մեջս, ու ես քայլում եմ կարծես երազի մեջ։

Հանկարծ Գևորգը կանգնում է ու ոռնոցով սկսում է ծիծաղել. Ի՞նչ պատահեց սրան, խելագարվեց, ի՞նչ է...

— Չեմ սիրե,— ասում է նա ոռնալով,— ազնիվ խոսք չեմ սիրե, ոչ մի ազդեցություն, ասուված վկա, ոչ մի ազդեցություն... ոչ մի ազդեցությո՛ւն,— կրկնում է նա, և ծիծաղից նրա աչքերը արցունքոտվում են։

Մենք մի շարք անժխտելի փաստեր ենք բերում և համոզում ենք Գևորգին, որ նա սխալվում է, որ նա թյուրիմացության մեջ է և որ... սիրում է...

38. ՀԱՄԻԿՆԵՐ

Ես հասկանում էի նրանց լեզուն, սպիտակ, ընքշաթերթ համիկների լեզուն։

Եկավ Օննիկը երկրորդ որբանոցից և մի փունջ համիկ բերավ։

— Նրանց պարտեզից քաղեցի,— ասաց Օննիկը։

Ես շնչեցի նրանց բույրը, և ինձ թվաց, որ այդ նրա աչքերի, մազերի և մատների բուրմունքն է։

Ես հասկացա, ես սովորեցի նրանց լեզուն։

Հենց այս բոպեին, սեղանիս վրա մի փունջ համիկ կար։

Ես հոտ եմ քաշում և մտածում եմ. որտե՞ղ եմ լսել այս ծանոթ բարբառը։

Ես արդեն սկսել եմ մոռանալ համիկների լեզուն...

39. ԳՈՂ.

Կեսօր էր։

Եկավ կառավարչուհին, պաշտոնական ամբողջ կազմով և ճաշի ժամանակ հայտարարեց.

— Երեխաներ, երրորդ օրն է, ինչ պահեստից հաց է գողացվում։ Պահեստի կողպեքը ամուր է և վատահելի... մնում է ենթադրել, որ պատուհանից է մտնում գողը։ Իսկ պատուհանի երկաթների անցքը այնքան փոքր է, որ հազիվ թե կարգին գող կարողանա այնտեղ մտնել — մնում է ենթադրել, որ գողը ձեր միջից է և այն էլ փոքրերից... Թող անողը խոստովանի, մենք նրան կներենք... մնում է ենթադրել, որ հանցավորը կխոստովանի...

Տիրեց քար լռություն։

Մեզ բոլորիս թվաց, որ ահա երեք օր է, ինչ չենք կշտանում, որ քաղցում ենք տանջվելու չափ, այո, այո, այդ ինչպես մենք չենք նկատել, որ գողանում է մեզնից մեկինումեկը մեր հացը...

Մեզ տիրում է անասելի մի կատաղություն, անասնական մի ատելություն դեպի այդ անհայտ գողը, մենք նայում ենք միմյանց աչքերի մեջ և պատրաստ ենք բռնելուն պես գողին խեղդել և վերջ։

Տիրում է ծանր լռություն, և ամեն ոք իրեն զգում է այդ անհայտ գողի դերում, մեծագլուխ բոքոնների մոտ,— կեր, որքան քեֆդ կուզի... ու կատաղությունը, անասնական կատաղությունը աճում է, լեռնանում ու փոթորկվում։

— Մնում է ենթադրել, որ ոչ ոք չի ուզում խոստովանել։

Այո՛, հարգելի կառավարչուհի, այդ է մնում ենթադրել...

— Լավ, այն ժամանակ մենք ուրիշ միջոցների կդիմենք։

Եվ դիմեցին։

Շքախումբը հեռացավ. մենք մի անգամ էլ նայեցինք մեկմեկու աչքերի մեջ և սպասեցինք «ուրիշ միջոցներին» արդյունքներին։

Իսկ այդ շուշացավ։

Խորին գիշեր էր։

Քնել էին բոլորը, բացի Մնացականից, որը լուծում էր 450-րդ խնդիրը։

— Գո՞ղը, գո՞ղը,— լսվեց բակից,— դող բռնեցի՞ք,— լսվեց մի ուրիշ ձայն. բոլորը վեր թռան և արթնացրին քնածներին։

Որբերը, շապիկ-վարտիքով, դուրս վազեցին։

Դուրս եկան և պաշտոնյաները։

— Մոտ բերեք, ո՞վ է,— կարգադրեց կառավարչուհին։

Գունատ լամպը լուսավորում էր բակը, «գաղտնի ոստիկանները» բերում էին գունատ և դանդուր մազերով մի որբի։

Նա լալիս էր՝ մի կտոր հաց գրկած։

Այդ որբը ես էի...

40. ՊԱՆՏԻՉԸ

— Ահեմյան, տիկինը քեզ կանչում է...

Ես բարձրանում եմ և դուռը մատնահարում։

— Մտեք,— լսում եմ տիկնոջ ձայնը, և ես ներս եմ մտնում։

Մի լուսե հետո ես լալիս եմ Պանտիչի գրկում։

Նա հուզմունքից խոր շնչում է, երկաթե ջղերով և մանկական սրտով այդ մարդը, որի արտասվելը դեռ ոչ ոք չի տեսել։

Մեր տոհմի վերջին կալնին է Պանտիչը։ Մեր պապերը բազրգյաններ են եղել Պարսկաստանում. բարձել են խուրմա և խալի ուղտերի վրա և քարավաններով ճանապարհորդել են քաղաքից քաղաք։ Ահեմների երկրում։

Բայց ահա Մուրադխանը գաղթում է Ահեմատանից և իր բնակությունն է հաստատում Բզնունյաց ծովի եզերքում, Վանում։

Եվ նա կոչվում է Ահեմ-Մուրադխանյան։

Անցնում են մի քանի վաճառականական սերունդներ, մինչև Վարդան աղան, Համբարձում աղան, որոնց հաջորդում են մտավորականներ։ Այսպես, Գրիգոր աղան և Պանտիչը համարվել են Վանի լավագույն մտավորականները, անհետացել է Մուրադխանի տրադիցիան և մնացել է Ահեմյանը։

Պարոն Մկրտիչը (Պանտիչ) կամ Մկրտիչ աղան (Մկրճ-աղան) լռակյաց և սակավաժպիտ, կամքի ու մաքրության դրանիտ, որի համար մի քանի հեղինակություն միայն գոյություն ունի,— Խրիմյան, Փորթուգալյան, Տոլստոյ,— կորցրեց իր կնոջը Թիֆլիսում։

Հիշում եմ նրանց փոխհարաբերությունները։

Ես միշտ այն կարծիքն ունեի, որ Պանտիչը Կալիփսին չի սիրում։ Նստում էին նրանք քուրսու տակ, Պանտիչը դպրոցական առաջարները կնայեր, իսկ Կալիփսեն կդրդռվեր որևէ կարում։ Այսպես նրանք կարող էին նստել 5 ժամ և չխոսել։

Բայց ահա Կալիփսեն.

— Մկրճաղա,— կասեր,— Կարապետ խոնդիկյա՞ն էլ էս տարի թաղական ի...

Պանտիչը լուռ է։ Նա փոքրիկ դանակի տուր ծայրով սխալ մի թիվ է քերում, հետո կարմիր թանաքով գրում է ճիշտը։

— Մկրճաղա...

— Հա,— ասում էր նա նորից պատգա տալուց հետո, առանց գլուխը տոմարից բարձրացնելու։

— Կարապետ խոնդիկյա՛ն...

— Է՛...

— Քո տուն ավեր չանի, շուր մի խոսք կասես, մարդու հոգին կխանես,— բարկանում էր Կալիփսեն։

Վերջապես Պանտիչը գլուխը բարձրացնում է տոմարից.

— Ասա՛, խանում, ի՞նչ ի կասես...

— Կասեմ Կարապետ խոնդիկյան էս տարի թաղակա՞ն ի...

Պատգա։

— Մի ջուր տուր,— ասում է Պանտիչը։

Կալիփսեն բերում է փարչը։ Պանտիչը երկարատև ընդհատումներով ընդունում է մեծ քանակությամբ խամուրջյան աղբյուրի ջուր և գրեթե դատարկված փարչը վերադարձնում է։

Հետո նա մեծ խնամքով հարդարում է բեղերը, իսկ Կալիփսեն գիտե, որ վերջապես մոտենում է պատասխան ստանալու ժամը։

— Այսինքն էդ ի՞նչ հարց է,— ասում է նա հատիկ-հատիկ,— հոնդիկյանն ի՞նչ գործ ունի թաղականի մեջ։

Լռություն։

Իսկ այս լռությունը կարող է տևել ևս մի ժամ, մինչև Կալիփսեն մոռանա իր առաջին հարցի պատասխանն ստանալու տանջանքները և մի նոր հարց տա։

Այսպես էր Պանտիշը։

Իսկ երբ մեռավ Կալիփսեն, ամերված Վանը դարձավ Պանտիշի համար միակ անկյունը, որտեղ նա իրեն կարող էր լավ զգալ։

Նա մատնակցեց բոլոր ներգաղթերին և նահանջեց վերադարձումների պատճառով։ Ամեն անգամ նա առաջինն էր մտնում Վան, իսկ նահանջելիս, քաղաքից դուրս էր գալիս ամենից վերջը։

— Վան պիտի էրթանք այս անգամ ալ,— ասաց Պանտիշը, երբ ես դադարեցի գոալուց և հանգստացա,— և այս անգամ կամ պիտի մնանք և ավերակները վերաշինենք, կամ ան խաչ պիտի դնենք վրան, գանք։

Պատահեց երկրորդը։

...Կալիփսի մահից հետո Պանտիշը շամուանացավ։ Նա մինչև հիմա էլ մենավոր և ինքնասույզ կյանք է վարում։ Նրա սենյակը, որին նա կես լուրջ կատակով «անապատականի խուց» է անվանում, գտնվում է քաղաքից հեռու։ Սենյակի պատերը զարդարում են Խրիմյանի, Փորթուգալյանի, Տոլստոյի և Կալիփսեի մեծադիր նկարներով։ Նստում է նա երեկոներին մենակ, նայում է այդ նկարներին, հետո նայում է իր ներսը, ապա թե ծխախոտ է փաթաթում, իսկ ծխախոտի դեղին տուփի վրա նկարված է Վանի բերդը, Հանկուցս-ձորը և գրված.

«Հուշեր Վասպուրականից»։

41. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞ւ հացը պակասեց, մենք այդ չիմացանք, բայց որ պակասեց հացը և սնունդը վատացավ, այդ փաստ էր և այդ՝ մինչև անգամ Գևորգը կարող էր հաստատել։

Հացը պակասեց և վատացավ սնունդը։

Վարպետը վատուց է ինչ «մեննձերին կրկին» չի ասել, իսկ Հացի բաժինները ենթարկվել են ձևոնադրծական ստանդարտիզացիայի և սկսել են կարևորություն ստանալ այնպիսի մանրուքներ, որոնք դուրս են եղել կենցաղային մեր տեսադաշտից։

Մենք մինչև անգամ սկսել ենք նախանձել միմյանց, երբ մեկնումեկը դանդաղ է ծամում և ունի մի կտոր հաց այն ժամանակ, երբ մնացյալները խժռել են արդեն։ Իսկ ճաշարաժանության հերթապահությունը, որն իր մեջ ուներ ձանձրույթի, պարտականություն կատարելու և մինչև անգամ նվաստացնող մոմենտներ, սկսեց ժպտալ բոլորին որպես բախտ և երջանկության գերագույն։

Սկսեցին ստեղծվել տնտեսական նոր ձևեր և հարաբերություններ։ Շատերը պահում էին իրենց բաժին հացը և ուտում էին այն ժամանակ, երբ բոլորը քաղցից դեսուդեն էին ընկնում։ Այդ երևի նրանց մեծ հաճույք էր պատճառում։ Ներթապահներն սկսեցին օգտագործել իրենց դիրքը և խժռել անխղճաբար, իսկ ապրիլիս մենք դադարեցինք մեր աչքերը դեպի առաստաղ ուղղելուց. դրա փոխարեն մենք զննում էինք միմյանց բաժինները և աշխատում գտնել աշառության ու կողմնապահության նշաններ։

Եվ մենք գտանք։

Ինչպե՞ս մենք մինչև հիմա չէինք նկատել. չէ՞ որ այս դասախարակչուհին բացահայտ կերպով շաքար բաժանելիս կամ հացի կտորները հավասարեցնելիս՝ Մնացականին համեմատաբար բաժին շատ է տալիս։ Նատել է մեր շորությունը և մտածում է։ Դեռ այն էլ կա, որ տիկին Լուսաբերը մի առանձին համակրանք ունի դեպի Մնացականը և այդ արտահայտվել է նրանով, որ մի քանի անգամ տիկին Լուսաբերը բարեհաճել է նստել Մնացականի անկողնու վրա։ Իսկ ինչպես մենք մոռացել ենք Մնացականի վերջին ստեղծագործությունը.

Դու իմ նազելի,
Քույր իմ թագուհի,

Աղքատիս զգվող
Քույր իմ թագուհի...

Ահա թե ինչպիսի՞ տեր ատող «տիրատ» է այդ ստրկական հոգին, և մենք՝ հիմարներս, պիտի հանդուրժեինք այդ ամենը։

Իհարկե, ոչ։

Հեղափոխական կոմիտեն դործի անցավ. պետք էր փաստեր հավաքել դատախազուհու դեմ, պետք էր ապացուցել, որ նա չի համապատասխանում իր վեհ կոչմանը։

«Լիրժիլ Վասպուրականի»-ի հերթական համարը լույս տեսավ «Փշրե ժանտ շղթան, ծագե նոր արև» լոզունգի տակ, որն ինքնըստինքյան մի թաքնված ակնարկ էր կուտակվող փոթորկի մասին, գրվեցին շափազանց խորամանկ բանաստեղծություններ՝ «Խավարի թագավորությունը», «Ղարքիր, Հայաստանի ասված», «Արդարության կշեռք» և ուրիշ վերնագրերով, որոնք մութ կերպով վեր էին հանում ստեղծված ծանր կացությունը։ Գեորգի տեսորը լեցվում էր նորանոր փաստերով և, վերջապես, հասավ բողոք գրելու վճռական ժամը։

Ու դուրս եկավ այսպիսի մի բան։

«Բողոք եղբայրական օգնության երրորդ որբանոցի դատախազուհի տիկին Լուսարերի վրա, որ նա՝

1) թույլ է տվել, որ ամսի 5-ին կես ժամ շարունակ կռանթի ջուրը հոսի.

2) թույլ է տվել, որ շունը պահեստից ½ ֆ. հաց փորձի տանել (փորձը պատահեց ամսի 7-ին).

3) թույլ է տվել, որ վարպետի և ճաշ բաժանողների մեջ կռիվ պատահի.

4) թույլ է տվել, որ ինքը Մնացականի անկողնի վրա նստելով, տրիշներին հակաառողջապահական անհանգստություն պատճառի.

5) թույլ է տվել, որ շտակը կոտրի, նորը չառնելու պայմանով.

6) թույլ է տվել...»։

Եվ նման ծանրակշիռ մեղադրանքներ։

Հեղափոխական կոմիտեն տարաձայնվեց միայն մի

խնդրում. մեղադրական ակտի մեջ մտցնե՞լ արդյոք այն, որ տիկին Լուսաբերը «Թույլ է տվել» Մնացականին շատ բաժին տալ մյուսների հետ համեմատած, թե՞ ոչ, որոշվեց այդ մասին ասել որքան կարելի է քողարկված և այդ կետը դուրս եկավ՝

«Թույլ է տվել աշխատությամբ վիրավորել և երկպառակություն մտցնել մեր ինքնասիրության մեջ...»։

Լսվում էր պատահական մի հրացանի պայթյուն.

— Մի մարդ պակասեց,— ասում է Հայերը։

— Մի բաժին հաց ավելացավ,— ասում է Գեորգը։

. . . . . .

. . . . . .

Մեր «ապատամբությունը» պարտվեց։ Բոզոքի գրության բոլոր կետերը համարվեցին թույլ, սուտ և սխալ։ Մեկ հայտարարեցին «խռովարարներ» և ապառնացին որքանոցից հեռացնել։ Մենք ասվեցինք և բարվոք համարեցինք լույս ընծայել «Արծիվ Վասպուրականի»-ի հերթական համարը, որն իր հրատապությամբ չէր զիջում իր նախընթացին. այս համարում բոլոր ոտանները ոգբում էին իրենց ջուլիետաներին և «շկար միխիթարության դուռ», ինչպես աշխատում էր համոզել իր բանաստեղծության մեջ ամենաոժրախտն ու անմխիթար բոլոր եղած բանաստեղծների մեջ...

Իսկ այդ բանաստեղծը ես էի...

42. ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Նրա «Մթնշաղի անուրջներ»-ը լույսի նման արագ տարածվեց որքանոցի պատերից ներս.

Ցրտահար, հոգմալար,
Դողացին մեղմարար
Տերևները դեղին,
Պատեցին իմ ուղին...

Ու մի օր, երբ ես հատուկ հրամանով դուրս էի եկել Բոզոչոյի հետ Սաթենիկ տատենց տուն գնալու համար, պա-

տների վրա կարդացինք հայտարարություն, ըստ որում Վահան Տերյանը պետք է դասախոսեր «Հոգևոր Հայաստանի» մասին և վերջում արտասաներ։

Ուրեմն ոչ միայն Վահան Տերյանը մարդ է, այլև գտնվում է Երևանում, ոչ միայն գտնվում է Երևանում, այլև դասախոսելու է...

(Երբ ես փոքր էի, իմ կարծիքը շատ մեծ էր գրողների մասին...)։

Բայց ինչպե՞ս այդքան ուշանալ որբանոցից և դեռ առանց տոմսակի նե՞րս մտնել,— այս խնդրի լուծմանը Քոլոշոն շուտեց մասնակցել մի շարք հարգելի պատճառներով։ Բանն այն էր, որ Քոլոշոյի համար ամենամեծ բավականությունը խանութների վիտրինաները դիտելն էր և հետո այն, որ Քոլոշոն զգայիորեն սառել էր դեպի բանաստեղծությունը այն օրվանից, որ օրվանից նա «լծեց զոմշուկներով» և «գնաց հոր շիրմին... այցի...»։

Ես իմ ձեռնարկության իրացման հետ մենակ մնացի։ Ես բաժանվեցի Քոլոշոյից և գնացի դեպի թատրոնի շենքը։

Իջնում էր երեկոն։

Մշուշվում էր Ասատֆյան տխուր փողոցը, իսկ «Ապոլոն» կինոյի առաջ ճչում էին «սեմիչկա» ծախողները։

Մտնում եմ թատրոն։ Արդեն սուտկում են տոմսակները և բաց են թողնում։ Սուտկողը մի շատ գեմքով, կեռ քթով մարդ է. կարծես նա ոչ թե տոմսերն սուտկում է, այլ դիշատում։ Ես հուսահատվում եմ։

Հնչում է առաջին զանգը։

Կարճահասակ, նիհարուն և թուխ մի երիտասարդ մոտեցավ սուտկողին և հարցրեց.

— Ժողովուրդ կա՞...

— Նիշեվո,— պատասխանեց գիշատիչը։

Երիտասարդը վեր բարձրացավ առանց տոմս ցույց տալու, որի համար և արժանացավ իմ նախանձին։— Ինչո՞ւ նրան առանց տոմսի կարելի է, իսկ ինձ ոչ...

Երկրորդ զանգը սիրտս լեցնում է անձկությամբ։

Նոր եկողներ արդեն չկան։ Մի՞թե ինձ շպիտի հաջողվի. նիրս մտնել։

Ես հալաքում եմ քաջությունս և մոտենում եմ ստուգողին, որը կարմիր թաշկինակով այս անգամ սեփական քիթն է զիշատում։

— Տոմս չունեմ, —ասում եմ ես և չգիտեմ ինչպես շարունակել։

— Հըմ...

— Տոմս չունեմ...

— Նիշիկո, գնա քնի...

— Ես շատ կուզեմ Վահան Տերյանին տեսնել...

— Հըմ...

— Տոմս չունեմ...

— Նիշուկո, ներս մտի, բարձրացի բալկոն... շարությունանե՛ս ոչ, հա՞...

... Թեմի վրա կանգնած է մի երիտասարդ և խոսում է. այդ այն երիտասարդն է, որը սանդուղքների մոտ ստուգողին հարցրեց՝ «ժողովուրդ կա՞» և առանց տոմսի վերբարձրացավ։ Ես անհամբեր սպասում եմ,— ե՞րբ կվերջացնի նա, որպեսզի հերթը Տերյանին հասնի։

Նա չի վերջացնում, իսկ Տերյանը դեռ չկա։

Իսկ նախագահը հանգիստ նստել է։

Վերջապես նա վերջացնում է։

... — Հիմա թույլ տվեք կարդալու իմ մի քանի բանաստեղծությունները...

Տերյանը, մի՞թե նույն այդ երիտասարդն է եղել Տերյանը։

Նա կարդում է իր հրաժեշտի տողերը, նուրբ, նվազուն և թախծոտ, վերջացնում է, իսկ դահլիճում ոչ մի ծպտուն և ոչ ոք չի շարժվում տեղից։ Օդում թրթռում է նրա վերջին նվագը.

Բարի հիշեք ինձ ձեր սրտում,
մնաք բարո՛վ, մնաք բարո՛վ...

Վարագույրն իջնում է։

Ես դուրս եմ գալիս և սպասում եմ դռան վրա, մի անգամ էլ մոտիկից նրան տեսնելու համար։ Ահա իջնում է նա՝ շրջապատված մի քանի հոգով։

Նա հոգնած դեմք ունի։

— Կարող է անձրև գալ։

Ես նրանց հետևում եմ։ Նրանք մտնում են թեյարան, իսկ ես բռնում եմ որբանոցի ճանապարհը։

Շրմփաց անձրևը։

Ջրորդաններն սկսեցին երգել, իսկ ես թրջվում եմ մինչև ոսկորներս։

Ահա և քնած որբանոցը։

Ես շրջվում եմ պատից և աշխատում եմ որքան կարելի է անաղմուկ ներս մտնել։

Ինձ օգնում է անձրևի աղմուկը և ամպերի գոռգոռոցը։

Ես հանում եմ բոլոր շորերս, քամում և բոլորովին մերկ փաթաթվում վերմակի մեջ։

... Հիմա անձրևը դադարել է, բայց ջրորդանները համա-չափ տակտով դեռ կաթում են.

Ցրտահա՛ր։ Հողմավա՛ր։
Դոզացի՛ն։ Մեղմաբա՛ր։
Տերևնե՛ր։ Ընդեղի՛ն...
. . . . Իմ ուղի՛ն...

. . . . . .

. . . . . .

. . . . . .

43. ՄԱՀ

... Եվ դու մի կարծի, որ ես սրանից հետո կցանկանայի ապրել, կամ կյանքը քաղցր է ինձ համար։

Ոչ, սիրելիս։

Դու ինձ հետ շատ վատ վարվեցիր։ Ես քեզ չեմ մեղադրում։ Քո ի՞նչ սիրելու ժամանակն էր։ Իսկ դու ինձ համար մաքուր և հստակ ջրի պես մի բան էիր։

Ես կարող էի գալ քեզ տեսնել, բայց չեկա։ Ի՞նչ կարիք կար։ Հիվից էլ լավ էր։ Իսկ ես միշտ հարցրել եմ քո մասին և գիտեմ մինչև անգամ, որ դու բանաստեղծություններ ես գրում։

Ես հավատում էի մաքուր սիրույն։ Եվ ինչո՞ւ չհավատայի։ Դու դիտե՞ս, Տերյանի երեկոյան ես քեզ տեսա։ Ես մի զինվորականի հետ էի, իսկ նա եղել է Վանում։ Ես շարունակ նրան հարցուփորձ էի անում Վանի մասին, նա պատմում էր, իսկ ես շարունակ քեզ էի հիշում և մտածում էի քո մասին։

Դասախոսությունից հետո նա ինձ ուղեկցեց մինչև տուն և գնաց։

Իսկ ես որոշեցի, հաստատ որոշեցի, որ մյուս օրը գամ և քեզ տեսնեմ։

Փակեցի դուռը և անկողին մտա։

Փորձե՞լ ես, որքան քաղցր է քունը, երբ դրսում անձրև է, կայծակ և որոտ։ Ես հուզմունքից ուղղակի չեմ ուզում քնել, միևնույն է,— մտածում եմ ես,— որքան ուզում է գոռգոռան ամպերն, ու դիշերը սարսափելի դառնա, առավոտյան արև կլինի, իսկ ես արևից փայլող թաց մայթերի վրայով կգնամ, կտեսնեմ Գուրգենին։

Ինչքան էի քնել, չգիտեմ, բայց քնել էի թեթև։ Պատուհանը մատնահարում են։ Իմ Երևան գալուց ի վեր ինձ այդպիսի բան չէր պատահել։

Ո՞վ պիտի լիներ այսպես կես-դիշերով, ո՞վ ինչ է կորցրել ինձ մոտ...

— Ո՞վ է,— հարցնում եմ ես։

— Ես եմ, դուռը բաց...

Նայում եմ պատուհանից դուրս։ Պատուհանի տակ կանգնել է այդ զինվորականը և, ինձ տեսնելով, զինվորական բարև է բռնում։

— Կարևոր գործով,— ասում է նա,— դուռը բաց...

— Արագ,— ասում եմ ես,— անհարմար է, կգաս առավոտյան։

— Խղճի դեմ է,— ասում է նա,— թրջվել եմ մինչև ոսկորներս, աղերքը քնֆի են գնացել խմբապետների հետ, բանալիս հետներն են տարել... Գոնե կես ժամով, չորանամ...

Խոսում է նա շարունակ բարև բռնած և մի տեսակ օրորվում է, և ինձ թվում, որ դա հոգնածությունից է...

Ես նորից հիշում եմ քեզ և նրան խղճում եմ։

— Կպատմե՞ս ինձ Վանի մասին,— ասում եմ ես։

Երբ նա ներս մտավ, ես զգացի խմիչքի ծանր հոտը, բռնեցի նրա դեմքն և ասի.

— Խնդրում եմ, գնացեք, դուք հարբած եք...

Նա փակեց դուռը իր ձեռքով, բանալին դրեց իր գրպանը և ասաց.

— Շատ վատ եք վարձատրում զինվորականներիս։ Մենք ձեզ համար արյուն ենք թափում, իսկ դուք...

— Իսկ դուք ձեր պարտքն եք համարում վարձատրել ձեզ կես-դիշերով մենակ աղջկա սենյակը մտնելով, այո՞... գնացեք,— ասում եմ ես,— ի սեր բոլոր աստվածների, գնացեք, թե չէ կգոռամ։

— Դու այդ չես անի,— ասում է նա և փակում է կրկնափեղկերը։— Հիմարություն,— շարունակում է նա,— հազար ու մեկ անակնկալներով շրջապատված, այսօր կանք, վաղը՝ ոչ, իսկ դու առնում ես շեկ մազերդ ու քնում... ո՞ւմ համար... (նա հանեց մի շիշ կոնյակ) ես օրինակի համար այնպես եմ մտածում, որ հարբեցողությունը, հարբելը պարտվող կողմի իրավունքն ու պարտականությունն է։ Հաղ... (նա շիշը երեք անգամ խփեց ծնկին և խցանը թռավ) հաղթողներն ինչո՞ւ պիտի խմեն աշխարհական խմիչքներ, քանի որ նրանք հարբած են հաղթության երկնային խմիչքով... նկատի առ... ես էլ զգացել եմ այդ... Հասան-Կալեի մոտ... այն երկրում...

— (Նա խմեց մի բաժակ և մի շամիշ վերցրեց) ինչ է... դու կարծում ես ես բռի զինվորակա՞ն եմ... կարծում ես, ես չեմ հասկանում ինչ է կատարվում... ես կարդացել եմ... ավարտել... մերս մի աղջիկ նկատի ունե՛ր ինձ համար, իսկ ես երբ հանդիպում էի նրան, սիրտս խփում էր... հետո էս պես լրբացա... պատերազմը լրբացրեց... պատերազմը ամենքին լրբացրեց... դու էլ էս օրվանից,— ասում է նա, մի աչքը փակում ու գեշ ծիծաղում.— միևնույն է, մի օր ուշ, մի օր շուտ...

Լռություն։

— Ասա խնդրեմ. կույսդ գեղեցիկ, դու գիտե՞ս, թե ինչ բան է պատերազմը... ծաղիկներով ու պապիրոսներով եկաք մինչև կայարան և մեզ ուղարկեցիք կռվի... իսկ դու գիտե՞ս

ինչ բան է կոիվը... դու գիտե՞ս, ինչ է նշանակում մոր աչքերի առաջ որդուն սպանել, ամուսնու աչքերի առաջ կնոջը բռնաբարել հերթով, հետո կնոջ աչքերի առաջ կտրել ամուսնու նախ՝ մատները, հետո՝ քիթը, ականջները, պոկել ատամների եղունգները, ապա՝ կոկորդը ծակել... իսկ ես գիտեմ այդ ինչ է նշանակում... ինչի՞ համար այդ ամենը, ինչի՞ համար...

— Դուքից հետո և կռվի նախօրյակին, երբ խմբերով պառկում էինք հանգստանալու մեր կորուստները ստուգելուց հետո, պատահում էր, որ մի ծառ էր աչքիս ընկնում։ Ես նայում էի այդ ծառին և հիշում էի տունը, մահճակալս ու գրքերս... ինձ թվում է, հենց որ հասնեմ այս ծառին, խաղաղություն կլինի, ու ես կմոռանամ պատերազմի սարսափները... Ես ծլկլում եմ դեպի ծառը, հասնում եմ նրան ու պառկում եմ նրա ստվերի տակ... հետո թրիս ծայրով փորում եմ անունս նրա բնի վրա, նայում եմ իմ անվան, և այդ անունը զարմանալի օտար է թվում ինձ։ Հետո ես ծխել եմ ուզում... ախ, սատանա, իմ ծխատուփս երկու ժամ առաջ մնաց Սաքոյի մոտ, իսկ նրա դիակը մենք մի ժամ առաջ թողինք խրամատներում, նահանջելիս...

... Խորին գիշեր է։ Իմ սիրելի Գուրգեն, զգում եմ, որ այլևս չեմ տեսնի քեզ, բայց դեռ ուժ ունեմ նամակս շարունակելու։ Ես նայում էի այդ գինվորականի տանջված դեմքին, իմ վախը փարատվել էր և սիրել էր ինձ մի անծայրածիր խղճահարություն։

— Ոչինչ,— ասում եմ ես,— դու հիմա կհանգստանաս...

— Հանգստանա՞լ... խըխըխխ,— ծիծաղից նա հիվանդ և խեղդվող ծիծաղով,— հանգստանալ, ինչպես չէ... չէ, սիրելիս, իմն անցավ... կլինեն էլի նոր և լավ օրեր, բայց դա ինձ և ինձ նմանների համար չէ... մենք տրոտվեցինք, իսկ ինչո՞վ մեղավոր ենք մենք, ինչո՞վ... դու էլ չես դիմանա, ախր ինչո՞ւ մենք իրար հանդիպեցինք... ինչպես դու կարողացար ինձ ճանաչել... չէ՞ որ ես այժմ կենդանի դիակ եմ... դու հիշո՞ւմ ես, որքա՞ն ենք խաղացել մենք, որքան միասին վազվզել... իսկ ինչո՞ւ ես պիտի քայքայվեմ ու կորչեմ, իսկ դու սիրային նամակներ ստանաս ու մի օր էլ փաթաթվես մեկի վզով և ասես. ես քեզ սիրում եմ,— ինչո՞ւ...

Նա նորից իրար վրա դատարկեց երկու բաժակ. նրա դիմադծերն արդեն ծռմռվել էին և աչքերն արնակալել։

— Դու վերջինը կլինես... աղնիվ խոսք եմ տալիս... հավատա զինվորականի անկեղծության, ապրելու սիրտ էլ չի մնացել, կգնամ ճակատիս և վերջ... մի վախենա, մի քիչ առաջին շաբաթներն են դժվար, հետո կվարժվես, հետո կցանկանաս մեռնել... իսկ քեզ, ի միջի այլոց, պետք է որ հայտնի լինի, որ բոլորն են մեռնում...

— Մի ժամանակ եղել է մի լավ խոսք.— «կարելի է խելագարվել»,— ասել են մարդիկ, գիտես ինչ, լավ ժամանակներ են եղել... հիմա չի կարելի ասել, անիմաստ է այդ խոսքը, որովհետև եթե մարդիկ խելագարվեին, ոչինչ չէր փոխվի. մարդիկ հիմա խելագար են, իսկ եթե խելագարը խելագարվի, դա միևնույն է, թե ավազակը գող դառնա, կամ ապուշը՝ հիմար... դու ձանձրանո՞ւմ ես, երևակայիր, այդ ինձ համար միևնույն է, որովհետև պատերազմից հետո ոչ ոք իմ քեֆը չի հարցրել...

— Դու արտասվո՞ւմ ես, քնքուշ հայուհի... նախանձում եմ... ինչի՞ համար մեզ ճակատ ուղարկելիս մեր սիրտն ու զգացմունքները չպահեցիք թիկունքում, ինչո՞ւ թողիք, որ տանենք մեր սիրտը ու դարձնենք այն հաշմ ու այլանդակ։ Ես հարցնում եմ բոլոր պետերին, հրամանատարներին, թագավորին ու աստծուն, մինիստրներին և հայրենիքի մասին թուղթ մրողներին, ո՞ւր է մեր սիրտը, ո՞ւր են մեր իդեալները, հանուն ո՞ր պայծառ օրվա մենք տվինք բոլոր մեր ունեցածը...

— Կենացդ, քնքուշ հայուհի, կենացդ...

— Դու հանդիպե՞լ ես խելագարված զինվորականների։ Նրանք շատ են, պետք է որ դու հանդիպած լինես։ Քայլում են նրանք փողոցում, բութ և հիմար, գնում են ինչ-որ մշուշի միջից և հանկարծ քարի նման գլորվում են գետին։ Նրանց դեմքը կապտում է, աչքերն արնակալում, և փրփուրը եռում է շրթունքների վրա։ Հետո նրանք կատաղի տակտով գետինը ծեծում են ոտներով և պատերազմական հրահանգներ են տալիս։

— Գրո՛հ... կրա՛կ... մա՜ա՜ա՜ր222...

Նրանք ավելի երջանիկ են, քան ես։

Նու, ես հոգնեցի, քեզ էլ հոգնեցրի, ընքուշ նիրվիրդ գրգռեցի։ Վարձատրիր տառապած զինվորականին այնպես, ինչպես կանայք առհասարակ վարձատրում են... մի սուսատի, կյանքն ավելի սարսափելի է, քան ինձ հետ պիջամարդը... մարշ...

. . . . . .

. . . . . .

Իմ սիրելի Գուրգեն։

Մի քանի օր հետո ես լսեցի, որ այդ զինվորականը՝ իմ մանկության ընկերը, ինքնասպանություն է գործել։ Կրակել է բերանից և կարողացել է կրակել երկու անգամ։ Իսկ ինձ հետ կատարվեց ավելի սարսափելին։

...Ես զրկվել էի միաժամանակ երկու բանից...

Չուզեցի ապրել և մահանալ այլանդակված կամ սրամոդրել ինձ այս վայրիվերո ժամանակների անվատահելի բուժման։ Դրա համար էլ, իմ սիրելի Գուրգեն, ես ընդունեցի այնքան թույն, որը բավական պիտի լիներ ինձ վայրկենաբար մահացնելու համար... Բայց ես չմահացա։ Ինձ տեղափոխեցին քաղաքային հիվանդանոց և չգիտեմ ինչու նպատակահարմար գտան, որ այստեղ մեռնեմ...

Իսկ ես կմեռնեմ։

Իմ սիրելի Գուրգեն. նզովիր պատերազմն ու նրա հեղինակներին և թող իմ անունը քեզ համար լինի ծակծկված մի գրոշակ, մի նոր լավագույն կյանքի համար։

Այդ լավագույն կյանքը պիտի գա թե ոչ, ես չգիտեմ, բայց եթե գա, պիտի գա առանց պետերի և հրամանատարների, թագավորի և աստծու, առանց մինիստրի և հայրենիքի ու պատերազմի մասին թուղթ մրոտողների։

Բարով բացվի քեզ համար, իմ սիրելի Գուրգեն, այդ լավ առավոտը, իսկ իմ գիշերը արդեն մոտ է...

Մնաս բարով։

Քո դժբախտ Նագիկ։

. . . . . .

. . . . . .

44. ՀԱՎԱՔՈՒՅԹ ՀՈՐԱՔՐՈՋՍ ՏԱՆԸ

Հորաքրոջս տղայի՝ Միհրդատի տոնախմբությունն է։

Ննջիկի հետ հրաման ենք առնում և գնում ենք տատանց տուն։

Դեռ շուտ է, հյուրերը չեն եկել։

Տատան՝ իմ հորաքույրը, ծխում է և սենյակի երկայնքով չրջում է աշխույժ և կորաքամակ։

— Տառեխը դրեք կրակին,— ասում է նա,— իշխան էկա՞վ...

— Գնացեր են, բերեն...

Իշխա՛ն,— լսում եմ նա,— Իշխա՞ն,— մտածում եմ,— Իշխան, Իշխա՛ն, նա սխալ չլսեցի, ուրեմն նա նորից պիտի տեսնեմ Իշխանին, նա պիտի գա, գնացել են, որ բերեն, ինչո՞ւ է գալիս Իշխանը, ինչ գործ ունի այստեղ։

Բայց չէ՞ որ Իշխանին սպանեցին, պարզ է, որ ուրիշ Իշխան բերելու են.— էլի ոչինչ, միայն թե բերեն։

Միայն թե բերեն։

Գալիս են հյուրերը. ահա Կանդոյենց Հակոբը. նա բոլոր խնջույքների զարդն է, ուրախ, միշտ սրախոս, միշտ ժպտուն, մոտ հիսուն տարեկան և ամուրի։ Նրա մանկով, նա բացականչում է.

— Յալլահ, յալլահ... ջանըմ, տոնն ինչի՞ փակօթյա տրիք, փացօթյա անինք, Վարազ էրթինք, յա թե չէ Կարմրավոր...

— Այստեղ հրամմեք, Հակոբ աղա, այստեղ...

— Յալլահ, յալլահ...

Ահա Միրախորենց Մարտիրոս աղան. նա գալիս է կապույտ աչքերի մեջ խաղաղ մի ժպիտ խաղացնելով, կարծես թախծոտ ուրախությամբ։ Վանքի խորենն ահա խոռանի խաչիկի հետ, վանեցի մտավորական, երիտասարդ ուսուցիչ Հրանտ Բագրատունին իր կնոջ հետ, որի հղիությունը չի լինի չնկատել, ապա զանազան խաթուններ, զուգուններ, նանաներ, պատկաղերծ հանըմներ...

Եվ չնայած որ փոխվել են դիրքերն ու հարաբերությունները, տնտեսական հիմնաշենները ու բարոյական զանգա-

կանները, այնուամենայնիվ, չեն փոխվել հին տիտղոսներն ու վայելչանքը։

— Ռուբեն էֆենդի, այստեղ հրամմեք...

— Անուշ էլաչ, Լևոն աղա...

— Պարոն Հրանտ, նեղսրտած կերևիք...

Վերունիկն ու Միհրդատը ներս ու դուրս են անում և անօրինում. անում են զանազան կարգադրություններ, տատան ծխում է, ընդհատ-ընդհատ հառաչում և նայում է պատից կախված մեծ որդու նկարին։ Մեծ որդու նկարի մոտ կախված է իր վախճանված ամուսնու՝ Մանուկ աղայի նկարը։ Մանուկ աղան այդ նկարը Պոլսից ուղարկեց այն ժամանակ, երբ ամուսնանալուց 2 տարի հետո զարիրություն գնաց։ Նստել է Մանուկ աղան ֆեսով, բեղերը սրած, ոտքը նետած ոտքի վրա, եռոտանի կլոր սեղանի առաջ, որի վրա գրված է մի ծաղկաման։ Մանուկ աղան նայում է ծաղկին և ծաղկամանին, իսկ նկարի տակ գրված է.

«Սաղսու մեջ հայրենիքից տարված հողն է, ուր ցանեցի հայրենի կաղաֆիլ ծաղիկ.— հոտն ի քթիս, ցավն ի սրտիս, որով մնամ հարգանոք՝ Մանուկ Բրուսյան»։

Կոշկակար Արշակը տաքացել է։ Նա խմում է օղի հերթից դուրս, նա արդեն վերլուծեց ապրիլյան կռիվները, անցավ գաղթին, Արամ փաշայի հացեին, առանց կանանց ներկայությունը հաշվի առնելու, մի երկու հիմնավոր հայհոյանք ուղարկեց և անցավ «թաշնակցության»։ Մի քանի նրբանկատ արմենականներ աշխատեցին շեղել Արշակին «բուն նյութից», հաշվի առնելով դաշնակցական Հրանտ Բագրատունու և Միհրան Վուլվունիկյանի ներկայությունը, որոնք սկսել էին անբավականության նշաններ ցույց տալ։

— Նյութ փոխի, ջանըմ, նյութ փոխի, էլածն էլած ի...

— Արշակ, անխամութեն պետք չի...

— Թուլումբաջոնց տղի փոթիներաց մասալեն արա...

Արշակը մի օղի է պարպում.

— Էդ տնավերի տղեն էկավ մոտս...

Ու նա պատմում է մի էպիզոդ իր արհեստավորի հիշողություններից, որը թեև նվազ ծիծաղելի է, բայց բոլորն էլ

վարձատրում են նրան, խանդավառ ծիծաղելով նրա համար, որ նա դադարեց «փափուկ խնդրի» շուրջը խոսելուց։

Մեղանները կենդանանում են, կենացները՝ մասնավորվում։

— Իմաստուն մարդ շատ եմ տեսել... Համա Սմաար աղեն ուրիշ մարդ է... շատ բան չեմ ասի. խմենք Սմաար աղին իմաստուն բեղ-մորուսի հիշատակին... Տղա, Սիմոն քո կենացն է...

Սմաար աղայի տղան՝ Սիմոնը, չգիտի, վիրավորվի՞, թե իրեն գոհ զգա։ Մի՞թե նա իր հոր՝ Սմաար աղայի բեղի և մորուքի բուսական արժեքն ունի միայն... Բողոքի՞ կենացի դեմ,— դա կնշանակեր դուրս գալ հայրենական և պապենական հիշատակների դեմ... Նա բարձրացնում է բաժակը և՝

— Է-վալլա, է-վալլա...

Հակոբ աղան սկսում է քթի տակ թուրքերեն մի երգ մռմռալ։ Նա պարզապես ուզում է հիշեցնել, որ ցանկություն ունի երգելու։

— Հակոբ աղա, յալլա՛հ, Հակոբ աղա, թալ վերին փուչուղեն...

Հակոբ աղան երկրորդ հրավերի չի սպասում. նա ձայնը բարձրացնում է, զգացվում և գլգլացնում.

«Նե չարն քայլը գա,
Ախ վարմիշ այրիմաք...»։

— Ձայնդ անսպա՞ռ, ձայնդ անսպա՞ռ, Հակոբ աղա... Մինչ այս, մինչ այն, սեղանը պատրաստվում է։

— Իշխան պիրին, Սաթեն տատա,— ասում է Վերունիկը։ Ես գիտում եմ Վերունին։

— Իշխան գո՞ր է...

— Կուխանին,— ասում է Վերունը, առանց ուշադրություն դարձնելու իմ զարմանքի վրա։

Վարդանի հետ վազում ենք խոհանոց։

Դեռ խոհանոց չհասած, լսում ենք Սաթեն տատի բարձրաձայն կարգադրությունը.

— Իշխան կտրտեք, իշխան կտրտեք...

Մենք վարանոտ սարսափով մտնում ենք խոհանոց։

Այնուհետև պարզապես ձուկ են կտրում։

. . . . . .

Ընթրիքը եռում է։

Բաժակաճառերը հաջորդում են միմյանց։ Տանտիրոջ տեղացի տղան «ուխաժ» է անում իր կողքին նստած Վանուհուն.

— Ձեր անունն ի՞նչ է...

— Վաղքանուշ,— ասում է աղջիկը՝ վանեցիական ճշգրտող կոկետությամբ։

— Դուք վանեցի եք,— խորիմաստ տոնով ասում է տղան։

— Ինչեն գիտեք...

— Ձեր բարբառը վանեցիական է...

— Ընթակատակ, մենք մեր փառիստ վաղուց փոխեր ենք...

— Որոշ չափով ճիշտ է,— ասում է տղան։

— Ճիշտ է և իսկապես,— «քրաիտառ»-ում է աղջիկը։

Բարձրանում է տեղից Հրանտ Բագրատունին։

— Հայրենակիցներ,— սկսում է նա, և սիրում է խորին լռությունը։

— Հայրենակիցներ, մեր Հայրենի խլյակները, տարագիր և ստանդական իրենց շունչը առան Իգդիրի, Էջմիածնի և Երևանի պատերի տակ...

Կանայք լալիս են, իսկ տղամարդիկ օրորում են գլուխները։ Միայն կոշկակար Արշակը չի բաժանում մոմենտի վեհությունն ու ճառի ազդեցությունը։ Նա մի ոչնչացնող և արհամարհական հայացքով նայում է հռետորին և գգացվելու մինիմում ցանկություն անգամ չի ցույց տալիս։

— Եվ արդարև,— շարունակում է հռետորը և անցնում է «փառապանծ նահատակների» խնդրին։ Հռետորն իր ճառը մանավորում է «նոր սերնդի» մասին, «անոնք, որ պիտի գան»։ Մեծ տպավորություն են թողնում «Մասիսեն ադին և Մասիսեն անդին» խոսքերը։ Վերջ։

Բաժակները դատարկվում են խորին լռության մեջ։ Բագրատունու կինը խորին հիացմունքով նայում է, նայում է իր ամուսնուն և մի տանձ է կտրում։

— Մարդդ քանի՞ լեզու գիտի, Նոյեմիկ հանում,— շշուկով հարցնում է նրան Մարանոս խաթունը։

— Հինգ գիտի, ուան էլ վերեն,— հանպատրաստից պատասխանում է Նոյեմիկ հանումը։

Սկսում են պարերը։

— Վազգանուշ, մի հատ «Ֆոռկա» խաղա...

— Ես խաղալ չեմ գիտե, —ասում է Վազգանուշը այնպիսի տոնով, որը մոտավորապես նշանակում է՝ մի անգամ էլ ասեք, կպարեմ։

Խնդիրը երկրորդվում է։

— Մի՛ տրտրվե... էլի խաղա...

Վազգանուշը շարժվում է տեղից, Թաշկինակը բռնում է ձեռքին, պատրաստակամ կանգնում։

Սկսում է «Ֆոռկա»-ն։ Սա մի մոնոտոն պար է, որը կատարվում է մանր քայլերով եռ-առաջ գնալ գալու մեջ...

— Աղջիկ չի, կարսալ է, կարսալ...

«Ֆոռկա՛, Ֆոռկա՛ մա՛ղո՛ւրկա՛,
Էսար մեր տո՛ն խա՛ռանի՛ս կա՛,
Խա՛ռանի՛ս կա՛նե՛մ տե՛ղ չի՛կա՛,
Կ՚ոլո՛ռ փե՛սի՛ն բեղ չկա՛...»։

Սկսվում է կլոր պարը։ Արշակը կանգնում է «գյոնդ-բաշիս» նա մի-մի տող երգում է, իսկ մյուսները կրկնում են.

«Գնեկ Տիգրան ափալ-Բափալ,
խանիման-ջանիման,
Գնաց խառամ Խաչի փոխան,
խանամիր-ջանամիր...»։

Գնրձակ Սենոն, որը սովորություն չունի սեփական ծխախոտ պահելու, դառնում է Արշակին, որը քրտինք սրբելով է զբաղված.

— Տղա Արշակ...

— Ի՞նչ է...

— Լա՞վ ես...

— Լա՛վ...

— Լավ-լա՞վ ես...

— Լա՞վ...

Այս բոնադրոսիկ նախաբանից հետո Սենոն ուզում է անցնել բուն խնդրին, այսինքն՝ ուզում է ասել.

— Մե թութունդ տա՛ս...

Բայց այդ բոպեին Արշակի ուշադրությունը գրավում է Լևոն աղան, որը լալիս է, առամներն է կրճտացնում և միևնույն ժամանակ օդիով «հանգստացնում է» իրեն...

— Ի՞նչ ի էլի, Լևոն աղա, ի՞նչ կա...

Հարցնում է Արշակը և մշուշված ուղեղով հիշում է...

. . . . . .

Ահա Լևոնը՝ Համբարձում աղայի տղան, ձի հեծնող, Շահրատու գինին խմող, ընկերոջ համար հոգի տվող, չեզոքհնչակյան, ֆեսը միշտ ականջի վրա, ուրախ, զվարթ, քորդոնով և բռավաթով, նախշուն լեզվով Լևոնը, որի համար վանեցի և՛ մայրերը, և՛ աղջիկները հավասար անձկությամբ «ախ» էին անում, Լևոնը, երիտասարդ Լևոնը, որին արդեն սկսել էին պարոն Լևոն կանչել...

96 թվականի դեպքերին Լևոնի հայրը, մայրը և եղբայրը գոհ են գնում հայ-թուրքական կռիվներին, այրում են նրանց տունը ունեցած-չունեցածով, իսկ Լևոնը փախստական է դառնում։ Կոտորածից հետո Լևոնը իրեն տալիս է հարբեցողության, շրջում է անտուն, իսկ գիշերները անց է կացնում կողինոներում, ուր և գիշերում է։ Լևոնը ձեռք է քաշում կյանքից, Լևոնը ծերանում է օր-օրին և «պարոն Լևոն»-ից վերածվում է «Դալի Դուման Լևոն»-ի։

Բայց ահա Լևոնին շրջապատում են նրա նախկին ընկերները, վերցնում են իրենց հովանավորության տակ և գրավում են նրան հասարակական ձեռնարկությունների մեջ։ Այնտեղ, ուր մի կարևոր գործ, վտանգավոր ձեռնարկություն, հատուկ հանձնարարություն, այնտեղ է Լևոնը։ «Դալի Դուման Լևոն»-ը դառնում է «Քաշախ Լևոն»։ Գիշերները ձի է նստում, անցնում է գյուղից գյուղ, կատարում է, ինչ հրամայում են, և ամեն տեղ ասում.

— Ես իմ ձեռներով Սիփանա ու Մասիս սարի վերին բայրաղ պիտի տնկեմ, ազատության բայրաղ, նոր մեռնեմ։

Մեր է հիմա Լևոն աղան, 60-ի մոտ, տեսնես ինչու է լա-

լիս, մի շուն ունի միայն նա, անունը Համիդ է դրել, նա էլ կալկանձում է բակում։

— Լևոն աղա, ինչի՞ կուլաս...

— Հեշ, բալամ, տառեխի հո՛ան առի, սիրտս պլավ...

— Ջանըմ, էլածն էլած ի՞... մի թութունդ տո՛ւր...

Դերձակ Սենոն էր։

Հավարույթը մոտենում է իր վախճանին։

Տղամարդիկ գրեթե հարբած են, կանայք բավարարված. վերջիններիը լրիվ ինֆորմացիա տվին փոխադարձաբար իրար ապրուստի և կապուստի մասին։ Հյուրերն սկսում են ցրվել։

Դռների մոտ երևանցի տղան Վազգանուշին ասում է.

— Դասվիդանիյե...

— Քո ասած թող էլնի...

Լուսինը դուրս է եկել Նորքի բարդիների հետևից։ Խաղաղ, երևանյան լիասիրտ գիշեր։ Լևոն աղան հենվել է Սենոյին և մատը պարզել է դեպի լուսին։

— Ես որ կասեմ, չեն հավատա... երկինք, գետին, վանա լուսնակ ճո՛շ էր, ճո՛շ... էս ի՞նչ լուսնակ ի... պատի՛կ, քաշալ...

— Թող սաղութին էլնի, Լևոն աղա, թող լուսնակ քիշմ պատիկ էլնի՞... թութունդ տո՛ւր...

45. ՏԻԿԻՆ, ԹՈՒՅԼ ՏԱԼԵՔ...

Թափանցիկ իրիկունը իջնում է Թբիլիսի փողոցի և մեր որբանոցի վրա։ Ես կանգնել եմ պատշգամբի վրա և նայում եմ հեռու Որբերից շատերը խաղում են որբանոցի բակում, ուրիշները վիճում են օդի ճնշման մասին, Մնացականը, թվաբանության գիրքը ձեռքին, ննջարան է մտնում։

— Տիկին, թույլ տվեք ինձ Թիֆլիս գնալ։

— Ինչո՞ւ, Գուրգեն...

— Մորս մոտ։

— Հատը ժամանակ է...

— Լինի։

— Դժվարություններ...

— Լինի։

46. ՎԵՐՋԻՆ ԵՐԵԿՈՆ

Վաղը մեկնելու եմ, իսկ այսօր որբանոցային երեկույթ է։

Մեծ ննջարանի մահճակալները դուրս են հանված, թախտերից սարքված է բեմ, ադեյաներից և սպիտակ սավաններից՝ վարագույրներ, բոլորն իրար են խառնվել, կանչում են, հրամայում, կարգավորում, կարգադրում։

Ժամը 8-ին գալիս են հյուրերը՝ որբեր մյուս որբանոցներից, տղաներ և աղջիկներ, գալիս են և կարմիր վերարկուներն առանձին շուքով, անդ են բռնում առաջին շարքում և սկսում են քչփչալ։

Բացվում է վարագույրը, բեմի վրա կանգնել է «բառաձայն» երգչախումբը. բառաձայն այն չափով, ինչ չափով որ հնարավոր է խալին առաջին ձայն համարել, իսկ Գևորգին՝ բաս։

Երեկույթը բացվում է «Մեր հայրենիք»-ով։

Հետո հանդես է գալիս Համլոն։ Նա բեմով, դահլիճով, որբանոցով և աշխարհով մեկ ճչում է.

«Ափ մը մոխիր, հայրենի տուն,
Որսիս վրա ցանկաս»...

Որքան նա բարձր է ճչում, այնքան նրա արտասանությունը համարվում է հաջող և արտառուչ։

Հետո Պատոը գալիս է առաջ, երկրորդ արտասանությամբ։

Օտար երկինք (նա մատներով, հնար եղածին չափ ցույց է տալիս պատուհանից դուրս, երկինքը)։

Օտա՛ր արև (այստեղ նա մի բոպե շփոթվում է, ի՞նչը ցույց տալ արևի փոխարեն, նա ճարահատյալ մատը տնկում է դեպի առաստաղը և ցույց է տալիս էլեկտրական լամպը)։

Ու չողում եմ գլխիս վերև (սա հեշտ է, նա ցուցամատը դնում է ուղիղ գլխի վրա)։

Չորրորդ համարը դուետ է. երգում են երկու հոգով, նախ՝ առանձին-առանձին, հետո՝ միասին.

Ջով գիշեր էր,
Պարզ գիշեր էր,

Սիրայնին շատ ասողներ,
Գիշեր ցավ էր,
Գիշեր մեղմ էր,
Սինարեի դույզ աչեր...

Հետո գալիս է «Չորս եղանակները»։

Կանգնում են չորս հոգի բեմի վրա,— Գարուն, Ամառ, Աշուն, Ձմեռ,— և նրանցից ամեն մեկն իր բարեմասնություններն է վեր հանում. Գարունը՝ իր ծաղիկները, Ամառը՝ իր մրգերը, Աշունը՝ իր շտեմարաններն ու ամբարները, իսկ Ձմեռը՝ իր հանգիստն ու վայելքները։

Ամենադժվար համարներից մեկը պատկեր-արտասանություն «Ուխտագնացություն»-ն էր։

Մելքոնը փորող տալով մտնում է բեմի թախտերի տակ, բեմի վրա գնում են մի կոճղ, Հայերը նստում է նրա վրա, գլուխը ձեռների մեջ, և բացվում է վարագույրը։

Ոտքի է կանգնում Հայերը, մազերը գզգզում է, բաց է անում բլուզի և շապիկի օձիքներն ու սկսում է տնայնագործական տրագիզմով։

«Սև մոռացության ամոթը ճակտիս. անհագ վրեժի զայրույթը կրծքիս, սար ու ձոր անցած ուխտի եմ եկել... (Նա ձայնը չգիտես ինչու հանկարծ բարձրացնում է) և մեկիկ-մեկիկ ես կհամբուրեմ սուրբ շիրիմները նահատակների...»։

Երկար նա նկարագրում է իր վիշտն ու նահատակների հերոսական մահը, կոչ է անում նրանց՝ թաղված նահատակներին, խոսել, արտահայտվել և վերջապես հասնում է իր նպատակին. Մելքոնը թախտի տակից սկսում է խուլ ձայնով խոսել, իսկ Հայերը լուռ լսում է՝ կանոնավոր ճշտապահությամբ երկու քոպեն մի անգամ ցնցվելով։

«Լո՛ւռ կաց, ուխտավոր, լո՛ւռ, մի՛ խռովի տխուր հանգիստը իմ ոսկորների...»։

. . . . . .

. . . . . .

. . . . . .

Վերջին երեկոն։

Երեկույթը վերջացավ, գնացին բոլորը, ես Սիրարփուն ասի, որ Թիֆլիս եմ գնալու, իսկ նա հարցրեց.

— Թիֆլիսում հայե՞րն են շատ, թե՞ ռուսները...

Եվ ուրիշ ոչինչ, ես կարող եմ գնալ և կարող եմ մնալ։ այդ նրա համար միևնույն է...

Վերջին երեկոն...

47. ԱՆԵՐԵՆԱԳԻՐ

Տարիներ են անցել։

Հոսում է կյանքը, այսօր էլ մանուկներ կան, միլիոնավոր մանուկներ, պատանիներ են հասնում այսօր էլ ու երիտասարդ զույգեր որոնում են մեկմեկու՝ նոր մանուկներ հաստատելու համար։

Հոսում է կյանքը, և անկրկնելի է նրանցից ամեն մեկը...

...Երբ ինձ առաջնորդեցին մորս մոտ, ես մտածում էի այն մասին, թե կը ճանաչե՞նք մենք իրար։

Քուռ գետի ափին, քաղաքների միությանն հիվանդանոցի պատշգամբում, դեպի ինձ է վազում փոքրիկ մի կին։

Այդ փոքրիկ կինը մայրս է։

Ամաչկոտ կերպով սենյակի դռան ճեղքից երևում են երկու մանկական գլուխներ։ Նրանք ժպտում են։

Սուրենն է և Խորենը։

Մայրս կապել է ծաղկազարդ մի գոգնոց. այդ գոգնոցը ծանոթ է ինձ։

Ես նրան հարցնում եմ։

— Վանից պիրածն է... մի՞ռդ է...

Միտս է, մայրիկ, ահա ես նայում եմ այդ գոգնոցի ծաղիկներին և բարակ մի հով շոյում է դեմքս։

Ի՞նչ է, Վարագո՞ւմն եմ ես։

Ահա երկնքի և ծովի կապույտը, ահա Այգեստանի կանաչը, ահա արևի դեղինն ու վերջալույսների և արշալույսների վիթխարի կարմիրը։

Այդ գոգնոցը։

Ես նրան տեսնում եմ տասներեք ձեռքին. նա փռում է արևի տակ այդ գոգնոցը և տխրում է։

Տեսնես ինչո՞ւ տխրեց նա...

Այդ գոգնոցը։

Ահա փչում է զարհուրելի մի հողմ. ես այդ գոգնոցը տեսա նաև գաղթի ճանապարհին, երբ տատս...

— Լավ պահիր այդ գոգնոցը, մա՛... մի՛ գործածիր։

— Ուրվելն ի՞նչ արիր,— հարցնում է խորենը։

— Տվի հացով։

— «Մեղրագե՞տ»...

— Թողի ճանապարհին։

Բոլո՛ր մեղրագետները, խորեն, մնացին ճանապարհին։

— Մեծացիր ես,— ասում է մայրս ուրախ-ուրախ։

— Այո, մայրիկ, վերջացավ պատանեկությունը,— պատասխանում եմ ես և տխրում եմ։

Պատշգամբի տակից հոսում է գետը ու պատմում է կարծես հեռացած օրերի, մարած հուրերի մասին, դեմքերի մասին օտար և հարազատ, դեպքերի մասին ուրախ ու տխուր, ծաղիկների մասին և թռչունների, աստղերի մասին և արտույտների, հասած և հասնող մրգերի մասին, երգերի մասին, երկրի՞ մասին։

— Ա-յո՛, մայրիկ, պատանեկությունը վերջացավ։

1929—1930